



12

12



Հ. ԳՐՈՎՏԻՈՍԻ


ՃԸՄԱՐՏՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

'Ւ ԼԱՏԻՆԷ 'Ւ ՀԱՅ ԱԾ

**Մեքրովդ Դաւթեան Թաղադեանց Վարդեցի
Սարկաւազ Սրբոյ Էջմիածնի**

**Քի հայրապետութեան ՏՆ ՏՆ ԵՓՐԵՄՈՅ Աստուածապապիւ
Վախճանի հոսի ան Հայոց :**



A / 190

Կ Ե Լ Կ Ե Թ Ը

'Ւ ԳՈՐԾԱՏՈՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ

ՃԵՄԱՐՏՆԻ

BISHOP'S COLLEGE

1829





100-80000-2

100-80000-2

100-80000-2

Department of Health
Department of Health
Department of Health
Department of Health
Department of Health

100-80000-2

100-80000-2

100-80000-2

100-80000-2



ԱՅԾԱՌԱՓԱՅԼ ԱՍՊԵՏԱՑՆ

ՍԵՔԱՅ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ՍԱՄԵԱՆ

ՄՏԵՐԻՄ ՍԻՐՈՅ ՆՈՒԷՐ

Եթէ պատուիրէ մեզ Պատգամ Եաւետենա.
անին տալ, որում հարկ՝ զհարկն. և որում պա-
տիւ՝ զպատիւ, ումյաւէտ ապա ներեցայց նուիրել
զերեխայրիս գրաւորական վաստակոցս զայս, քան
եթէ Տէրութեան Ձերոյ՝ մերոյ դարուս Սե-
կնասաց: Որոց երախտապարտ խոստովանի աղա-
րև ոչ միայն անձն գրագէտ՝ այլ և նոյն իսկ գրա-
խոտութիւն քաջալերեալ հանապազորդ արդեամբ
նից և գործոց Ձերոց:

Ընկալարուք ուրեմն Պայծառափայլ Տեարք,
նորկ դուզնաքեայ իմոցս քրտանց, իբրև զխայծ
աղահաս զի Ձէնջն առ իս Սիրոյ և Բարերարու-

Թեան և յինէն առ Ձեզ երախտագիտութեան
և պատկառանաց : Ընդ որում եթէ ընդունելի՝ և
զանձն նուիրական , որ փառս իւր համարի մնալ
մշտնջենաւոր հաւատարմութեամբ :

Պայծառափայլ Տէրութեան Ձերոյ

Խոնարհ Ծառայ

Մէսրոպ Դասիէան Թաղխարէանց :



Օրէն է ըստ անորոց յեւ չար գէշոյ զԸնդհանուր օրէնսդրոսքս
հրապարակել զնոյն է լսելն հոգաբարձոց . ըստ որում օրէն ոչ յայտ-
նեալ ոչ չարէ պատել զարդարս , չամ պատժել զչարս : Աստե
Վերջնապէս : համարման իրէնու-Յեանս օրէնսդիր , յեւ Վճռելոյն
զ՛եալ այնճ որ հասարայ՝ եւ զ՛որոսս անհասարկն , այն էնչ
հանդերձեալ էր մէկնչ յաշխարհէ յաճոս մեծութեանն Այ ըս-
գասար էր՛նչեւ եւ Կահանայ յաւերպեան ը չար գէն Սելիքեպէկէ ,
Խորց սերելէ Աշխարհոց զէրջնն հարկէ զայս ասանդեաց :
Գնացէ՛ք , աշխիւրբեցէ՛ք զամ հելմանոսս , մարտեցէ՛ք զնն յանուսն
հօր , եւ որդւոց , եւ հոգւոյն սքց . ուսուցէ՛ք նոց պահել զամ զոր
ենչ պարտերելցէ յեւ : Որոց ըկպէսն՝ ՚ի մեղոցս սմաց էրեանչոց
էլ Բարբառ ընդ ամ էր՛իւր , եւ խօսք մնլն ՚ի ծագս Ծի՛ յաջողել
զորսք նշանաց եւ արուեստից . սախոյն ոչ ուրէ՛ք էրէկէ պահա-
սելոյն Հարկոյ՛ք խնդրել զնշանս , եւ Հալմանոս՛ք զԻմաստաբանք :

Յեւ նոց Բայուսք ասարածաբանեցին . այլ զե որու էր աս-
նունն Վիտի խալելոյ յարուցանել մեռեալս ՚ի յեռննոց՝ զլիքեալն
յարանելլեաց զեւրեանց զարգասպետութ շողոտորնեցին գերապանծ
զէրբառութս Քի՛խոյ ամ Իմաստաբանց : Բայց եկե ու զդեղոսք
Բանին , այնքան լան՛ր պարսպաբեցին զայս Քի՛խոյ Բալմոսք
Հախիլի՛ն նախարաց , համո՛ճ , խննն անապետութ եւ խորին նա-
խապաշարութ Երանն իւրեանց , մնլ ոչ մոյն յօգարայն՝ այլ եւ ՚ի
սերելեաց անխո՛ճ աննշարելլէ ըտղու զնն : Անպէս արարեալ նոց
զանհարա՛ման հասաստիւս . եւ զքառաս հանգամանաց անչին , եւ քե-
ղոց եւ Ծի՛կէն , սրայան ՚ի ընես սեւեղ . եւ զէրացուցեալ զքե-
սանն յնն խալոյն , ինչանաչ ասելոյ ըկ հարկին է գոյն զար-
դին , (ոճ որ իւրաքան զիննչանայ եւ դպրոցախանայ մանգա-
ճայն .) ըջնն զնն գրածոց իւրեանց անԻմաստլէ մէկնութ Ար-
ճրութեան չամ Որոսլաց սահարլ . յորոց ոչ ինչեանք հասնացան
ենչ , եւ ոչ այլոց հասնացուցին : Իսկ որք յաւեր քոյն էղեն
գեապի Քըճարութեանն Բորբոսեցան զննչ յաւեր զէնչեղեցի Է

էկէղեցի, և զանդամս լէ անդամս գրգռել, քան որպարանել զնա
և զհաւասան խոսարովանեալ 'ի նմէ՝ յերեսաց օրար լընովաց :

Իսկ ո՞՞՞ իմաստասէր Աճաբանութեան, իմ անձամբ իմաս-
տասիրութեան իմոյն Գրովարտութի, (իսկ և աշատելով, իմ
ընդհանրապէս արտաշար արտաշարութեան (արտաշարութեան)) այնքան ան-
բար, աբ, և անխառն է յարարայ անարի ինքնապարտութեան՝ մեզ
համարել իմ զստ գրեալ արտաշար հոգաւովն Վերջարտութի քան հո-
գաւովն Գրովարտութի : Ոչ անցանէ անար քան զհեռաւոր հաստա-
պիտ, և 'ի բնականաց անարի յաւելար զտարանան ընարեւոր քրք քա-
ւեն արարարեւ 'ի հաստանութի ածել նաև Չոյնիլեան մասս 'ի մեզ
ան արգաց : Ոչ զհեռի ընարեւել համարանան էղբօրն, ոչ գրգռել
զնն 'ի իմաստաբէլ զերեսար հաշտաւովն խաղաղութեան Աւարարա-
նի Որդարոյն աբ : աշ յամ զօրութի ճանարի արաւս քսարար Ախո-
յեան քսարարան հասարարոյն ընարեւել քսարարաց աշարաց և աշա-
րարն Եւոյ : Գրել Լի Ալեքիէնոս մեծանունն Գաղղեացի .
յեպ Գրովարտութի Բիճար յօյարեցան գրել յճիտ ճշմարտութեան
քսարարն հասարար, ճանարանք անարանն : Անգղեացոց և Գաղ-
ղեացոց յարարարեալս 'ի նոյն օրինակաւ աբ : յարս է՝ զի համա-
յայն ընթանան . և է՝ զի բարտաւ քսարար ճարարարար արանն :
Սիկն զի արարանն գրարի այսր հարեար և անարար էղանակի
գրութի ո՞՞՞ և զ քան զի յարանան : Այս գրար գրովանի սեգար-
արան ճանարարի արար 'ի ճարտա իմ ճամանակի ոչ մայն 'ի հրահան-
գրս Համարարանաց ան լրարարար աշարոյն Եւրարար, աշ և
'ի բարար ճարարեալ լարար Եւն, մեզ անցանել անարարան նաև
յԱրարարոյն ո՞՞՞ : ինչ Տի Գրարելիլոս Հարա Սիլիլարարան
Աճարանութի և Արարարարի զիկն զարարարարար արարարարար
ընար հար գրարութի լարով իրել իմարել 'ի խար իմարարար-
արաննն արար և անարարանն գրարութի 'ի վեր քան զան արա-
րարարարիցն յայս գրար : Չոր և Ես յընթաց արարարութի
իմոյ հեար զհեար արարարանեալ հեարեցի 'ի մերն լարար : Իբրե-
յանն էլ արարարանութի ըն յարարարար Տի նա ինն զարարարար մեր
Սիլիլեանն զնոյն հանարար յարարար և արարարանարար արարարար

յարբան Գրարանաց Եպիսկոպոս Ըճէմարանէս, որ Բաբան Վճարեցին
 արդարեւ զսոյն ՚ի Տարարանէ արեղւոյն յօգոսար համօրէն Ազգէս :
 Հեղինակն բաժանէ զԲաբան եւր ՚ի Վեց գերս : յԱռաջ-
 նոսն հասարակ Բնական շոտարեւս զգոյն-ի Այ ՚ի պէտպս սար-
 րագոս-Բեանց նր . յերկր-ն յարեալէս զհասարան սոյն . յերկր-մ
 զարուգոս-ի գրոց հին և նոր Արարարանաց . ՚ի շրջարդոսն Ղե
 զանարես հեթանոսական պաշտամանց . ՚ի հինգերկր-ն զհարանս
 Հրէից . և ՚ի Վեցերկր-ն զաղանդն Սահիպի : Չոյս ամ
 զապս ՚ի Վեց Բերէ ՚ի գրոց անարե Հարէից և Հաթանոսաց Բան-
 փամայն , ուսար և շիտ գեարդիտ գողեալ ՚ի հնոս-նոսանէն պար-
 ճաբանից , Բանասարեղծից , և Բնասարարաց , զորս ոչ աւնոս սա
 զանն ՚ի նոյնն իսկ Բարբառոս արգաց : Որոս և Էս անշոտար հե-
 րանեալ ոչ Բայն զի անէորոսար պահեցի զնն , այլ և յաւելի նոր
 և Ճոխ ծանօթոս-ն ՚ի գրոց յաւելածայեղարանէ հարանցն Տերոց , ՚ի
 Րաբոնեացն Հրէից , և Արաբաց զլանցարեալն ՚ի Հեղինա-
 ինս : Յընարե ընարանն ՚ի նոսա անվար պահեցի զԲնագերս ,
 զարգեալ յանդիման և զհայ Րարգմանոս-ն : Սի զի նոյնն իսկ
 զինոս իսկից ՚ի հիմանց զնոցան Տալարոս-ն . և Բան զի լեզ-
 րասարեարաց Ազգէս ընթեոսից արարանոս-ն աշտան Բարից և Բա-
 նից Րարգմանոս-ի : Յայս ամ ծանօթարանոս-Բեանց Հեղինակն
 և Լի Ալիբեիոս . Էս զինն յիմ անոսն որոշեցի :

Հանդերձեալ էի գանգարել իմ լոսնելոյ բաւանն գրեանս
 Անեհարան Հարց Տերոց ասարարելս ծանօթարանոս-ից Բնոց . Բայց
 լիմ Տարաց յանոս-նն ոչ պարասխանէ Էրբէի ընդարձակ Տարան ար-
 զարուսեան հարկեցայ ՚ի Վերջոյ իսպիւր ոչ Բայն զիմ հասարան-
 նոս , այլ նաև զԲիւս ՚ի Բնագրաց անարե ծանօթարան-Բեանց Հեղի-
 նակն . (Բեկն զՐարգմանոս-ն նոյնն անխախտ պահեցի :) Խո-
 հեմոս-ի իմ Վարդոցեալ լի Էրարոյն լաթել զիս պարսոսմաննն +
 որպէս ասէ Առաջն հասարակեալ :

Բայց արդ՝ էցեմ Բե անճահանայր յոյս էմ , հեթանոս սոյն
 արանելոլ զհասարակաց ընդոսնելոս-ի և յօգոսար Ազգէս զա-
 րալին նպարակ Բնոսն արարանց . ար որ և հասանելայ էմ , զի

Կրթական և Ազգին՝ արքունի կենաց ևն Չղճարեա Ազգասերէ :
 Էլմճ , քայր ինչ ո՛ւ լ արդեօս : Էթէ սերելի Աշակերտա՛նէյս իճ
 հրչապս Արարապետն Անտոնյն , զայս զԷթնամեան Ռախա ա-
 նաց Էղջօրն փեսեալ զԷրէ , գրէէին 'ի ժամս պարապոյ էրեանց
 և սփեղ յԷրծանուք հեփե-Էդոացանէին հչոր հասարեաց սրա
 ու Քայն զչորսար գրէլ ի Էրեանց . այլ և զանարգել Ռախն : և
 նախանջար յնէլով լաւագունէն Շնորհաց՝ Բոսն Էարանէ-
 ին զարօշակէ Տօրն իմաստից զԷղր-ագեալուէն , զԷրէր-րդ նա-
 փաէէ իմոյն աշխարանաց : Եւ համ , լինէցէր ու հիճճ . Էթէ
 նորաքունէ ՃԷմարան : նորոգ վրէլոյն Ալալապայ նմանէլով
 արիւտալոյ Համալարանայն Եւրոպայէ . ընդ այլոց ի ԴճԳանից
 ընդ գրէէին և զայս ԷԷրև Դպրոցահան Աճաբանուի 'ի հլահան-
 գըս Էւրոց համբալաց . որ է Էրորդ նպափէ իմոսն Էրէանց :

Ի քնիս Բանն , աղալեճ զՅէզ Ը նըլըցողոյ . զէ ԷԷԷ Բալի
 ինչ գփոյ 'ի սմճ զայն անճանճան Երախաբեանց Վարճուցեալ աը-
 փոռ Տն Աբրահամու Վարդապետ Բէրախանցոյ Տոպ-
 բագոյն Երախանէն Հնորոց Կի՛ որ յանճն արար . և Բարճը
 Արեւան Տն Ռեյնիալոյ Հնէր յա-է՛ այնչապաէ հանգու-
 ցեալ Եպիստէն Անգղիացոց Աալիս Ռայ՝ որ ընչ լանն զիս գեր-
 մարդային Էւրով գրուի * Էղէալ Պապաճաւ լաւասարուի իա-
 արեալ Տոպոս և փք անքերանն Պանդխալանն 'ի հեռասոր
 օտարութեան ասար , գոհացարուս զԱյ լննոցս : Որոց 'ի շնորհ
 առաջալացս և այլ Ռարգմանուիս համբ Էրեցին զՀաց
 լնդուն : Իսէ ԷԷԷ Բէրուիս ինչ զայն իմոսն փալով աը-
 ճարութեան և ՃԷմարանայն պարաբեաց , (Խ որոմ առ Բիճս
 ցրուեալն փխարանան առ Ռն) Տարապետապէս ներուին արարէս :

* Չոցանէ լնովին իօսեցաց 'ի " Պաղէսաբն " ասացեալ
 Բանապեղծուի Տն Ռեյնիալոյ . զոր 'ի հայ ածեալ յոսամճ
 հոսպ ընդ հոսպ փապարուի 'ի լոյս ընծայել :

Վ Ա Ր Ք Հ Ո Ւ Ո Ն Ի

Հողոն Գրովտիոս, իշխան գրագիտաց իւրումն ժամանակի. և Աստղ բւեռական՝ առաջնորդ որոց առ յապայս ընդ ծովս իմաստութեան քաջահետ նաւարկեցին՝ ծնաւ յամին 1583, յաւուր Տօնի սթյ Ջատկին, ՚ի Դելփոքաղաքի ստորին Գերմանիոյ. յազնուական սերնդոցն Յովհաննու Դի Գրովտայ բղեշխին Դելփոքայ : Որ ՚ի տղայական հասակի առաքեալ ՚ի Հակուեան Համալսարանն՝ մատուցաւ յաշակերտութի Ուլդենբարդայ երկցու Արմինեան աղանդաւորաց, և լցաւ լրացաւ ամենալաւ կրթութի ՚ի հրահանգս ներքին և արտաքին մակացուէց առ հասարակ. մինչ ՚ի մանկութեան զծերս, և ՚ի կատարելութե իւրում զաննիւթ ոգիս երկնից անգամ զարմացուցանել :

1598 Հասարակապետութեն Հոլանդիոյ արձակեց զՅուստին Նասադեան զկոմս, և զմեծ թոշակաւ ուն զԲարնիվելտ հրեշտակութի ՚ի Գաղղիա առ Հենրիկոս չորրորդ, ընդ որս չոգաւ և Գրովտիոս. ուր Բուշանվալ, որ ամօք ինչ յառաջ եկեալ հրեշտակութեամբ ՚ի Հոլանդիա, և գիտէր զարգ և զանուն Գրովտիոսի՝ եհան զնա յերես Արքայի, որ ետ նմա ՚ի պարգև զպատկեր մեծափառութեան իւրոյ և շղթայ ոսկեղէն կրել ՚ի պարանոցի : Ջառաջին փորձ գրագիտութեան իւրոյ ՚ի տիպ եհան աստանօր զՄարտիաղեան Բանաստեղծութեան իւրով ծանօթաբանութեամբ : Արար և ճառ Հարսանեաց ՚ի վերայ Հենրիկոսի չորրորդի և Մարիամայ թագուհւոյ նորա : Եւ յետ տարւոյն դարձարարեալ ՚ի Գաղղիոյ քաջապանձ հանդիսացոյց զիւր մեծ օրէնագիտութի յատեան քաղաքին Դելփոքայ, և կացուցաւ վարդապետ օրինաց :

1603, Ջայսու ժամանակաւ վճարեալ Հոլանդա-

ցւոց զբազմամեան գործ պատերազմին Շ Սպանիա-
ցւոց, և յարձան ապագայ յիշատակաց դրոշմել կամե-
լով զարուի քաջուէց իւրեանց՝ խնդրեցին զայր քա-
ջադէտ յայն վճար, և յետ բաղմնատոյտ հոլովման
քուէից՝ ընտրեցին զպատանին Գրովտիոս, որ յանձն
էառ և կառարեաց զգովանին զայն Տարեգրուի,
որ միայն կարէր անմահացուցանել զիւր անուն:
Տպագրեց զՓինոմենայն Արետոսի, սրբագրելով
զՅունական խանգարումնս ՚ի տեղիս տեղիս: Արար
ոտանաւորս լցուցանել զպակասորդս Աիկերոնեան
գրուածոցն՝ կարի զուգածայն ոճոյ գերագու-
նին ՚ի Հռովմէացի ճարտասանս: Յօրինեաց և
զբանաստեղծուինն կոչեցեալ՝ Ագամ Արտաք-
սեալ: Քրիստոս չարչարեալ, Պատմուի Յովսեփայ
նահապետի Սոփոսփանիոս, որ ՚ի լեզուն Եգիպտ-
տացւոց նշանակէ Փրկիչ Տի: Ծով աղատեալ,
Ծով կապեալ, ծաղկաքաղբ: Ուղի եկեղեցական
խաղաղութեան, Պատմուի գլխաց, Ծանօթուիք ՚ի
վրձուստիանեան Օրինաց, Մեկնուի հին և նոր Վա-
կարանաց, Արտաքին և ներքին ծխից, արարողուէց,
վարդապետուէց, և կառավարուէց Եկեղեցւոյ պատ-
մուի, Սկզբնաւորուի ազգացն Ամբրիկոյ, Ներածուի
օրինացն Հոլանդիոյ, ևս և գերապանձն այն սր՝
գիրք, որ յաղագս իրաւանց Պատերազմի և Խաղա-
ղութեան, այլովքն հանդերձ:

Ի յաջորդ ամին կարգեցաւ օրէնսգէտ համօրէն
Հոլանդիոյ, և ամուսնացաւ ընդ Մարիամու Ռիկու-
պերտայ դստեր բզեշխին Ա իրայ քաղաքի: Յայս
վայր անդբաղ կեանք Գրովտիոսի եղեն գինք այնց
բազմաքիրտն՝ բայց և անգիւտ աշխատանաց, որք
ետուն անմահուի իւր՝ և լոյս կարդալեաց իւրեանց:
Բայց աստի և անդր՝ հողմակոծեալ նաւակի նման ծը-

փաց անդադար յերեսս արուծախ պատահարաց Ծիս: Ընդ այն ժամանակս Արմինոս այր բանխբուն՝ հրատարակեաց զիւր կարծիս յաղագս նախասահմանուն և սկզբնական մեղաց, գլխովին հակառակ Վարվինեան մուրումթեանց, և երկփեղկեաց զխուժան միաբանեալ սահմանացն ՚ի հերձիս կարծեաց: Յամին 1610 Ուլտենկեբարդ կամակցուք Գրովտիոսի հրատարակեաց զԱրմինեան վարդապետութիւնս և յուզեաց զժողովուրդն ՚ի ծուփս անողոքելի խոռովումթեանց չէ համօրէն Հողանդխայ:

Գրովտիոս առաքեցաւ դեսպանուք Անդղիայ, և եգիտ շնորհս առաջի Յակոբայ արքայի և աւագանւոյ նր: Դարձ արարեալ անտի միանայ չէ բերնեվելտայ և նմ կուսակցացն, առնէ յայտնի հրատարակումն Արմինեան հերձեց: Մարիկէ իշխան Նասադայ ՚ի բարկուն շարժեցաւ. Ամստերդամ, զօրաւորագոյնն յայնժամ ՚ի մեջ միաբանեալ սահմանաց խոտեաց իբրև զանպիտան զնոցին զայս փորձ և սպառնայր մարտիւ պատուհասել զնն: Երկօրին կողմանքն ևս դեսպանս արձակեն անգր, և Գրովտիոս ՚ի կողմանէ յիւրայոց թէ և բազումս ջանայ, այլ չկարէ յանկուցանել յինքն զժողով տեղոյն: Յետ դարձի նորա Արմինեանք զօրս ժողովեն չէ կեղծեօք անձնապահ մարտկաց, զոր խնացեալ Սպարապետի տիրունն խաղայ ՚ի վր, ցրուէ զմիաբանեալն, և կալեալ զգլխաւորանն ՚ի նոցանէ, ընդ որս և զԳրովտիոս փակէ ՚ի բանտի:

1619 Ժողով աւագանւոյն յատեան հանէ զբանդարկեալն, զԲերնիվելտ ՚ի մահ դատապարտէ, և զԳրովտիոս (որ ոչ իւրք գլուխ խոնարհեաց նոցա կամ զժողուէ ինդրեաց զիւրոյ վնասուն, ի որում ոչ ինչ մեղուցեալ) կրկին արգել ՚ի բանտի, մի զոք բնաց ՚ի

կնօջէն թողլով այց ելանել նմա: Եկաց անդ ՚ի Լու-
 վէստինայ բանտին աղատան ձնեայ վեհուք տարի մի
 և ամիսս ութն, ուր թող զայլ և այլ գրեան, արար և
 զգերապանձ զայս ճշմարտութի քնական հաւատոյ:
 յօրինեալ նախ ՚ի լեզու գերմանացի ոտանաւոր չափ-
 մամբ. ուստի թարգմանեաց և ՚ի լատին բարբառ:
 Մուխ վան Հալ մի ՚ի ծանուցեալ թշնամեաց նր և
 դատապարտչացն ազդ առնէ հրամանատարի տէ-
 րուէն Հոլանդիոյ թէ հանդերձեալ էր Գրովտիոս
 ճողոպրել զինքն ՚ի բանտէ անտի: Իսկոյն խնդրակք
 առաքեցան որոնել զիրսն և իբրև ոչ ինչ նշան յաս-
 ցելոցն գտին ՚ի նմա, սուաւել ևս անհոգացան յան-
 ձինս իւրեանց: Իսկ Մարիամ կին նր, որ թողացու-
 ցեալն էր գրէնս տանել առն ՚ի բանտ անդր, ՚ի գործ-
 եղ զիւր բովանդակ ճարտարուի և Տարեաց զառն
 իւրոյ փրկուի: Տեսեալ նորա զպահս բանտի կարի
 յանդգոյշս, համբաւեաց թէ հիւանդացեալ էր
 Գրովտիոս հիւանդութեմծ. չոգաւ առ տիկին Սպա-
 րապետին Հիւսդինայ, հրաման էաւ ՚ի նմանէ հա-
 նել զարկըն ՚ի բանտէ յորում չեն ինչ առաւել ստէ-
 քան գրեան, տառապեցուցիչ կենաց ամուսնոյ խնոյ.
 դարձ արարել անտի փակեց զայր իւր յարկըն գրոց, և
 բարձեալ երկու զօրականօք հան անտի: Մին ՚ի զօրա-
 կանացն, որ շալակել էր զարկըն, տեսել զի ծանրա-
 գոյն էր քան զսովորականն, ասաց, «բարեւ Արիւնեան
 ոչ է յարիեղ ասո»: Իսկ կին Գրովտիոսի կարել լրջուք
 պատասխանեաց՝ այժ էն ՚ի դժս գրեանս Արիւնեանց: Եւ
 այսպէս ածաւ Գրովտիոս յԱնդուերտ, և գրեալ ան-
 տի զանմեղութի անձին իւրոյ առ հրամանատար տէ-
 րութեանն, չոգաւ ՚ի Գաղղիա, և ընկալաւ յար-
 քայէ և աւագանւոյ տեղւոյն պատուով և մեծարա-
 նօք: Իսկ կին նորա՝ որ ՚ի յայտ գալ նենդութեանն

փոխանակելէր արգելանաց առն իւրոյ խստիւ կապու-
նաց, գրեաց թուղթ աղերսանաց յատեան Հոլան-
դիոյ և գնեալ զագատուի իւր գիտուի իւրով՝ չոգաւ-
ղկնի առն ՚ի Գաղղիայ : Յետ կաւոյն անդ Գրովտի-
ոսի տարի մի ողջոյն, թանկացան նմա ոռճիկքն զոր
տայր Գաղղիայ, և ինքն անձկայր գառնալ յՏ
Հայրենեաց : վնյ յամին 1627 . առաքեց զկին իւր
անդր լրտեսել զիրսն, և ինքն հետեւեաց նմա յամին
1631 : Իշխանուի Հոլանդիոյ խնդրակա արձակեաց
ունիլ զնա . իսկ նա խոյս ետ անտի յՌոտտերդամ, ՚ի
Դարտ, յԱմստերդամ, և ձմերեաց ՚ի Համբուրգ, մին-
չև եկն առ նա կին իւր ՚ի Չիլանդայ, մի միայն
միսիթարուի վշտացելոյն Գրովտիոսի . և ՚ի չարիս և
՚ի բարիս մտերիմ վիճակակից : Սպանիա, Պո-
լանդ, Ռինսամարք, և Դուքսն Հոլէստինոյ հրաւի-
րակ առաքեցին առ նա, և բարձ և պատիւ խոստա-
ցան, եթէ եկեսցէ առ նն : Այլ Գրովտիոսի յուսացել
զհաշտուի հալածչաց իւրոց և զկեալն վն հայրե-
նեաց, ոչ զիջաւ ՚ի նոցուն հրաւիրանս : Բայց և ան-
տուտ վրէպ գտեալ չոգաւ ՚ի Սուէտս . և ՚ի Կոս-
տավոսէ արքայէ նց առաքեցաւ գետպանու թեամբ
ի գաղղիա նորոգել զգաշն հաշտութե ՚ի միջի իւր-
եանց . զոր և կարի աչալուրջ խոհականութեամբ ՚ի
գլուխ հանեալ եկաց անդանօր ցմահ Կոստավեայ
և ապա ը ինդրոյ իւրում յետս կոչեցաւ ՚ի Սուեսիա :
Չև հասեալ ՚ի Ստակհոլմ, մինչ քրիստիանա զշնոյն
Սուետաց եկն յԱպսալայ յայցելուի նր : Գովեաց
զլաւ արարս նորա . ետ մեծահաց կոչունս, և երոյց
նմա ամ պարտուպատշաճ մեծարանս . Բայց տեսել
Գրովտիոսի թէ այն մեծ իւր ծառայուի սնտաօք
և եթ վարձատրիւր՝ խոովեցաւ յանձն իւր, և
խնդրեաց ելանել անտի : Իսկ թագուհին, որ պատ-

րաստէր նմա յայնժամ զարժանին սպասահարկուեց պարզեա, և չէր աւարտեալ դեռ ի կամաց իւրոց . ոչ զիջաւ ՚ի խնդիր նորա : Գրովտիոս յետ բազում աղերսարկուեց եւ անտի առանց հրամանաց : Լն եղեալ արքայուհւոյն զելիցն նր՝ առաքէ զդ իւանապետ իւր զկնի նորա ծանուցանել զիւր միանգամ ևս տեսուն նորուն զփափագ . և իբրև յանդիման եղև, պարզեաց նմ թագուհին , 13,000 , ոսկի դահեկանս , և արծաթի մետաղս . Շ որս և նաւ դիւսկորացի հանել զնա փառօք ՚ի Հայրենիս իւր : Չ և նաւեալ նորա փարսախս ինչ յարեաւ մըրիկ սաստիկ յյժ յյժ , և ալեկոծեաց զնան : Գրովտիոս փոքրիկ նաւակաւ եհաս ՚ի Պոստովկ յՕգոստ 17 , գլխովին կիսակենդան . և մեռաւ օգոստ 28 : Բացին բժիշկը զփորոտիս նորա , զոր և թաղեցին յեկեղեցւոյ ինձածնի ՚ի Պոստովկ : Իսկ մարմինն նորա տարաւ ՚ի Բելփոգ և ամփոփեցաւ առ հարս իւր : Սանգնեցաւ մահարձան նր , յոր փորագրեալ է այս յիւրմէն համետ արձանագիր :

Grotius hic Hugo est Batavum captivus et exul,
Legatus regni, Suecia magna, tui,

Գրովտիոս ասպ Հոգոն՝ գերէ ստեոր Պոստովեան ,

Ինէ, մեծըր Սոխա, արայոսեան իոյ Իեսպան :

Գրէ Սուխատորպիոս վիճակաւոր քաղաքին , " Ըղեձալի է ինձ գրել աստանօր զանցս հոգեվարութեան Փիւնկանն իմտատասիրաց՝ Հոգոնի Գրովտիոսի . զի ոնդ այրն՝ այնպս և վերջինք կենացն են ՚ի իւրատ բարեպաշտութեան և յանդիմանութիւն անապաշաւ մեղաւորաց : Սոչեաց զիս առ ինքն յիններորդ ժամուն գիշերոյ , և ես գնացեալ գտի զնա իբրև զոհ նուիրական հանդերձեալ ՚ի բուրումն անուշութեան պատարագ կամացն ան՝ և ասեմ , ցանկայի եղբայր

Գրովտիոս տեսանել զքեզ ՚ի կեանս և շահիլ ՚ի բանից քոց : Ասաց , Կ՛ծ այլ իմն պէս փոխեաց զայդ : Խնդրեցի ապա պատրաստել զինքն ՚ի չուն երանագոյն վիճակին և ապաշաւել զմեղս իւր ը մաքսաւորին , որ խոստովանուի մեղացն եղիտ շնորհս յնյ : Ասաց , Այ՛ն ես ինքն իսկ եմ այն մաքսաւոր : Յաւելի ապա թէ պարտ էր իւր յուսալ ՚ի տի քրիստոս՝ առանց որոյ չիք փրկութի : Ասաց , յոյս իմ և ապաւէն է միայն յն քն : Ապա սկսայ տեսլ գերմանեցերէն զմաղթանսն , « Սուրբ Յիսուս » և հարցի եթէ հասկանայր՝ պատասխանեաց , այ՛ն : Ապա քաղեցի նմա գլուխս Կ՛ծաշնչին կարգեալս վասն հոգեվարաց , և հարցի եթէ հասկանայր՝ արդեօք , ասաց , լսեմ զձայն քոյ , այլ թէ զինչ ասեսդ՝ ոչ իմանամ : Այս էր վերջին նորա բան և ահա աւանդեաց զհոգին իւր զհասարակ գիշերանս ՚ի ձեռն Տուղին Հոգւոց , Որում փառք ը Կ՛մ յաւիտեանս ամէն :

ԵՐՈՆԻՄՈՍԻ ԲԻԳՆՈՒՆԵԱՆ

Արտանայն խորհրդանէ Գերագոյն Ասեմէն

Փ Ա Ր Ի Ձ Ո Յ

Անիրաւէի արդարութեան եթէ այլ ընդ այլոյ զբաղեցուցանէի զժամանակն նուիրեալ արդարութեան ըստ տուչութեան բարձու Քուսիւ պաշտաման . բայց ես խրախոյս ամբառնամ յայս գործ սատարիչ Քրիստոսական Հաւատոյ, որ է մասն Արդարութեան՝ Քոյին պաշտամանդ : Ձի չներէր ինձ Արդարութիւն առ այլ՝ քան առ Քեզ վաղահաս ապաստանել, Որոյդ փառացի Անուն պսակէ զսոյն : Ոչ բռնաբարեմ զժամանակ հանգստեան Քոյ՝ ուր զբաղանք վիճակիդ չտան Քեզ զնոյն : Այլ ըստ որում գործօնելոց և փոփոխութիւն գործոցն երևի հանգիստ, կամիմ, զի ՚ի միջոյ Ատենական պատաղմանց Քոյ՝ հանցես և սմին ժամս ճշդութեան . ուր զայս առնելով՝ և զՔոյն լնուանթերի զպաշտօն : Լ ուր վկայութեանց, կշռեան զուրոյն զփաստս, քննեան, և զողջութիւն ողջունեան Արանց Գերազանց : Եւ ես մնամ պարտօք հանդերձ Քոյ՝

Հ . ԳՐՈՎՏԻՈՍ :

ՀՈԳՈՆԻ ԳՐՈՎՏԻՈՍԻ

Քրիստոնէական ճշմարտութեան

Գ Ի Ր Ք Ա

§ 1. Պատճառ Գործոյս

Բազմիցս բնաւորեցար հարցանել յինէն Ե'րոնիմոս Բիզնունեանց, այր արժանի հայրենեաց քոյ խնաստնոց՝ և եթէ թոյլ տացես յարել՝ և ինձ իսկ թէ զինչ փաստք գրոցն էին զորս ՚ի բարբառ հայրենի մատենագրեցիս յաղագս քնական հաւատոց: Ընդ այս քո խնդիր ես ոչ զարմանամ, զի որ ստէպ զարժանիս ընթռնեաց վերժանեար գիրս քաջափորձ քննութեմ, ոչ անդ խտանաս թէ զխնդր Հռիմոնդոս Սեբանտոս սոփեստական ճարտարութեամբ, քանի անստերիւր տրամաբանութեմ Լուդովիկոս Վայլէս, և կամ քանի չքնալ ճոխաբանութեամբ և հանճարով քոյին Փիլիպպոս Մորնինտո՝ լուսափայլ երիւրեցին նիւթոյս տեսութիւն. մինչ զի և պէտս ինձ համարել զառ ՚ի նոցունցն թարգմանել ՚ի մերս ինչ ինչ: Քան եթէ ՚ի նոր հաստուած սոփերիս լինել ձեռնամուխ: Առ այս թէպէտ և զայլոցն չէ մարթ ճշդիւ որոշել զինէն դատատան, սակայն ահնունիմ, զի դու իբրև բարուք իմն և արդարակորով դատաւոր՝ աղատ կացուցես զիս յասել աստիմում, զի յետ տքնի վերժանութեան ոչ միայն նախայիշատակելոցդ, այլ և որոց միանգամ ՚ի ըաբունեացն հրէից՝ վն հոյ մատակարարուէ, և ՚ի նորումս ՚ի վարդապետաց անտի վն քրիստոնէութեան աւանդեցանն ընտրեցի շնորհել մտացս զայն աղատութիւն՝ զոր արդէն իսկ զլանամ մարմնոյս: Քանզի քնք ՚ի վն

Տասնաչափ է իմ, զի ոչ ուստեքէ եթէ ոչ յիւրմէ կամ յորոց ինքնին գան ՚ի հաւանութիւն պաշտպանի ճշմարտութիւն : վարկպարաղի է համոզել զայս՝ առ որ ես ինքն նախ չիցեմ հաւան : Ասան այսորիկ ծաղկութեւլ արարի զորս ՚ի հոգ և ՚ի նորոց գաի բանս ճշմարտութեանն ապացոյց . զթերահաւատաւիսն թաղի . զխորդ և զերազաւատս գլխովին ՚ի բաց հատի . զընտրեալսն յերի յոճ հասարակաց իմ կարեւորագունին . նաև ՚ի չափմունս ոտից տողել հաճեցայ ՚ի դիւր կարդալեաց : Զի յանձին կալայ զայս գործ առ ՚ի պէտս իմոց հայրենեաց մանաւանդ թէ՛ և նաւաստեաց նոցա , ո՞ղ զի դէպ տացից սովաւ շահիլ անձանց զժամանակն զոր յընդերկար նաւարկուէս իւրենց՝ հողմոյ վաճառեն : Ապսքէն սկիզբն արարից գործոյս դրուատիւք ազգիս որ ՚ի հանձար նաւաստուէ գերազանցէ զամենեքումք . թերևս զարթոցից զնոսս ՚ի կիրառուի անձային շնորհաց , ոչ ՚ի շահ անձանցն և եթ՝ ոչ և ՚ի տարածուի քնական հաւատոց : Որոց և ոչ բնաւ պակասին առարկայից յաճախուիք . զի յընթացս պէտքս նաւարկուէց երբեմն հեթանոսաց պատահին , ո՞ղ ՚ի ճէն և ՚ի Առնիսիա . երբեմն մահմետականաց , ո՞ղ ՚ի Թուրքաստան , ՚ի Ասորս , և ՚ի տէրուիս Փեղոյ և Մարակայ . և հրէից՝ ռիսերիմ թշնամեաց ասեմ քնական հաւատոյս , որ ցան և ցիր կան յալորսս երկրի՛ գրեթէ յամ ուրեք . յորս լի են արք անբարիշտք , պատշաստունք իմ առթին բերելոյ ժայթքել ՚ի հագիս պարզամտաց զմահառիթ ժանտուէցն զթոյն , զոր ի պատրուակաւ վարագուրել նոցա՝ բռնացաւ երկիւղ : Ընդդէմ որոց կամ եղև ինձ պինդ ունիլ զլմբալաբացիս , զի որ զլաւագունին ունիցին զկոյս ջանայցեն կործանել զմեքենայս մոլորութեանց , և զգուշանայցեն անձանց չլսաբել ՚ի նոցանէ :

§ 2. Է՛ Աստուած :

Ձի ցուցից յայս առաջին գիր , թէ Տաւառն չէ կերդ ինչ , սկսանիմ ՚ի Տիմանէ անտի նորուն . այս է՝ գոյ ւած . զոր և Տաստատել կանխեցայց այսպէս : Արդ եթէ են էակք որ զսկիզբն առին գոյոյ , Տաւաստին ՚ի լուսոյ բանին և ՚ի խոստովանուէ ւամ ազանց . քանզի էակն ոչ է պատճառ գոյացուէ իւրոյ՝ որով եղևն , զի որ չէ յեւե՛ ոչ կարէ լինիլ ՚ի ներգործուէ՝ ապա թէ ոչ մարթ էր էակաց լինիլ նախ քան զէւե՛ իւրեանց . Տեաեի ուրեմն՝ զի որ էացանն յայլմէ առին զսկիզբն էուէ իւրեանց : Ար և ապացուցանի՝ ոչ յայնց և եթ զորս տեսաք և տեսանեմք այլ և յայնց յորոց անսիջապէս ոնին զծագումն իւրեանց . մինչև ժամանեցոսք յայն պատճառ , որ չունի իւր զսկիզբն գոյոյ , այլ ոնք սովորաբար ստորոգի , կեայ՝ ոչ պատճառ՝ այլ Տարկաւորաբար : Եւ այս պատճառ (զորմէ Տուպ չէ Տուպ ,) նոյն է՝ որ բացեցցի մեզ անուամբս ինքնեզուէ կամ ւած : Երկրորդ՝ եթէ իցէ՞ արդարև ւածեղէն իմն էուէ , Տաստատի ՚ի բացերև խոստովանուէ ւամ ազանց՝ յորս բան և բարոյականուի չև են ՚ի սպառ վերջացեալ յառաջ գալով բրտուէն : Եւ թէ պէտ գլուա մարդկան կախի զազատուէ ինքնելչասն կամաց , և չէ միօրինակ յամ տեղիս գալով միշտ ՚ի փոփոխման , սակայն չիք ուրեք , ուր ոչ գտանի տեսուի խորհրդոյս այսմիկ , կացեալ անփոփոխ չէ յուէրժտաբարձ փոփոխմունս ժամանակին , ոնք և ՚ի նմին իսկ Արխատուելէ՝ յառնէն գժուարաՏաւանէ այսնի ինդրոց , անշուշտ յուշի ընկալու : Յայտ է ուրեմն թէ այնքան է բացարձակ տեսուի իւրժոյս որքան է և՛ ազգ մարդկան : Եւ այսմ չէր յայլ ուստեքէ՛ Տար , եթէ ոչ կամ յածալին յայտնուէ , և

կամ յաւանդուի նախահարց մերոց : Արդ՝ եթէ հաւանիցուք առաջնոյն ինքնին հաւաստի բանս . բայց եթէ վերջնոյն՝ խիստ իմն է պնդել թէ ընդէր արդեօք նախահարց մերոց յիւր այսքան զգուշալի զսուտ բաղայս աւանդել սերնդոց իւրեանց : Գարձեալ՝ եթէ նկատիցուք զմասունս երկրի զառ ՚ի Տրոց ծանուցեալս և ՚ի նորոց գտնէր , ուրանօր կան և մնան գեր նշմարանք բանին , և զազգս կորովիս մտօք և ճարտարս ՚ի գիւտ հանձարոյ , ոնկ և զազգս խուժըս դուժս և սպուշս , յորոց միոյն խաբլի , և միւսոյն խորամանկել հնարս խաբէուէ արտաքոյ հաւանուէ թուէր գործ , երևան լինի անծեղէն գիտուիս : Չարդէ ինչ և որով պնդեն հակառակորդք թէ ՚ի վեր եկին սակաւք չէ դարս դարս . որ՝ կամ ոչ հաւատային , կամ խոստանային չհաւատալ գոյուեն անց : Քի սակաւուի նոց միանգամայն և հանրական արհամարհանք չէ խկոյն ՚ի յայտ ելանել կարծեացն անշուշտ ճշգրտեն , թէ այսնկի կարծիք յառաջ եկին ոչ յուզիղ կիրառուի բանին սեպհական յատկութեան մարդկան՝ այլ կամ ՚ի սիրոյ կեղծեաց որով որ վարէրն՝ պնդէր թէ սեստ իցէ ձիւն , և կամ յապականուի մտոց՝ որում ոնկ ախտացելումն ախորժակի չերեւի համոնկ և էն : Նա հին աւուրցն վիպասանք և այլ և այլ գրեան միաձայն ուսուցանեն մեզ , թէ որքան առաքինի ոք գտաւ , այնքան և դէպ ՚ի չմէ պաշտպանեցաւ անձայն գիտուիս : Իսկ որ զանձինս ՚ի բանց քերեցին յառաջնահաստատ հաւատոց սաստի յաւէտ ՚ի թիւր մտաց արարին , որոց՝ ոնկ և յայտ է իղձ այն էր , զի չիցէ անձ՝ քնիչ գործոց մարդկան : Եւ զոր ինքեանք երաշխեցին՝ եթէ զանհուն յառաջնուիս սկզբանց ասես , և թէ զխուռն ընթացս հիւլից , ոչ եթէ զհաւասարադունին՝ այլ յաւէտ զմեծու-

գունին ունին զտեղի տաժանուէց և քան զընկալելն իսկ չերեւին հաւանական, ուր յայտ է որոց քննեցին գէթ սակաւու սակաւու : Ասիցէ՞ ոք, վնդի ոչ տեսանեմ զւձ՝ ոչ և հաւատամ ՚ի նա : Տեսցէ՞ թէ քանի՞ անպատէ՛հ է մարդոյ ունողի զհոգին բանական զորինքն չետես երբէք՝ առարկել զայս օրինակ : Քանի՞ տարապայման ոչ իցէ և ուրանալ զորս փծուն իմացականութիւրով չկարիցէ լմբունել, զի իբր ՚ի բազումս յատուկ է ստորագունից անհաս վերագունին քան զինքեանս գոլ : Անասունք՝ ոչ կարեն հասու լինիլ թէ ուրի տրարած է մարդ, թէ որով հանձարով կարգէ զօրէնս քաղաքականս, կառավարէ տէրուին, չոփէ զընթացս աստեղաց և նաւէ չէ ծով : Գրի այսօրիք անցանէն լի չափ՝ իմացականուէ նոց : Այսպս և մարդ՝ լի որում ազնուութեանուէն գեր ՚ի վերոյ նոցին կարգեալ և ոչ յանձնէ, պարտ է մակարեւել ուրեմն թէ նա՝ որ եղ զինքն ՚ի վերոյ քան զչորքոտանիս է այնքան վեհ ինքեան, որքան է ինքն չորքոտանեաց, ուստի և զհետ բերել թէ կայ արդարև անտեղէն իմն բնուի, որ թէ լի էութեան և թէ լի գերադանցութեանն՝ անցանէ անդր քան զսահման հասողութեանն իւրոյ :

§ 3. Մէ է Աստուծոյ :

Հաստատեալ թէ՛ է անձ, իջանեմք յատորգելիս նր, որոց առաջին է միութիւն : Եւ այս անտուտ՝ զի ուր ՚ի վերագոյնդ ասացաւ, անձ է էակ հարկաւոր և ինքնեղ, և որ հարկաւորապէս և լի ինքեան է էակ ոչ չէ տեսակաւ անկանի՝ այլ ՚ի ներգործուէ կայ, և լի որում ՚ի ներգործուէ՝ ապա և ՚ի միութեան : Եթէ գիցես ինձ աստանօր զբազմութեանս անց, և առ երկաքանչիւրսն ՚ի նոցանէ չգտանիցես զմի և նոյն զօրուի,

ղինարդ լինիցին էակք հարկաւորք: Ամ ընդ էր՝
 ոչ դիցես ինձ անձ երկուս՝ քան զերիս, կամ տանս
 յաւէտ քան թէ հինգ, զի բեղմնաւորութիւն
 իւրաքանչիւր տեսակացն աղբերանայ ՚ի բեղմնաւո-
 րութենէ անտի պատճառի նոցին, որոյ լը շատ և լը
 նուազ պատշաճաւորութենարտադրին պատճառելիք,
 այլ այ ոչ սկիզբ է՝ ոչ վախճան: Գարձեալ ամ ան-
 հատական և տարբեր էակք ունին իւրեանց զմասնա-
 ւոր յատկուիս, որով և զանաշանին իրերաց, զորս
 չէ պարտ դնել յանձ, զի է էակ հարկաւոր: Մանա-
 ւանդ զի չիք ուրեք նշան բազմաստուածուն, ուր
 բովանդակ աիեղերք կացուցանեն զմի՝ Տ, յորում և
 մին ճաճանչի արիիդ գեղեցիկ, և ՚ի մարդս մին է
 աւաջնորդ՝ հոգին: Աս և եթէ անձ երկու իցէ կամ
 առաւել քան զերկու աղատագործ և աղատական,
 կարեն հակառակ միմեանց կամել և գործել, որով և
 խոչընդոտել իրերաց, ուստի և զոր ոչն կամինսնդամ
 կատարել: Այլ այ է արդեւանաւ գալ չիք:

§ 4, Արե լրան ան հոգորելուէնց :

Զի գիտացուք և զայլ ստորագելիս այ՝ զծանու-
 ցեալս անուամբ հոգորելուիէնց, (՚ի կիր առեալ ըզ-
 ձայնդ perfectio քան զոր բացայայտագոյն չունի լե-
 ջուն լատինացի.) յոյնդ τελειότης ստորագի զայ՝
 Եզրակացուցանի, ամ կատարելուիք արարածական
 բնութեանց կամ սկզբնաւորք են, կամ անսկզբնա-
 ւորք, եթէ անսկզբնաւորք՝ ուրեմն այ են, իսկ եթէ
 սկզբնաւորք՝ հարկիւ անտուստ սկսանին յորուստ և
 ինքեանք: Եւ զի՝ յոչնչէ ոչ ինչ յեղերցս
 եղև, հեռեմ զի կատարելուիք երևեալ ՚ի պատ-
 ճառելիս եղեն նախ ՚ի պատճառն առաջին, որով և
 զայս կատարելագործեաց նա: Ուստի հարկ է խոս-

տովանիլ թէ ամ կատարելուիք էին նախ ՚ի նախկին պատճառուն : Բարձեալ անհար էր նախկին պատճառին կապիլ յապայս յիւրոց կատարելուեց, զի որ յախտենականն է՝ զայլոց էակաց կախումն չունի, կրէ ոչ ինչ ՚ի նոցանէ, և ոչ ինքն յինքեանէ : Քանզի իւրաքանչիւր բնուի զիւրն սիրէ զկատարելութիւն :

§ 5. Անսահմանորէն :

Այս ամ կատարելուիք են յամ անսահմանորէն, զի ստորագելիք յայն սակա հունաւորին, որ կամ պատճառն ուստի յառաջ գան այնքան և ոչ յաւէտ հաշորդէ, և կամ ենթակայն այնքան և ոչ յաւէտ քան զնոյն տանի. այլ ամ չիք է՝ որ հաշորդէ ինչ զիւր, և ոչ նայն կրէ ինչ յայլմէ. գոլով՝ ոնգ և սասցաք՝ ինքնաբուն էակ հարկաւոր :

§ 6. Ե յաւիտենական, հզօր, էմաստան և բարի :

Մինչ հաւանականադոյն թուի կատարեալ ասել զկենդանիս քան զանկենդանս, զներգործականս՝ ք զաններգործոնս, զստունս՝ քան զանասունս, զբարիս՝ քան զչարս. հետևի թէ այս ամ ստորագուիք ոնգ և ասացաքս իսկ՝ պատկանին ամ անսահման է զանակաւ : Ասան որոյ նա է անհուն կենդանի, որ և յախտենական, ամենակարող, ամենազօր և ամենակին աննիսող և անսպառ բարութիւն :

§ 7. Ե պատճառ ամի :

Առդ՝ եթէ էակք յայ առին զսկիզբն էութեան իւրեանց՝ յայտ իսկ է ՚ի վերոյ գրելոցդ : Եզրակացոցանի. ին ինքեան և հարկաւոր էակն է միակ, իսկ այլք ամ սկսան յայլմէ էակէ՝ զխնաբաժանելոյ ՚ի յինքեանց : Այս սկզբնաւոր էակք թէ անմիջապէս յինքեանս, և թէ միջնորդաւ պատճառաց իւրեանց,

սկսան յանսկզբնէն յնայ . որ ոչ թէ բանին միայն այլ
 և զգայուէ անգամ երևի . քաջածանօթ : Ջի թէ ա-
 չալուրջ հայեցողութի զնին կայցէ որ սքանչելա-
 յարմար շինուածոյ մարդկային մարմնոյ , ներքնոյն
 ասեմ և արտաքնոյն . և տեսանիցէ թէ զհարդ մա-
 սունքնն և մասանց մասունք առանց իրիքնախահո-
 գուէց ծնողաց և առանձին ջանից զպատշաճեալն իւ-
 բեանց գործ , և սյն սյնքան անթերի վայելչութի
 արուեստին , մինչ և քաջագիտացն յիմաստնոց և բը-
 նազնաց հաշիւ թէ զարմանալ կարել , ոչ խկոյն մա-
 կաբերիցէ թէ արարիչ բնուէս է արդարև գերա-
 գոյն իմն իմացականուի : Ջորմէ տէս ինձ ¹⁰ զԳալի-
 անոս , մանաւանդ ՚ի մանր քննել անդ նն զպիտանու-
 թիւն տեսանելեաց և շօշափելեաց : Ջնոյն ասելի
 է նաև զմարմնոց անբան անասնոց , զի ոչ եթէ ՚ի
 արեւրական ինչ զօրուէ յարմարեալ և պատշաճեալ
 են առ թահմանաւոր իմն վախճան , այլ յիմացա-
 կան զօրութենէն Աստուծոյ : Եւ սյն ոչ թէ մի-
 սյն կենդանեաց այլ և բուսոց և տնկոց է միանգա-
 մայն . ոնք ՚ի փիլիսոփայից անտի ստուգիւ փորձեալ
 քննեցաւ : Իմաստնօրէն ճառէ զամանէ ¹¹ Ստրաբոն ՚ի
 դրուէ ջուրց , որոյ զբնուի խուզեալ միջին իմն դա-
 սէ չէ օդ և չէ հող , վնյ և պարտ էր ասէ զմիջին նն
 ունիլ գտեղին : Իսկ թէ չէ էր սյթմ գլխովին ՚ի հող
 զանգեալ իառնի յայտ է զի վն բեղմնաւորութի երկ-
 րի և առողջութի կենաց մարդկան : Այլ վախճանաւ
 գործել յատուկէ միայն իմացական բնուէ : Գարձել
 անհատք ոչ յօգուա իւրեանց և եթ այլ համօրէն
 տիեզերաց կարգեցան . օրինակ իմն ¹² ջուրդ . որ
 զսեպհական ընթացս իւր ՚ի վեր կոյս շրջէ ներհակ
 բնութեան իւրոյ , ոնք զի մի դատարկութն որ անդ
 (՚ի հէջ երէնէ և երէրէ) անջրպետութի ինչ լիցի միածա-

ւալ կազմութեան տիեզերիս , այնպէս արարչագործելոյ որ հասնապագորդեան կապակցութիւն մասանցն չեմիւնանա կայուն հաստատուն կայցեր : Բայց այս չհանուր բարի ոչ կարէր վախճանաւ բերիլ , և ոչ իսկ զօրութիւնն պատուաստեալ յարարածս ինքնուրոյն գիմեր ի նոյն եթէ ոչ մշանաւ ինտցական էակին , որում հպատակ կան համօրէն եղանուիք : Քանք նաև յանբան կենդանեաց այնպիսի իմն կանոնաւոր կոպարաւ վարին ՚ի գործս իւրեանց՝ մինչ երևիլ նոցին ամ մասաբ գործ ամենիմաստ ճարտարապետին Յի . և այն՝ յաւէտ ՚ի միջիւնս և ՚ի մեղուս տեսանի , որ նոսի քան զփորձ առնուլ զառարկայից , ՚ի վստակարացն խորշին , և լուսաց զհետ երթան : Բայց զօրութիւն գիւտի և դատի չիք առ նն , զի մշտ միօրինակ գործեն . և զոր գիւրիչ գժուարութեցն է՝ ոչ ինդրեն : Իսկ զոր ունին՝ առնուն յարտաքին պատճառէ , կամ ՚ի վախճան վարել և կամ տպաւորել ՚ի նն զիւր ներգործութիւնն : Եւ այն՝ չէ՛ այլ՝ քան զոր կոչի ՚ի մէնջ պատճառ առաջին , կամ ամ : Եւս և համաստեղութիւն երկնից , և որ իշխան նց արեգակն և լուսին , կատարեն զշրջան իւրեանց այնպս յարմար և քաջագէտ երկրի բեղմնաւորութե , և բարեխառնութե նոց կենդանեաց՝ մինչ ներդաշնակաւորագոյն քան զնոյն չնձել ումք զմտաւ : Զի թէպէտ հեշտին ևս էր նոցին հաւատարագիծ շրջան , սակայն տակաւին մոլորապատունս և խոտորաշրջունս տեսանեմք զնն ո՞վ ՚ի իւրաքանչիւր ծագաց երկրի պատեհ գիպեցուցեն զշահեկան զիւրեանց դարմանս : Դարձեալ ո՞վ Յի պէտս կենդանեաց՝ այնպս և կենդանիք ՚ի պէտս մարդկան արարան , յորոց և զդաժանագոյնանս անգամ իւրով բանականութի ՚ի Տրազանդութիւն նուաճել զօրէ : Աստուտ յաղթահարեալ՝ Ստոյի-

կեանց՝ զ՞նչ վն մարդկան արարած աւանդեցին : Քայց զի անմարթ էր մարդոյ ածել ՚ի Տրադանդուի իւրնա և զերկնային մարմնս , և նոցին ը ինքեանց դիմել ՚ի նոյն անհաւատալի , մնայ ուրեմն՝ թէ է անօպետական խնացուի ինչ , որ ազդէ ամենազարդ լուսաւորաց Տաղորդել մարդկան այսչափ ՚ի խոնարհ քան զինքեանս երոց զմշանջնատե իւրեանց արտօնութիւնս :

Եւ այս՝ ոչ է օտար ոք քան նոյն աստեղաց և տիեզերիս արարիչ : ¹⁵ Արտակեդրոն և մակաշրջան Տրոլ աստեղաց յանդիման կացուցանեն ոչ զկարողութիւն նիւթոյ՝ այլ զկարգ ազատ գործողի հաւաստեալ նոցին կիսոյ յայս՝ և կիսոյ յայն կողմն երկնից դրուք , և ծովու և ցամաքի այսչափ դերահաւասար տարազու :

Այս յաւէտ և նուազ զետեղմունք աստեղց յայս և յայն կոյս հաստատութեան , այս ամենակատար ձև երկրի՝ բոլորակ , և անփոփումն իւրաքանչիւր մասանց նն իբրև ՚ի ծոց երկնից սքանչելի յարմարուք յայտ յանդիման քարոզեն ոչ ՚ի բնուն բերմանէ պատահարաց լեալ՝ այլ ՚ի բնազանց խնցմանէ յարմարեալ և կարգեալս :

Զի ո՞վ այնքան ապուշ , որ ՚ի զառանցիկ բերմանէ պատահարաց ակնկալցի տեսանել զայսչափ անվրէպ գործս կատարելութեանց . դիւրահաւան լինելով , ո՞պ թէ կոտորակաց ատաղձից և քարանց իւրովին անձեուն բոլորիլ ՚ի տուն , կամ ՚ի թղթոց պատահաբար ընկելոց ՚ի բաց յառնել քերթածից . զի և նա՝ ¹⁶ որ ետես զթուանշանըս դրոշմեալս յեզերս ծովուն , գիտելով թէ ՚ի սոսկ պատահմանց չէր Տար գուլ այնպի իրիք , իսկոյն յուշառ զմարդոյն նախաժամանելոյ անդր՝ տեսանել նըշան : Նա և եթէ ազգ մարդկան ոչ էր յաւիտենից , այլ ՚ի ժամանակի ընկալաւ զսկիզբն իւր , ո՞պ ՚ի բազում գլխոց՝ նոյնպս և յօրըստօրէական կատարելուէ

¹⁷ արուեստից , անբնակ վայրաց յետոյ ՚ի շէն եկեղոց Կ
 և ՚ի բարբառոյ անտի նորագիւտ կղզեաց գլխովին
 ածանցեղոց ՚ի մերձակայ ցամաքացն՝ անշուշտ ստուգի :
 Էին նաև հանրական ծխանի ինչ առ աղգս աղգս ,
 զորս ոչ այնքան բնաբոյս աղղեցուէ , որքան վաղե-
 մի և ուրեք ուրեք ՚ի չարուէ կամ ՚ի չուառուէ մտաց
 խրամատել աւանդուէց պնրտ է ընծայել , ոպիք է-
 ին առ հինսն զոհք մովսիսական օրինաց , և ՚ի նորս
 ամօթ ՚ի ցանկութիւնս Աստղկան , խորհուրդ հար-
 սանեաց , և յաղգապղծութենէն փախուսա :

§ 8, Չէ՛ պարճառ չարեաց .

Չէ՛ պարտ քստմնիլ յորոց միանգամ ասացաքն Կ
 տեսեալ թէ անհամար չարիք գան և գնան յճի .
 զի ելք սոցին չեն յայ , որ՝ ոպ ՚ի վեր անդր ցու-
 ցաք , է ամենակատար բարի : Զի յորժամ ասեմք
 զնմանէ լինիլ պատճառ ամի՛ իսկոյն ՚ի վր բերեմք
 այնց՝ որ իրօք են էակք : Եւ զինչ արդեօք արգելու
 և որոց են , լինել հետեանպս պատճառ դիպուածոց
 իմիք , այնպիսեաց՝ ոպի և գործքն են : Աճ ստեղծ
 զմարդ և զհոգիս վերինս անձնիշխանն ձրիք , և այն
 անձնիշխան և աշատակամ ձրիք չի ինքեանց չար չեն ,
 այլ չարի պատճառ ¹⁸ լինել կարեն : Արդ՝ այսպի չար-
 րեաց՝ որ և բարոյական մեղաց դնել զամ ՚ի պատ-
 ճառ՝ անօրէնուի է . բայց կան ինչ ինչ որ այլաբա-
 նօրէն առեալ չարիք անուանին , որգոն , հեծուիք ,
 վիշտ և տառապանք առաքեալ յայ ՚ի վր մարդ-
 կան . իմն ¹⁹ կամ յուղղուի վարուց՝ և կամ ՚ի պատիժ
 պատուհաս յանցանաց նոցին . յորս ոչ ինչ տեսանի
 հակառակ անծային բարութեանն , այլ յաւէտ՝ բա-
 րի . զի ՚ի նմա չիք որ չէ դէմ բարերարութեանն զի-
 նիցի . իսկ այսոքիկ որ յառաջ գան , բղխին ՚ի բա-

րերար խնամոց նորուն իբրև զդեղ փրկարար թէ և գծուարատար անողջ քմաց՝ ՚ի քաջահմուտ բժշկէ :

§ 9. Ընդդէմ էր՝ոց սիւզմանց .

Հերքին աստ առ ճանտարհայն և կարծիք մուրրուն նոցին , որք զնեն²⁰ զերկուս ներդործական սկզբունս , զմին բարի՝ և զմիւսն չար : Նախ՝ զի յերկուց գիմամարտելոց չէ միմեանս ծագի ապականուի քան թէ բարեկարգ հաստատուի : Եւ եկի՞ անաւտ իմն է գոլ միոյն յինքնագոյից ՚ի բնուստ բարի և միւսոյն չար : Զի չար՝ պակասութիւն իմն է անենթակայ չը ինքեան , և ենթակայացեալ յայլում . Ուր չէ հակառակն և գոն իսկ էակ՝ է բարի :

§ 10. Այլ նախախնովի Վս .

Աստուածեղէն տեսչութիւն խնամելոյ տիեզերաց այս է ցոյց , զի ոչ միայն²¹ մարդ խոհուն մտք զարդարեալ այլ և թռչունք և անասունք առ հանուր՝ որոց գործէ զգայուի փոխանակ մտաց՝ խնամ տանին ծննդոց իւրեանց : Ապաքէն կատարելուիս այս՝ չը որում նշոյլ ամենառատ խնամոցն նոյ , չէ՞ պարտ ՚ի բնոց բառնալ ՚ի նմէ : Բարձեալ՝ գոլով նր՝ ամենխմաստ , ամենահայեաց և ամենազոր , չկարէ չտեսանել զորկանս , կամ չխմանալ զգալիս՝ և խնամել զնս : Սոցին զհետ գան և ասացեալքս ՚ի նախոյսդ յազագս շարժման էից ներհակ բնութեան իւրեանց՝ վախճանաւ հանրական օգտի :

§ 11. Եւ էնկալունէայդ .

²² Մոլորին որք տան երկնային մարմնոց միայն զնախախնամութիւնս զայս : Զի ՚ի բանից աստի ցարդ ՚ի միջ բերելոց միանգամայն և ՚ի հոլովմանէ աստեղաց , որ չը խոստովանուի երեւելի իմաստնոց և ցուցման փորձոյն՝ կարգեցան ՚ի բարիս մարդկան՝ տարա-

ծէ զուժգնութիւն իւր գրեթէ առ ամ արարածա-
կան բնուիս : Եւ կարի իսկ քաջ . զի պէտտ առաւե-
լագոյն խնամոց ն՛ք վասն որոց այլք արարան՝ ունին ,
քան նոքա՝ որք ՚ի սպաս նոցին և եթ կարգեցանն :

Եւ անկապ .

Յանճարինս մոլորին և որ զՏանուրս ՚ի նմէ խնա-
մեալս ասէն , և ²³ զմասնուորս՝ ոչ . զի եթէ զան-
Տատս անծան յայ դնեն , ապա նմին և զինքն . քզի
գիտուի չէ անՏուն , եթէ չՏասանիցի և ցանՏատս :
Արդ՝ եթէ այ է գիտել զամ , չէ էր՝ ոչ ապա և նա-
խախնամել : Զի անՏատք , չորում անՏատք՝ կար-
գեցան առ յատուկ իմն՝ այս է՝ առ Տանուր կամ առ
մասնաւոր վախճան : Նա՝ տեսակք էից , զորոց ամ
մշտնընենալ նոքին իսկ Տակառակորդք խոստովա-
նին , ոչ ենթակայանան՝ եթէ ոչ յանՏատս իւր-
եանց : Նմին իրի՝ եթէ անՏատք յապականութիւն
իջին անտես եղեալ յաստուածեղէն խնամոց՝ պարտ
էր ուրեմն և տեսակացն ²⁴ սպսկանիլ :

§ 12. Ի պահպանութիւն Ռաբաւորութեց .

Զփաստ ամային նախախնամութեան շուրջ ըզ-
պահպանութե Տասարախապետական իշխանութեան
ոչ թեթեւ ինչ վարկան իմաստասէրք և վիպասանք :
Նախ՝ ընդ Տանրապէս , զի որ ինչ միանգամ իշխողու-
թեան և Տաղանդուէ կարգ և կանոն ՚ի ներքս մու-
ծան , նոքին և ամբողջ կացին մնացին . եկը՝ մաս-
նաւորապէս . զի չէ երկար տեղուէ մշտնընաւորե-
ցին օրէնք միահեծան թագաւորութեանց չէ դարս
դարս , որդոն Ասորեստանեայն , Եգիպտոսին , Հը-
ռովմայեցւոցն , և աղնուպետութեանն Աէնետ-
կեցւոց : Ինչ ինձ աստ թէ Տանճար մարդկան զօ-

րէր ինչ ինչ ՚ի սոսին , սակայն և այնպէս՝ եթէ իրաւաւք քննեսցի խուժան խառնիճաղանճ և չարասէր ժողովրդեանն , վնասարար առթից դէպս , և բազմավրդով ել և էջս մշտափոփոխ բնաւորութեանց , անհարին լինէր արդեօք տեւել թագաւորուեց ցայսքան յաւիտեանս առանց մասնաւոր խնամոց անտի անձպետական զօրութեանն : Եւ այս հաստատի մա նաւանդ՝ զի ուրանօր կամ եղև նմա փոխել զտէրուխս զորս առ ՚ի ձեռս իւր իբրև գործիս նախասահմանեյս յայն վախճան , տէս դու ինձ զԱլիբոս , զԱղէքսանդր , զԱլեսար դիկտատոր , ²⁵ զԱլինկի առ Թաթարս և ²⁶ զՄաքաա առ Ճենս գլխովին անյոյս էին ՚ի ճարտարմտուէ հարից մարդկան , և անցին չէ չափ ցանկուե իւրեանց առաւել քան զոր բերէր նոցա սեպհականեալն վիճակաց մարդկան բիւրաշրջան փոփոխութիւն : Այս իրաց չէ միմեանս հաղորդուե , և ներքին մղումն նոցա առ վախճան սահմանաւոր , յայտնի նշան լինին նախասահման տեսչութեանն նյ : Ի քուէս երբեմն պատահի վիճակ նպաստաւոր , բայց եթէ կրկնեսցի նոյն հարիւրիցս և անդր՝ ո՛չ ոք իցէ որ ո՛չն մակաբերիցէ զնոսին յարուեստինն ճարտարութենէ յառաջ եկեալս :

§ 13. Եւ յոգոնիէէաց

Չամենատոյգ նախախնամութեանն նյ զհաւատտիս ընձեռեն մեզ սքանչելիք և կանխատեսութիւնք յաճախեալ առ պատմաբանս : Եւ թէպէտ այս աղգպատմուեց ը մեծի մասին զառասպելաց դատի ունիլ զտեղի , սակայն զայնս՝ որ ստացան իւրեանց վկայս հաւատարիմս և համայաւիտեանս , որոց ո՛չ ընտրութիւն չէ կեղծեօք ել , և ո՛չ իսկ հաւատարմուե ՚ի դատ աճաւ՝ չէ օրէն ժխտել չէ ՚ի սպառ անկարե-

լիս : Ասան զի եթէ ամենակարող է Թէ , չէ էր[՞] ապա զոր գիտէն չկարիցէ ցուցանել արտաքս , և զոր կամին կատարել նա և արտաքոյ կարգի հասարակաց բնութեան , որ ՚ի նմէ արարան և նորա հրամանին . հաղանդ կան : Պնդիցէ[՞] ոք . թէ այսպի զօրուէք ելանեն նաև յայլոց իմացական արարածոց՝ որ ՚ի խոնարհ քան զիս : Հաւանիմ , բայց առարկութիւնս բանայ մեզ փաստ զօրաւոր հաւատալ , թէ կարէր Թէ հեշտի ևս հրաշագործել զնն . զի զոր գործեն ստորին իմացական արարածք , գործեն՝ կամ յայ ՚ի նոյն վարեալ ոպ զգործիս , և կամ գերադոյն իմաստութ՛ նորա թուլատրեալ յայն հրաշս : Ոպ և ՚ի բարեկարգ թագաւորուիս ոչ ոք արտաքոյ հասարակաց օրինաց գործել զօրէ ինչ , բայց եթէ հրամանաւ ընդհանուր օրէնադրին :

§ 14. Եւ այս մանաւանդ ՚ի Քիզ հրէեց

Ջարմանագործուէք հրաշից թէ և կասկածելի թուիցին ՚ի վկայուէ արտաքին պատմաց , այլ յօրինաց անտի եբրայականաց՝ անշուշտ հաւատսին : որ ՚ի սկզբանէ և այսր թէպէտ և անմասն ՚ի մարդկային ինչանոց , և ծաղու և արհամարհանաց եղեալնշաւակ գոգ դու չէ համօրէն ծագս[՞] թի , ²⁷ տեւաց մինչ ցարդանդրդուօրէն , այն ինչ այլ Թմ պաշտամունք բնց ՚ի քրիստոնէականէն , որ է իբր փրկանուէր պսակ մոսիսական օրինաց , էր զի բարձան ՚ի բառնիլ իշխանական բռնութեց՝ օրինակ քեզ կռապաշտութիւնն . և էր՝ զի թիկնտութ՛ սրոյ յարատեւցին ցմեր դար , ոպի է մահմետականութի : Խնդրի թէ զիւրդ օրէնքն այնքան ՚ի խոր շառաւիղեցին զարմատս իւրեանց ՚ի սիրտս եբրայական գրոհին , մինչ չմարթել ումք ՚ի բնց կորդել զնն : Պատասխանեմ

զի արդիս հրէայք անլէհատ աւանդութ ընկալան զպատմութն սքանչելեաց ՚ի հարանց անտի իւրեանց . և հարքնոցա ՚ի հարանց իւրեանց շարունակաբար , մինչև հասանիլ առ նոսա որք կեցին առ ժամանակաւն մովսիսի և յեսուայ , որ սոք յայլ տեղիս նոյնպն և ՚ի մասնաւորի յերևն իւրեանց յեգ իպտոսէ , ի չուս , և ՚ի մուտս քանանու սկանատես եղէն և վկայ մեծամեծ սքանչելեացն նյ : Գարձեալ մւմ ոչ դժուարահաւան թուի աղգի սյսչտի խտտապարանոցի սրաիւք յանձին բերել օրէնս լիս սյս քան ծանու ծիսօք և արարողութեամբք , կամ արանց այնոցիկ խոհականաց ՚ի բազմատեսակ կրօնից անտի՝ զորս եգիտ հար մարդկան՝ ընտրել իւրեանց միայն զօրէնս թլպատուէ , որ նտի՝ զի²⁸ առանց ցաւագին վշտաց չէր հնար պահել , և երկրորդ՝ զի յամօտարոտի աղգաց²⁹ հանապաղ լէ կատակս ելանէր : և որ մեծն է , չունէր որով հաւան ցուցանէր զինքն արտաքոյ բացարձակ պատուիրանին նյ :

§ 15. ՚ի հուսաբարձութեան և ՚ի նախնութեան մոլորոտ


Տառիցն մովսիսի՝ յոր արձանագրին սքանչելեքս , ընծայի աներկեւան հաւանութն ոչ յայն սակս և եթ զի յայտնութն նյ եղաւ իշխան և առաջնորդ ժողովրդեան , և կամ անընդհատ տեւաց առ եբրայեցիս համբաւ գավեստից նորուն , սյլ և յաէտ յայն սակս , զի սոք քաջ տեսանի , նա զիւր փառս ոչ խնդրեաց , և ոչ կնքեաց իւր զշահ անձին նպատակ , զի և զմեղս իւր՝ զոր լէ վարագուրաւ պատրուակել կարէր՝ գրեաց . և զպատիւ թագաւորութեան և քահանայութեան սյլոց որոշեաց , զիւր միայն դժառանգութիւնն ամփոփելով ՚ի ցեղն զեւայ : Արք լւ բաւականին ցուցանեն թէ չէր նմ հաճ պատրանօք վարիլ

ի գրուածս իւր, կամ նկարել զբանս բաղմերանգ խեշերանձք և շողմոզ հրապուրանօք, որ սովոր են քաղել հաւատս առասպելաց, այլ միայն պարզ և մեկին բանիւք ող և հարկ իրացն պահանջէր: Եկդ անտարակոյս նախկնուէ մովսիսական օրինաց՝ որում ոչ երբէք հաւասարիլ կարացին արտաքին յիշատակարանք՝ այս է ցոյց զի և յոյնք՝ յորոց առ ամ ազինս ծաւալեցաւ գիտութիւն՝³⁰ զնշանագիրս իւրենց յօտարաց խոստովանին. քչի որ ՚ի նոսա տառք են, զկարգ՝ զանուն և զձև, ոչ այլոց հրագունից, քան զոր Ասորոց և Եբրայեցոց՝ ունին: Ող և վարեմի օրէնք³¹ Ատտիկայ՝ ուստի ապա և հռովմէականն, յօրինաց սատի մովսիսի առին զսկիզբն իւրեանց:

§ 16. Եւ յարգութեաց.

195

Աերբերին առ սոսա և վկայութիւնք ոչ սահաւուց արտաքնոցն ՚ի հրէական օրինաց, որք քանջ զվարեմի աւանդութիւնս այնպէս ընկալեալ ՚ի մեջ ազգաց ցուցանեն՝ ող և նոյն Մովսէս ծառագրեաց: Զի զոր նա յաղագս սկզբնաւորութեան Ռիս թող, մի լը միօրէ տեսանին առ հին³² փիւնիկ պատմութանս, զորս ՚ի Սանքոնիաթոնէ՝ ծաղկաբաղ արարեալ պահեաց Փիլոն Բիբլիոն, և մասամբ՝³³ Հնդիկք և³⁴ Եգիպտացիք: Աստի և ՚ի գիրս Լինոսի³⁵ Եզիլոգոսի և բաղմաց Հելէն մատենագրաց յիշի վիճի ունայն նշանակեալ յոմանց ձուոյ հաւուց ձևացուք, և կենդանեաց՝ ապա և մարդոյն արարչութիւն լը պատկերի նայ, և կարգելոյնորա իշխանն ՚ի վերայ ամ արարածոց, զորս ող առ բաղումս ՚ի հոց նոյնպէս և առ³⁶ Ովիլիսոսի՝ որ ՚ի Յունաց անտի ընդ օրինակեաց, մարթիս տեսանել: Զբանիւն նայ արարածոց լինելուի³⁷ Եպիքարմոս, Պրատոնականք, և անտի կանուխ



նախնին այն սկզբնահայր ո՛չ այնց քերթ ուածոցն
 ասեմ, զորս արդէն յանուն նր՛ այլ այնց որ ՚ի հինսն
 անուանէին նուազք³⁸ Որփեսի . ո՛չ զի՛ Որփեսայ էին
 նոքին՝ այլ զի զաւանդեալսն ՚ի նմնէ՛ պարունակէին
 զկարծիս՝ յայտնիցուցանեն: Ձարեգակնէ՛ ո՛չ լեւոյս
 սկզբնածին , այլ ընդունարան լուսոյ . և δόχημα καὶ
 ὄχημα τῆς πυρὸς, շթեմարոն Էսմ՝ սոյլ հրոյ , ո՞պ նախնի քրիս-
 տոնեայք՝ նոյն և³⁹ Եմպիտոկլէս համարեցաւ: Ձտե-
 զին ՚ի վերոյ քան զաստեղս բնակարանն յայ՝⁴⁰ Արե-
 տոս և Վատուղոս . յորում և լոյս մշտնջենաւոր՝ Հո-
 մերոս: Ձնախայախտենականութիւնն յայ քան զէս՝
 լը որում անեղ, զամենագեղեցիկ վայելչութիւն Քի
 լը որում անեղէն արարած , և զխաւարի քան զլու-
 սոյն նախնութիւն ասեալ ՚ի հին գպրոցաց ուսոյց
 մեղ Թաղէս . զորոց զվերջինն նաև առ⁴¹ Որփեսայ և
 Եղիողոսի մարթ է գտանել: Եւ այս անտուտ յա-
 ւէտ՝ զի⁴² աղինք քաջապահք նախնի սովորութեանց
 միշտ գիշերօք չտփէին զժամանակս իւրեանց: Ձ ՚ի
 բնաղանց իմացականութենէ կանոնել էից՝ Անաք-
 սագորոս . զաստուածագործ արարչութիւն աս-
 տեղաց՝⁴³ Արետոս . զ ՚ի հոգւոյն յայ փչումն կենաց
 առ էս՝ յետ յունաց՝⁴⁴ Վիրգիլիոս: Ձ ՚ի հողոյ կաղ-
 մումն մարդոյն՝ Եղիադոս , Հոմերոս և Վալիմաքոս:
 Ձմիութենէ ամենամեծին յայ , և զգոլոյ նմին պատ-
 ճառ եղականացս աւանդեալ ՚ի միաձայն հաւանութի
 ամագգաց՝ պնդէր⁴⁵ Մաքսիմոս տիւրեան: Ձեթ
 նօրեայ արարչութեան յիշատակ ո՛չ միայն առ Յոյնս
 և Հռոմայեցիս սրբութեաւուն եթմերորդի պա-
 հեալ ցուցանեն մեզ⁴⁶ Յովսեպպոս⁴⁷ Փիլոն , Տիբո-
 ղոն , Աղեմէս Աղէքսանդրացի և Ղուկիան , այլ և
 բաց յԵբրայեցւոց անտի՛ Վեղտք և Հնդիկք , որք
 միշտ եթմնակալ թուեն զժամանակս իւրեանց ըստ

աւանդելոյ մեզ Փեղաստրոսի, Դիոնիսի Կաստիոսի, Եուստիանոսի վկայի և նախնի յիշատակարանաց : Զպարզութիւն կենաց և զմերկամարմին կենցաղավարութիւն առաջնոց յիշեցուցանեն մեզ ⁴⁸ Եգիպտացիք, ուստի ել և ոսկին դար քերթողաց հռչակեալ նաև առ Հնդկաստանեայս ը գրելոյն Ստրաբոնի : Զանցս ⁴⁹ Ադամայ, Եւայի, դրախտին և օձին տևեալ ՚ի մեջ հնդիկ կռապաշտից մինչ զիւրն դար ակնարկէր Բայմոնիդէս, զնոյն է տեսանել և առ Փեկուացիս և բնակիչս Փիլիպպեան կղզեաց գաղթելոց ՚ի նոցին իսկ Հնդկաստանեայց : Առ Բրամանս մնայ տակաւին անուն Ադամայ, և առ Սիամացիս յարարչուէ և այսր թուին ամք վեց հազար, որ զստոյգ զմերոյս ժամանակագրուէ հաստատեն զկարգ : իսկ զկենաց մարդկան յառաջին դարու երկարել ցհազար ամ, Բերոսոս ՚ի քաղդէացեաց պատմութենէն, Մանէթ՝ յեգիպտականէն, Երոմոս ՚ի Փիւնիկեցեաց, Հեկատիոս, Ելլենիկոս ՚ի յունականէն, և ՚ի քերթողաց անտի Եգիպտոս միաբան աւանդեցին : Ար և ոչ իսպառ անաւօտ ինձ երևի, որովհետև պատմաբանք գրէթէ ամ ազգաց և յականէ՝ ⁵⁰ Պաւսանիաս և Փիղոստրատոս ՚ի յունաց, և Պլինիոս ՚ի հռովմայեցեաց անտի՝ անվթար վիպագրին, թէ մարմինք մարդկան որ գտան յետոյ ՚ի բանիլ գերեզմանացն վիթխարիք ևս էին քան զայժմու մարդկան : Համաձայն բազմաց Հելլեն հեղինակաց յառաջ բերէ ⁵¹ Ատուղոս և զայս թէ՛ նախ քան անհուն մեղաց մարդկան հրաժարեցուցանելն զանձ և զհոգիս սպասաւորս նորին՝ ստէպկանիսէր առ նոսա անձային յայանութիւն : Իսկ ըզկենաց յաղթահասակ և վիթխարի սկայից՝ զորոց գրեաց Մովսէս, ընթեռնանին ինչ ինչ նաև առ

պատմաբանս յունաց և լատինացեոց : Եւ որ յաղագս ջրհեղեղին բանք՝ երևին գրեթէ ՚ի մատենագրութիւնս նամադագաց , նաև որոց հարուստ ժամանակաւ անձան ՚ի մէնջ մնացին , մինչ դար հարանց մերոց գտեալ ած զնոսս ՚ի մեր տեսութիւն : որք թերևս այսր պատճառի աղագաւ կոչեցան ՚ի ⁵² Աարրոնէ՛ անյայտիցն ամանակք : Իսկ զորս յաղատուէ՛ քերթողաց բազմերանգեալս տեսանեմք ՚ի առասպելապատումն ստեղծաբանուեց , զնոյն համաձայն մովսիսի աւանդեն մեզ նախնի վիպասանք ⁵³ Բերոսոս ՚ի քաղէեացեոց և Աբխազենոս յԱսորեոց , որք և զարձակումն աղանոյն . ՚ի որս և Պլուտարք ՚ի յունաց : ⁵⁴ Ղուկիան ՚ի Հերապոլիս քաղաքի Ասորեոց տեսեալ ասէ զհին անցս տապանին , և փրկելոյ նովաւ ոչ միայն ընտրելոց ոմանց մարդկան՝ այլ և աղգի աղգի անանոց և կենդանեաց . որ երևէր նաև ՚ի գիրս ⁵⁵ Մողոնի և Նիկողոսի դամասկացոյ : Իսկ անուն տապանին և վէպք ելիցն Դևեկալիոնի բացերև ծանօթութեմ գտանին առ Ապողոլոորոսի , և ող Սպանիացիք ցուցանեն ճշդիւ՝ ևս և ՚ի կողմանս Ամերիկոյ ՚ի Վուպայ , ՚ի Մեկկովանայ և ՚ի Նիգարակ յաժին յիշատակուիք փրկութեն կենդանեաց և արձակման աղանուոյն և ազոաւուն . և ջրհեղեղին ևս յայնմ մասին , որ կոչի այժմ Ամրոց ոսկեղէն : Այլ թէ զոր մասն Տի կալան մարդիկ ՚ի բնակութիւն իւրեանց , ասեմ , թէ ՚ի Պլինիոսէ յուպէ յիշի լեալ նախ քան զհեղեղն : Եւ տեղին՝ ուր հանգեաւ տապանն յետ ջուրց հեղեղաց ՚ի սարս լերանցն ⁵⁶ Աորդուաց՝ ՚ի յաւիտենից և այսր անըհատ աւանդութիւն Հայոց յայտ յանդիման ցուցանէ : ⁵⁷ Յաբէթ հայր Եւրոպացեոց՝ որ և Իոն ող առ յապայս արտասանէին , ըստ Յունաց՝ Յաւան , և ՚ի Ափրիկեցոց՝ Ամմոն , նոյն-

արքա և անուանք այլ և այլ արդգաց և վայրաց, համանման գտանին գրելեացն Մովսիսի ըստ հաւատարիմ կարծեացն⁵⁸ Յովսեփայ և այլոց բաղմոց: Եւ ո՞րի բանաստեղծից արդեօք ոչ յիշատակէ ըզյանդուզն ձեռնիրիցութիւն մարդկան ՚ի փորձ⁵⁹ վերելից երկնից: Ջանցս հրայրեաց⁶⁰ տօչորմանն Սողոմայ առ Դիողորոսի Սիկիլացւոյ, Ստրաբոնի, Տակիտոսի, և Սողեմայ: Ջի⁶¹ վաղնջուց ընկալեալ օրէնս թլպատութեան առ Երողոստոսի, Դիողորոսի, Ստրաբոնի, և Փիլոնի Բիբլիոսի մարթ տեսանել: Ջնոյն հաստատեն այժմ և աղինք սերեալք յերանացն Աբրահամու, ոչ միայն Հրէայք, այլ և Եդովմեացիք, Իսմայելացիք, և այլք: Պատմութիւն Աբրահամու Իսահակայ և Բակոբայ համաձայն գնայր ՚ի հրումն առ փիլոնի Բիբլիոսի առելոյն ՚ի Սանքոնիաթոնէ, առ⁶² Բերոսոսի⁶³ Հեկատիոսի, Դամասկացւոյ, Արտափանոսի, Եւպարիմոսի, Դեմետրեայ, և մասամբ՝ ՚ի հին քերթածս Որփեսի, յորոց մնան տակաւին հաւաքածոյք ինչ առ⁶⁴ Յուստիանոսի առեալ ՚ի Տրոգեանն Պոմպէտէ Եւ առ ամենեսին սոսա գրութէ յար և նման են բանք՝ որ յաղագս Մովսիսի նձսյին ասենագրին: քանզի ճարտար իմն բանահիւստութեամբ նկարադրեն մեզ⁶⁵ քերթածք Որփեսի զի ջրոց վերբերումն նորին, և զտալ նմա յայ գերկուս տախտակս պատշառացն, առ որ տէս ինձ և զՊողիմոն: Նա՛ զպատահարս ելիցն յեգիպտոսէ՝ Մանեթոն, Լիւսինաբոս և Քերիմոն: Դարձեալ՝ անաւօտ իմն թուի արանց իսհականաց և այս, թէ Մովսէս՝ որ չօխերիմս ունէր իւր ոչ միայն զեգիպտացիս, այլ և զբաղումս ՚ի մերձակայ աղգացն, զեդովմեացիս, զԱբրացիս և զՓիլոնիկեցիս, համարձակէր գրել արդեօք

զայնպսիս յաղագս սկզբնաւորութեան Յի և արարչութեան էիցս , որ ոչ միայն պարտասիր ՚ի Տին մատենագրութեանց՝ այլ և գլխովին չէ հակառակն ընթանայր ամ վաղեմի և հաստատուն աւանդուեց : Եւ կամ զվասն իւրումն ժամանակին , որ ՚ի բազմաց անտի ժամանակակից գրենոյ չէ կատակս ելանէր : Յիշատակեն զսմանէ՝ ⁶⁶ Դիողորոս Սիկիլացի , Ստրաբոն , Պլինիոս , Տակիտոս , և յեա նոցա Դիողորոս Ղոնկինոս ՚ի բանն յաղագս ճարտար ասութեան : Ջյանեսէ և զՅամբլեսէ հակառակողացն Մովսիսի յեգիպտոսցւոց Յին , յետ Թալմուդականաց՝ Պլինիոս և Ապոլինոս : Եւ զօրինացն տուելոց նովառոպ այլք , նոյնպս և ⁶⁷ Պիթագորեանք : Ստրաբոն , և ՚ի Տրոգոնէ առեալ Յուստիանոս՝ զարժանին յիշատակաց ՚ի մեջ առնուն վկայութիւնս վասն օրինաց և սրբութեանն Հրէից : Սմին իրի և զոր միանգամ բանք են զԵսուայ , և զոր յառաջուստ ներմուծեալ են ՚ի ներքս յը տանելոյ եբրայական պատմութեանց , չէ օրէն ՚ի գերեւ հասնել : Ջի որ հաւատս նուիրէ Մովսիսի , (զոր չիք հար ումք ժխտել առանց անձին նախատանաց ,) պնդոտ է ապս և ըստ ամի հաւատ ընծայել գերաբուն սքանչելեաց մատին ան արձանագրելոցն ՚ի նմանէ , որ է գլխաւոր նիւթ առաջիկայ բանիս մերոյ : Բայց ան ինձ աստանօր նաև զղարմանագործութիւնս յեսնոց , այս է՝ Եղիային և այլոց իբրև անտարակոյս ճշմարտութիւնս , վասն զի չէ այն ժամանակս Հրէաստան առաւել քան զառաւելն ծանուցեալ գողով , և վնխտրութեան օրինաց նպատակ եղեալ չարախանձատելութեան մերձակայ ազանց , զիւրեան գերեւէին պատրանք՝ եթ փոխան ճշմարտունն ՚ի ներս բթեալ էին : Ջլի՛ պատմութի՛ն Յոնանու , որ եկաց ՚ի փոր

կիտին զերիս տիւս և զերիս գիշերս, ⁶⁸ Լիկափրոն և
 Էնէաս գաղացի, միայն թէ յանուն Հերքուլէսյ,
 որում զչն՝օրին ընծայել կամեցեալ անուն քարուն,
 զարարս յիշատակաց արժանիս ՚ի նա պատուաստէին
 թ գրելոյն Տակիտոսի : Եւ զինչ արդարև, բայց
 եթէ անպատիր հաւատարմութիւն պատմութեանն
 էր՝ որ միշտ ⁶⁹ զՅուլիանոս զոչ նուազ ոխերիմն ա-
 սեմ հրէականին քան քրիստոնէականին օրինաց,
 խոստովան լինիլ, թէ եղէն արդարև արք իծաշը-
 նորհք ՚ի մէջ Հրէից, և թէ՛ զոհքն Մովսիսի և
 Եղիայի երկնառաք հրով ծախեցան : Իսկ որ մեծն
 է առ բանիս հաստատուի, ոչ միայն ահագին ըս-
 պառնալիք ՚ի վր կային Հրէից որոց յանդուզն ժը-
 պրհութեամբ ձեռներէց լինէին կորզել յինքեանս
 զմարդարէութեանն, այլ և յողմք ՚ի թագաւորաց
 անտի՝ որոց մնրթ էր սովին ընդարձակել տարածել
 զփառս իւրեանց, ևս և բաղումք յիմաստուն և ՚ի
 հոյսկապ արանց, զոր օրինակ Եզր և այլք՝ չհա-
 մարձակեցան յինքեանս յանկուցանել զայն պատիւ,
 և ոչ իսկ լէ դարս ինչ նախ քան զքն վստահացաւ
 ոք ձեռն մխել ՚ի սոյն : Չէր Գար նաև այսքան
 բիւրաւոր բաղմութեան ժողովրդեան պարաւանդիլ
 ՚ի հաւատս մշտնջենսւորութեան յայտնի և զարմա-
 նագործն ⁷⁰ Ռաբիրայ, որ շողայր ՚ի լանջս քահա-
 նայապետին ցաւերումն տաճարին, եթէ չէր նոցա
 քննեալ զհաւաստիս նորուն ՚ի նախնեաց անտի :

§ 17. Եւ ՚ի Կանխատար-էց .

Համավախճան սմին և համաշօր ընթանայ փաստն
 ՚ի ցոյց իծեղէն տեսչութեան, որ ՚ի կանխակշիւ
 գուշակուեց ապագայն պատահարաց, միշտ առ եբ-
 րայականն ակնյանդիմանելոցն ասեմ ազգ : Որզան,

⁷¹անզաւակունն վերաշինողին Երիքովի, կործանունն սեղանոյն ⁷²Բեթելայ յարքայէ յովսիա անուն , իբրև երիւր հարիւր ամօք նախ քան զիրաց պատահումնն : Անուն և քաջ արարք կիւրոսի նախատես ստուգութեամբ ՚ի ⁷³յեսայեայ գուշակեցան : յԵրմեայ՝ անցք պաշարմանն երուսաղէմի ՚ի քաղդէացւոց : ՚ի ⁷⁴Դանիէլէ դարձ թագաւորունն յԱսորեստանեայց առ Մարս , առ պարս , և ՚ի նոցունց առ Աղէքսանդր մեծն անուանեալ մակեդոնացի , ում և բաժանանորդիլ որդւոցն Ղազոսի և Մելեկոսի , գէպք չարեացն հասանելեաց ժողովրդեանն իսրայելի , մանաւանդ յԱնախթուէ , այնքան ճշգրիտ՝ մինչ Պորփիրո՝ որ զառ իւրովն ժամանակաւ գտեալ հելէն մատենադրունիս չէ մարդարէսպատումն գրոց բաղդատէր՝ չզօրեաց ասել , բայց եթէ՝ զի գրածք Դանիէլի յետ պատահման իրացն իցեն հաւաքեալ : Որ և այնքան աղղէ , ո՞ղ թէ ուրաստ լիցն ոք զգիրս վերգլիսի , կամ զաւանդեալն ՚ի նմնէ սու Օգոստոսիւնեղեալկայսերաւ : Զի ո՞ղ յաղագս սորա առ հոովմայեցիս , նոյնպն և յաղագս նորա առ եբրայեցիս՝ չիք երկբայութիւն : Ա՛ծ ՚ի վն՝ նաև զազգի ազգի անվճեպ գուշակունն Մեկսիկոնացւոց և Փերուացւոց , որով նախատես եղեն յարձակման Սպանիացւոց յ՚Տն իւրեանց և թշուառութեն՝ զորս կրելոցն էին ՚ի նճնէ :

Եւ յայլ հասարակաց ,

Յարին առ սոսա նաև անթիւ երազանի . այնպէս անվթար իսկուք համապատշաճեալս ելիցն պատահարաց , և այնքան տարօտարս ՚ի մտաց երազողաց թէ յինքեանս և թէ ՚ի պատճառս իւրեանց , մինչ անմարթ է ազատ ՚ի նախատանաց անձին՝ ընծայել բը-

նական առթից : Զսոցին ստոյգ և անստերիւր
ապացոյց ունիմք յարժանաւօտ վկայից , զորս հա-
ւաքեալ⁷⁵ Տերտուղիանոսի գանձեաց ՚ի գիրս իւր յա-
ղազս հոգւոց : Իսկ⁷⁶ զհոգւոց ոչ միայն երևել մարդ-
կան , այլ և բաղում անգամ խօսել նոցա աւանդէն
պատմիչք որ գլխովին հեռի ճանաչէին ՚ի գիրահա-
ւանութեանց . չ որս և ակննատես վկայք մերոյս
գարու , որ ամօք բաղմօք կացին յճին ճէնաց , ՚ի
Մեքսիկան և յայլ տեղիս Ամերիկոյ : Չէ ինձ աստա-
նօր զանց առնել և զհասարակեալ զայնու փորձով
անմեղութեան մարդկան , որ փորձիւր անցուցանելով
մեղսապարտից չ մէջ հրաշէի խօփից , յաճախեալ
՚ի վէպս և յօրէնս Գերմանացւոց :

§ 18. Ընդ էր^o այժմ ստանէլէս ոչ .

Անշօր է առարկութիւնն եթէ պնդուցէ ոք , թէ
չ որում այսպի սքանչելիք և մարգարէութիւնք չե-
րևին ՚ի մերում ժամանակի , ապա և բնաւ ոչ : Քան-
զի շատ է ՚ի հաստատուի անձային նախախնամուէ
յառաջ բերել թէ եղեն երբեմն այնպիսիք . և
հաւանիլ ևս , զի որպէս անձամբն ստորհրդով
երբեմն ՚ի վար առ զնոսա՝ նոյնպէս և այժմ նովին
ամենխմաստ հանճարով իւրով ՚ի մարդկանէ զայն ե-
բարձ : Մանաւանդ զի՝ չէր իսկ պատշաճ օրինացն
տուելոց հանուրց՝ բնականաբար և անստուգութե
ապառնեաց միշտ անխորհուրդ յապաղել . բայց ե-
թէ՝ ուր դէպք իրացն պահանջէին . ո՞ր ժամանակն
այն , յոր երկրպագութիւն ճշմարտին անյամէն ուս-
տեք կուսէ անհետացեալ յանկեան ուրեք միայն
՚ի Հրէաստան տակաւէր . զոր և հարկ էր պատըս-
պարել յերեսաց համասփիւռ համատարած ամբա-
րըշտութեանց նորասքանչ և ատենահասնպատուք

Տրաշալեացն : Եւ կամ յայնժամ , յորում քրիստոնէականն հաւատ , (զորմէ մանու մանու հուա ընդ հուա) պահ գնէր ՚ի անէ սփռիլ տարածիլ ընդ ոլորտս տիեզերաց համօրէն :

§ 19. Եւ վասն Բաղճանալոյ տե՛րուո՛ւնց .

Երկուանան ոմանք զանձային նախախնամութենէն զայսքան անթիւ չարիս յառաջ եկեալս տեսանելով , որով իբր հեղեղաւ օ գլխովին յապականութիւն սուզեալ տատանի . զորս և գործ յառաջ նախնամութեանն վարկուցեալ հակառակորդաց պնդեն թէ գոյ Տար խափանելոյ կամ ընդ վայր հարկանելոյ նմին : Այլ դիւրաւ պատասխանի , զի որովհետև անձնիշխան արար ան զմարդն գործել բարի և զչար՝ իւրինքեան միայն պահելով ըզհարկաւոր , զանեղծ , և զանփոխ բարին , յիրաւունս չհամարէր ⁷⁷ խոչել չարեացն ներհակ ձրիցն ազատութեան , իսկ զոր միանգամ առիթք արգելանաց կացին ՚ի միջի անհակամէտ իւրատուր ազատութեանս , զոր օրինակ սահմանադրութիւնք , հրատարակոյք օրինաց և պատուիրանաց , ներքին և արտաքին աղդեցութիւնք , աւետիք և սպառնալիք , ոչ երբէք անտես առան յայ . և ոչ գործք չարեացն թողան զայրանալ սրբան և զօրէլինն , որով ոչ անախնամն երբէք անհետացաւ տեսչութիւն , և ոչ իսկ օրինացն շիջաւ ՚ի միջոյ ծանօթութիւն : Իսկ չարիքն թողեալ չ կամս էին , կամ ՚ի պատիժ սպառարձ ամբարշտաց , և կամ յուղղութիւն՝ որոց արտաքոյ ճանապարհին արդարութեան մեռօրինակ դանդաղէին . ևս և , ՚ի փորձ հայթայթելոյ նովաւ գերապանծ հայելիս համբերատար ժուժկալուեց , որովք յառաջադէմն նկրտէին միշտ առաքինիք ՚ի հանդէս :

Նաև որոց առ ժամանակ մի անտես եղեալ թուէին մեղք՝ ուսան վճարել զպատուհասն տոկոսեօք ժամանակին , զի ոչք արարին զորս աստուած չկամէր , կրեցին զորս աստուած կամեցաւ :

§ 20. Մէնէ բռնաբարել եւ զբարեւ :

Թէ մեղք երբեմն անպատուհաս մնան , և հարստահարեն զանմեղս , թէ բարիք բռնաբարուք չարագործացն հարուածեալ ոչ միայն կեանս վարեն թշուառագինս , այլ և երբեմն մահունիսատանաց համբերեն , տակաւին չէ պարտ արտասահմանել զնախահանամուռնն ՚ի մարդկեղէն արարածոց , որ այսչափ հօր և անդրդիւն փաստիւք , և վկայութիւն արանց արժանահաւատից և ստորասի և հաւաստի :

§ 21. Հոգին եւ յեփ մահու անմահ կէտց :

Եւ արդ՝ քանզի անմահ ամ տանի զիրաց մարդկանս , և չգիտէ անիրաւել միշտ արդար գոլով , ապաքէն ՚ի կնիք երկաքանչիւրոցն պարտ է մնալ դատաստանի յետ աստեացս , զի մի չարիք անպատիժ և առաքինիք անվարձ և անպսակ մնասցեն :

§ 22. Հասարակ անմահութեամբ :

՚ի հաստատուի բանիս ⁷⁸ հարկ է ցուցանել թէ հոգի անջատեալ ՚ի մարմնոյ գեռևս և անսպական մնայ : Եւ այս վաղեմի աւանդուի ՚ի նախնեաց մերոց , ապա թէ ոչ ուստի՞ այլ ածսնցեալ հաս գրեթէ առ ամ լուսաւոր ազգս : որպէս քաջայայտ տեսանի ՚ի ⁷⁹ Հովբերեան նուագաց , և ՚ի փիլիսոփայից անտի ոչ միայն յունաստանեայց՝ այլ առ և նախնին Գաղղիացւոց , զորս և Դրուիդս անուանեն , և հնդկաց՝ զորս և Բրամանս , և յայնց ևս՝ զորս յաղա-

գրս Եգիպտացւոց , Թրակացւոց , և Գերմանացւոց արձանագրեցին բազումք ՚ի պատմաբանից : Նաև յաղագս դատաստանին այ ՚ի հանդերձեալսն բազումինչ համբաւեալ լինի ոչ միայն առ Յունաստանեայս այլ և առ Եգիպտացիս և առ Հնդկաստանեայս , ոպ ուսուցանեն մեզ Ստրաբոն , Ռիոզինէս Լաէրտիոս , և Պլուտարք : Հետևի սոցին նաև աւանդուի հրայրեաց լուծման Տի , որ ոպ ՚ի նախնումն առ ⁸⁰ Հիստասպեայ և Սիբեղայց՝ նոյնպս և այժմ առ Ուլիդիոսի , Ղուկիանու , և հնդիկ Սիամացւոց տեսանի : Այներևնշան լինի սմին և արևուն յերկիր օրըստօրէն ⁸¹ մերձագրուի նկատեալ յաստեղագիտաց : Դարձեալ իբրև հասին մարդիկ զառաջինն ՚ի Վանարեան կղզիս , յԱմերիկայ , և յայլ հեռաւոր ծագս Տի , գտին անդանօր և զվասն յարութեան հոգւոց և դատաստանին տեսութիւն :

§ 23 Որո՞ճ ոչ ընդէմանայ Բան :

Չիք ինչ փնստ , որ յառաջեկեալ ՚ի բնուի ընդ վայր հարկանիցէ զայսպիսի իմն զհին աւուրց և համասփիւռ աւանդութիւն . զի զոր միանգամ հակամէտ ապականուէն տեսանեմք , ապականին կամ ՚ի դիմադրուի զօրաւորագոյն հակառակորդին , որզոն , ցրտութիւնն հալածի զօրուք ջերման : կամ ՚ի բաց բարձմանէ ենթակային , յոր վերայ ենթակայանայ իրն , որզան մակերևոյթ ապակոյ ՚ի բեկանել անդ իւրում , և կամ ՚ի պակասուի ներգործարար պատճառին , որպէս , լոյս ՚ի տարահեռացուէն արեգական : Արդ՝ և ոչ մին յայցանէ ասիլ կարէ զհոգւոյ . ոչ առաջինն , զի ոչ ինչ կարէ զմտաւ ածիլ հակառակ նմին , որոյ սեպհական յատկուի է կրել միանգամայն և ՚ի միում նուագի զոյք զներհական

սկզբունս չ իւրումն իսկ խմացական եղանակին : Եւ
 ոչ երկրորդն, զի չիք ենթակայ, յոր ենթակայա-
 նայ բնուի հոգւոյն, և թէ իցէ՝ այն ինքն է միայն
 մարմին մարդկային : Բայց զի և այս չէ՛ նր ենթա-
 կայ անդուստ հաւաստի, զի այնինչ տքնուք գոր-
 ծողութեանն նքողի մարմին, հոգին տակաւին ևս
 անտուայտուն և անկիր կայ, նա մանաւանդ⁸² զօրու-
 թիւնք մարմնոյն բազմիցս խոշտանգին ՚ի բուռն զօ-
 րութեանց գլխահարեւոյն ինքեանց, օրինակ իմն,
 աչք՝ ՚ի ճառագայթից արեգական, իսկ հոգին գե-
 րաշանցէ զսօքօք ամենակատար ուժգնուք իւրով,
 զի պատարի միշտ ՚ի վր վերին և անքննին իրաց, որ-
 գոն, տեսակաց վերացելոց յենթակայէ, ընդհանուր
 պատճառաց, սեռից, և : Զօրուիք մարմնոյն յա-
 ծին միայն զիրօք՝ տեղեալ և ժամանակալ չափե-
 րովք, իսկ հոգին անցեալ զսօքօք զանսահմանան և
 զանհասան փարի էակալ, վնկ որպէս ՚ի ներգործութե
 իւրում ոչ կախի հոգին զմարմնոյ, նոյնպէս նաև յեու-
 թեան իւրում, այլ մանրամասնաբար ճառել զայն-
 ցանէ՝ զորս ոչն տեսանեմք անհարին է, բայց եթէ
 ՚ի գործոց նոցա և զէուինն կշռեսցուք : Արդ՝ և
 ոչ իսկ երրորդ տեսակ ապականութեանն տեղիք
 գտանէ՝ աստ, զի չիք ներգործական պատճառ իմն,
 յորմէ զմշտնջենաբուղիս զիւր հոսումն ունիցի հոգին,
 ոչ կարես յառաջբերել աստանօր զճնողն, զի զոր-
 դիս երկայնակեցս տեսանեմք քան զճնողս իւրեանց,
 այլ թէ կամիցուք գտանել զպատճառն յորմէ արդա-
 րև աղբերանայ հոգիս մեր, չիք այլ՝ բայց եթէ
 նախկին և հանուր Պատճառն, որ ՚ի կողմանէ
 կարողուեցն միշտ անկարօտ՝ և ՚ի կողմանէ կամացն
 յաւերժ անփոփոխ, այս է, եթէ կամիցի՞ նժ ար-
 դարև զհոգւոյն ապականութի, հաստատի և ոչ իւրք :

§ 24. Բազումք զբոյն հասարակն :

Այո՛, և չէ հակառակն ո՛չ են թէթև ինչ հաւատ-
տիքս այսոքիկ , այսէ , ինքնիշխան ազատուի պար-
գևեալ մարդոյն յարարս իւր , ներքին մղումն առ
անմահուի , բնուն զօրուի խղճի մտաց՝ սիրոյ-
արարս իւր ՚ի գործս բարիս թէ և ՚ի տար-
ժանելիս , սո՞ք թէ խրախոյս բռնալով նմին ՚ի
նոր իմն յոյս . և չէ հակառակն տանջիչ յաղազս
չարեացն՝ զոր գործեաց , մանաւանդ ⁸³ ՚ի կէտ օրհա-
սի մահուն , որպէս թէ զգալով նորա զերկիւղ զվա-
ղահաս դատաստանին , զոր ո՛չ երբէք շիջու-
ցանել կարացին դժնդակքն ՚ի բռնակալս , թէ
պէտ և բազմիցս ՚ի փորձ եկին , որպէս ՚ի յայանի օրի-
նակաց ակն յանդիման երևի :

§ 25. Ասիւճան Տարբոյ յեփ ասպէացս
է անճոհ ին երջանկութիւն :

Որովհետև յատկուի հոգւոյն է չունիլ իւր պատ-
ճառ ապականութեան , և զի՛ ՚ի նշանաց անտի յոյ
՚ի մեղ յայտնելոց դիւրաւ մակարերի , թէ կամք
եղեն այ զի հոգին և յետ մահու անմահացի , ուր-
եմն ո՛չ այլ ինչ վտիսճան առաւել քաջապատշաճ կա-
րէ յատկանալ մարդոյ , քան զնոյն ինքն զվիճակն
երանուի : Եւ այս այն է՝ զոր կանխաւ յառաջ ազ-
դեցին Պղատոն և Պիթագորեանք , թէ՛ բարին
մարդոյ է համակերպիլ ՚ի նմանուի աստուծոյ : Եւ
արդ՝ եթէ որպիսի երջանկուի իցէ այս , կամ զիւրդ-
ստանալի , թերևս զօրիցեն մարդիկ ՚ի կարծիս ան-
ձանց ելանել , բայց եթէ գուցէ սմին նշան այ յայտ-

նու՛ջն ծանուցեալ՝ պահտ է ընդունիլ զնոյն իբրև
ամենակատար և զլի՛ ճշմարտութիւն :

§ 26 Եւ ՚ի գիւտ նորուն պարտ է յեզ գրտնէլ զհասարն
ճշմարիտ .

Արդ՝ որովհետև հաւատն քնի ՚ի վեր քան զամ
խոստանայ պարգևել մեզ զայն , եթէ հաւան ու
մեք [Թուիցի , [Թէ ո՛չ . երկրորդ մասին առաջիկայ
գործոյս հարկ է քննել :



ՀՈԳՈՆԻ ԳՐՈՎՏԻՈՍԻ

Քրիստոնէական Ճշմարտութեան

Գ Ի Ր Ք Բ

§ 1. Թէ այս հակագիր Կաթողիկոսի է
Քրիստոսականիս Հասարակ :

Վախճան այսորիկ երկրորդիս գրոց, (յետ զազերս մաղթանացս ուղղելոյ առնոյն ինքն քն թագաւորն երկնից, զի առատաձեռնեացէ առմեզ զշնորհաց Հոգւոյն իւրոյ զնպաստ բաւականս առնել զմեզ յայսպիսի մեծ իմն գործոյս կատարօն,) ոչ է խօսիլ զլէհանուր հանգամանաց քնական հաւատոյս, այլ ցուցանել, թէ կրօն բարեպաշտուէս մերոյ է արգարև ամենաճշմարիտ և ուղղափառագոյն, զոր և այսպէս սկսանիլ ճահին է :

§ 2. Եկաց Յետոս ոհն :

Արդ՝ զերևիլ յնի նազովրացւոյ առ թագաւորուք Հռովմայեցւոց տիբերեայ կայսեր ոչ միայն քրիստոնէայք ցանեալք և ցնդեալք լէ նմ ծագս Քի, այլ և Հրէայք առ հասարակ, և մանաւանդ որք ՚ի նոցանէն մատենագիրք հանդիսացան՝ անվկանդ խոստովանին : Ջնոյն և հեթանոսք հաստատեն, որք ոչ գքրիստոսականիս, և ոչ Հրէականին հաւատոց եղեն պատմաբանք ողի են⁸⁴ Սուիդոն, Տակիտոս, Պլինիոս կրտսեր, և յետնոցս բազումք այլ :

Նոյն և Տակո- համբերեաց :

Չնոյն Յմ խաչեալ ՚ի Պիղատոսէ Պոնտացոյ դատաւորէն Հրէաստանի խոստովանին քրիստոնէսայք, [Թէպի՞ն և անարգ իմն երևէր երկրպագանել նց սյանքսի նն, զնոյն և հրէսայք լինին, [Թէպի՞ն տգէտ չէն, եթէ չ քանի՞ վատանունութ քան, և քանի՞ անհաշտ ատելութ Էն ընդ քրիստոնէսայս ՚ի նոցին իշխանութ կալով ՚ի տեղիս տեղիս՝ յիշս լինելոյ նախահարց իւրեանց գործի սպանմանն՝ ՚ի Պիղատոսէ: Նաև հեթանոսաց պատմաբանք, զորս արդէն ՚ի վերադոյնդ յիշեցուք զնոյն սուանդէն բան յապագայս յիշատակաց: Եւ նոյն իսկ⁸⁵ գործք Պիղատոսի յուրում վիպագրէին պատհարք իրացս սյսոցիկ՝ յետ բաշում ժամանակաց ամբողջ կացին ՚ի միջի, զոր և բաշմիցս քրիստոնէսայք յատեան կոչեցին, որում ոչ Յուլիանոս և ոչ այլ հակառակորդք ճշմարտունէն լեզւէմ զինեցան: Վնկ չիք պատմութ քան զայս հաւատարմագոյն, որ հաստատեալն է վիպութ ասքան բաշմուն, չասեմ մարդկան և եթ, այլև աղգաց և աշանց դիմաբաժանելոց յինքեանս: Եւ [Թերևս այս սյսպէս սակայն տակաւին տեսանեմք զնա ուց զտէր երկրպագեալ չ ամենայն տիեզերս:

§ 3. Նաև յարանց էմաստնոց :

Ոչ ՚ի ժամանակս մեր և եթ և ոչ որ փոքր մի յառաջ անց, այլ ՚ի նոյն իսկ ՚ի դարն առաջին զինի իրացս պատահելոց՝ գնդ դու չ իշխանութն Ներոնի չ վկայելոյն Տակիտոսի և այլոց՝ բաշումք ՚ի հաւատացելոցն քնի անվրէպ խոստովանութեամբ դաւանութեանս չողան:

§ 4. Եւ այն վտան սրունկելագործութեանն :

Բաղումք եղեն յերկրպագուս քնի ՚ի զանազան ժամանակս արք քաջախորհուրդք և յիմաստից անտի ոչ իսկ տգիտունք, ուղիք էին, թող զհրէսոյս՝ Սերգիոս Սիպրացի փոխանակ բռեշխին, Դիոնէսիոս Արիսպագացի, Պողիկարպոս վկայ, Յուստիանոս, Երինիոս, Աթենագորսոս, Որոգինէս, Տերտուղիտանոս, կղէմէս Աղեքսանդրացի, և այսպս՝ բազումք : Արդ՝ զինչ այսպիսի հոյակապ արանց կայր առ ի թ առն ՚ի մահ խաչին նախատանաց բւեռելոյ զանձինս պաշտօնատար նուիրել, մանաւանդ թէ և ծնելոցս և սնելոցս սոցին ՚ի խառն ՚ի խուռն կրօնս, ուր ոչ փառք քրիստոնէութեն կային, և ոչ պատիւ մարմնի և շահ, զինչ այլ ուրեմն զմտաւ ածիլ կարէ աստանօր, քան եթէ՛ զի ՚ի ձեռն փութոյ պնդութե քննութեն, այնպիսեացն ասեմ, որոց մարթէր ուշիմս և հանճարաւորս առնել զմարդիկ յիրս մեծի զգուշալեացս՝ գտին զանսուտ և զանյողդողդ համբաւ համատարած սքանչելեաց նորուն, և անդրդիւն վկայութե ստուգեցին զմիայն բանիւ բժշկել նորա, և այն՝ հրապարակաւ, զախոս ցաւագինս և երկարամանակեայս . զ ՚ի ծնէ կուրին զօրուի տեսանելեաց անդրէն շնորհել, զնկանաց՝ և այն՝ ոչ միանգամ միայն ՚ի յագուրդ հազարաց և հազարաց ակնակառոյց վկայիցն ասեմ սքանչելեացն ածեցուի, այլ բազմիցս . զմեռելոց ՚ի կեանս վերածութիւն . և զոր այլք ՚ի սոցին սակի՝ ոչ սակաւք :

§ 5. Զորս լէ՛ պարտ ասլ բնական էն համ դիւանան
ուրբեցութեան՝ ոչլ լէ՛ մարին այ :

Այնքան ստոյգ և աննահանջելի են հաւաստիք համբաւոյս այսմիկ, մինչ ոչ⁸⁶ Սեղոսս և ոչ Յուլիանոս

՚ի գրեւ անդ իւրեանց զբրիստոսական հաւատոյս
 ժպրհեցան ուրանալ զ ՚ի քնէ հրաշագործ սքան-
 չելիս . զորոց և հրէայք իսկ ՚ի թալմուդս իւրեանց
 բացայայտ աւանդեցին : Արդ եթէ զորմէ են բանք
 մեր չիցեն արդարև գործ նիւթեղէն իմն զօրու-
 թեան, յայտ անտուստ լինի, զի կոչին հրաշք՝ կամ
 սքանչելիք : Դարձեալ զի անՖարին է բնութե-
 նական զօրութիւն չ հետանյն կամ սոսկ բանիւ և ձե-
 ուին հպմամբ, զչարատանջ ախտս ցաւոց ՚ի բնց
 փարատել : Եւ եթէ Ֆարին ինչ լինէր վերբերել սո-
 ցին առ բնական իմն զօրուի, վաղու ևս նոքա՝ որք
 թշնամիս քնի ունէին զինքեանս՝ մինչ յՅի աստ .
 և կամ ոչք յետ նորա՝ ատելիք աւետարանի նորա
 գտան, կարէին փութով ՚ի դիմի հարկանել : Հա-
 ւաստի դարձեալ համանման բայց և քանջ ևս ապա-
 ցուցութիւն, թէ չէին սք գործածք հմայից, քանզի իմ
 մեծի մասին հրապարակաւ և ակն յանդիման ամե-
 նայն ժողովրդեանն կատարեցան . յորս բաշումք
 գտանէին արք իոհեմք, բայց և չարակամք քնի . և
 քննել կարէին զայն ամ . ուր թողցուք զի նոյն գործք
 հանապաղ վերակրկնէին . և արդ ինք նոցին ոչ առ-
 ժամանակեայք էին՝ այլ մշտնընտաւորք : Չոյս ամ
 ուղիղ կշռադատել մեր եզրակացուցանեմք իմ նոցին
 իսկ խոստովանուէն հրէից, թէ՛ հրաշագործութիւնքս
 այս՝ յառաջ եկին ՚ի գերմարդկային իմն զօրուի . ք
 ՚ի բարւոյ և կամ ՚ի չարի : Այլ թէ ՚ի չար ոգւոց
 անտի ոչ՝ հաւաստի աստուստ, զի վարդապետուի
 քնի, որոյ ՚ի վկայուի կատարեցան սքանչելիքս,
 ամիւ ամի հակառակ կայր չարեացդ : Չի խափանէր
 զպաշտօն դիւաց . և ՚ի բնց իսէր զմարդիկ յանառա-
 կուի և ՚ի զեղծ վարուց՝ իբրև ՚ի հաճոյական պաշ-
 տամանց սյնպիսին ոգւոց : Չոյն և անցք ճշմարտեն .

զի ուր ուրէք ընկալաւ վարդապետուին սոյս՝ պաշ-
 տամունք⁸⁸ դիւաց և դիւթք գլխովին անհետացան .
 և մին միայն Թժ երկրպագեալ պաշտեցաւ յարհա-
 մարհումս ստնյի . զոյր և գալստեամբն քնի բեկեալ
 զօրութիւն նախնքն⁸⁹ Պորփիր հաւտատէ : Արի
 տարահաւան թուի դիւաց սոյնքան ապիմաստ լինիլ ,
 մինչ զնոյն գործել , և այն բազում անգամ , ուստի
 յԽՂ ելանէին իւր ոչ փառք և պատիւ , այլ չ հակա-
 ոական կորուստ անհարին , և անարգանք թշուա-
 ոագին : Ապա եթէ այլ կերպ՝ զխնորդ անամենար-
 դար և ամենաբարի բնութեան թողուլ մարդկանց
 մեկուսացելոցն ՚ի չարեաց , և երկեւղածաց իւրոց .
 ոպիք էին նախկին աշակերտք քնի (որոց անմեղուն
 քարող անարատ վարք և վն արդարուէն կրեալ
 չարչարանքն եղեն) փորձիլ խորամանկ իւրբեութք
 բանասարկուին : Ասիցես՞ , այնքի գործոց մալթ էր
 յԽՂ գալ նաև ՚ի բարի հոգւոց , խոնարհ ելոցն քան
 զԹժ , (Պտսինեմ .) ահա՛ զնոյն խոտովանիս՝ զոր և
 ես , թէ նոյն սքանչելիք հաճոյք էին ան և ամենա-
 վայելուչք փնց մեծուէ նորա , զի գործ բարեաց
 հոգւոցն է առնել զհաճոյսն ան միշտ՝ ՚ի փառս նր :
 Թողումք առարկել նաև թէ եղեն ՚ի գործոց անտի
 քնի զորս Թժ ինքնին զարմանագործեաց , որգոն մե-
 ուելոց յաւէտ քան միումն ՚ի կեանս վերակենդա-
 նուի : Բայց արդ՝ Թժ ոչ ինքնին առնէ հրաշս և ոչ
 այլոց թուլատրէ ՚ի նոյն առանց պատճառի , զի ոչ
 պատկանի իմաստուն օրէնսդրի առանց հարկեցու-
 ցանող առթից ջրել զիւր օրէնս : Ապաքէն այլ ուրեմն
 չիք պատճառ սքանչելեացս սոյսոցիկ , քան եթէ
 առարկեալն ՚ի քնէ , այս է , զի եղիցին վկայք վար-
 դապետուէ իւրոյ : Եւ ոչ որ յանդիման կացին մեծա-
 մեծացն ան , զայլ իմն քան զայս պատճառ զմտաւ ա-

ծին, զի որովհետև ը նախասուէ մեբում, բազումք եղեն ՚ի նոսա բարեպաշտ որեար, մեղաց պարտապան զանձինս առնեմք, եթէ պնդեսցուք թէ անձ ՚ի պատրանս մարդկան և եթ գործէր զնսին: Եւ թերևս այսու աղագաւ բազումք ՚ի Հրէից սնտի որք ժամանակակիցն իսկ էին յնի, և պնդապահք օրինացն ՚ի Մովսիսէ աւանդելոց, կամիմ զՆազովրացիս և Իբրանացիս, ոչ փանաքի ոք զնաքան զվարդապետ ոմն առաքեալ յերկնից՝ ընկալան:

§ 6. Ի յարուէն քնի հաստատեալ յիմնասաք
 զնսնիս:

Ածասրաշ սքանչելեացն քնի ընձեռնէ հաստատուի նորին յետ խաչի մահուն և թաղման անձառելի յարուի. զոր ոչ միայն իբրև զճշմարիտ աւանդուի, այլ և իբրև զգլխաւոր հիմն հաւատոյ իւրեանց յատեան հանին քրիստոնէսոյք ընդ ամենայն դարս և ը ամ տեղիս: Որում չէր մարթ յամբոկ գալ եթէ նախնի վարդապետք ճշմարտութեանս քան՝ ոչ կրթէին ՚ի նոյն զաշակերտեալն իւրեանց: Բայց և չէր Տար նոցա համոզել ՚ի ճշմարտուի սորին զարս կիրթս և արդարակորովս ՚ի դառաստանի, եթէ ոչ հաւաստէին զինքեանս ականատես վկայս սքանչելեացս այսոցիկ: Աս զի՝ ունայն յայտի հաստատուէց ոչ ոք ՚ի խոհականաց հաւատ նուիրէր սոցին, մանաւանդ ՚ի ժամանակի անդ այնմիկ, ուրանօր անալ այսպիսեաց լին էր մեծամեծ և անՏարին վտանգօք: Այլ այս հիմնեալ հաստատեցաւ յանշուշտ և յանկեղծ հաւատարմուի նոցին ստուգեալ ՚ի գրոց իւրեանց, ՚ի հետևողաց նոցին վարդապետաց, և ՚ի գրոց անտի ևս՝ ⁹⁰ հանողաց զընթերցուս իւրեանց առ հինգ հարիւրն՝ որ ականատես եղեալ ԅնի յետ ՚ի մեռե

լոց յարութեանն վկայեցին ճշմարտուն : Ստոց չէր
Տար բողոքել առ այսչափ բազմութիւ վկայս , և ոչ
խկ այսքան խուռն բազմունք խմբիլ 'ի սուտ վկայ-
ութիւն : Բայց դիցուք թէ՛ բաց յերկոտասանից
անտի նախընթաց քարոզչացն ասեմ քնական հաւա-
տոյս չէին այլվկայք . սակայն և այնպէս դեռ ևս
շատ էին . զի ձրի չարանայ ոչ ոք : 'Ի պատրելոյ ոչ
կարէին ակնունիլ փառաց , ուր ամ փառք և պա-
տիւք և մեծունք արբանեկէին միայն Հրէից և Հե-
թանոսաց . յորոց ինքեանք ընդ հակառակն միշտ
թշնամանեալ և հարուածեալ լրլիէին վասն վկայու-
թեանս այսորիկ : Ոչ և հարստունց՝ զի այս խոստո-
վանուն զբարեաց արտաքնոց՝ եթէ գոյր արդարև
նշանախեց ինչ տոկոսեօք հանդերձ տուժէր : Եւ
եթէ այսպէս ոչ , դեռ տակաւին ևս չէր մարթ-
նոցա քարոզել զաւետարանն քնի , առանց յանձանց
'ի բաց փարատելոյ զամ հօգս բարեացն կենցաղա-
կանաց : Ոչ և շահ անձանց՝ զի նոյն իսկ քարոզուի
աւետարանին առաջնորդ լինէր նոցուն 'ի ցաւս , 'ի
տանջանս , 'ի վիշտս , յանձկութիւնս , 'ի սով , 'ի
ծարաւ , 'ի նախատինս , 'ի կապանս , և 'ի մահ իսկ
գլխովին : Ոչ նաև փառասիրութիւն կարաց շարժել
'ի ստուի զպարզ և զանխարդախ մարդիկն , որոց
կեանք միանգամայն և վարդապետունք ատեցողք
ամպարտաւանունեցն երեւէին , ճանապարհ արարեալ
ը ամ բռնունիս կրից : Թող զի , չէր այլ օրինակ ակ-
նունիլ տարածունք , քարոզունցս , որում միշտ հա-
կառակ կայր բնուի հակամէտ յիւր շահ , և բռ-
նունք թագաւորաց ը ամ տեղիս , բայց եթէ 'ի
ձեռն անսուտ խոստմանցն ւյ և եթ : Մանաւանդ
թէ՛ և զկարծեցեալս այս համբաւ փառասիրուն
ոչ իւրք կարէին խոստանալ անձանց մնայուն ,

զի վասն ծածկելոյն Աստուծոյ ՚ի նոցանէ զիւր խոր-
հուրդ յայս նիւթ⁹¹ համարեցան թէ վախճան Յիս
մերձ էր . ուղ երևի ՚ի գրոց նց և հետևողաց նոցին :
Ուրեմն մնայ ասել թէ նք ստեցին ճշմարտութեան
առ պաշտպանելոյ հաւատոցն իւրեանց : Բայց մեք
եթէ ուղիղ զիրան քննեսցուք, ոչ տեսանեմք զրպար-
տուէս ստորոգիլ զնոցանէ, զի դիցուք թէ զիւրե-
անց հաւատն նք կամ ճշմարիտ վարկան, և կամ ոչ .
եթէ չէր նոցա ստուգեալ զսոյն գեր ՚ի վերոյ
քան զամ, ՚ի միջոյ ամ պաշտամանց՝ որք աներկե-
անքն էին և մեծարանօք լիք, ոչ ընտրէին
զսոյն : Եթէ ճանաչէին զսա ճշմարիտ, սակայն և
այնպս յայտնի ոչ խոտտովանէին, եթէ ոչ համա-
րէին հարկաւոր զնոյն : Գարձել՝ զի կարէին նախա-
գուշակ լինիլ, ուղ և յետոյ ՚ի փորձոյ իսկ ուսան .
թէ մահ անթիւ բնուէ զհետ գայր սմին, որում և
առանց զօրաւորագոյն պատճառի շարժառիթ լինիլ
զսնննիսս իւրեանց պարտաւոր կացուցանէին քրէա-
կան յանցանաց : Իսկ թէ հաւատասյին զսա ճշմարիտ,
և գերագոյն համօրէն կրօնից մարդկան, նաև խոս-
տովանելի յետ մահու վարդապետին իւրեանց, տա-
կալին ևս անմարթի լինէր նոցա ՚ի գլուխ հանել
զնոյն, եթէ վրիպէր զնն յաղագս յարուէ իւրոյ վար-
դապետի նոցին խոստումն, որ բաւէր արանց հան-
ճարաւորաց լքանել նաև զ յառաջագոյն ընկալեալ
հաւատս իւրեանց : Գարձեալ զի ամօրէնք մանաւանդ
Քրիստոնէականն⁹² արգելուն զստութիւն յատկապս ՚ի
նիւթս հաւատալեաց, ապա՝ ոչ կարէին նք ՚ի սեր
այսպիսի անջրելի օրինաց՝ համարձակ զստութե-
թեւածել : Գարձեալ զի այնպիսի ոմանք էին Ա-
ռաքեալքն սքք և զայնքան ողջանարատ ամբիծ
կեանս վարեցին, մինչ և հակառակորդք նոցին

չկարացին կեղտ դնել ՚ի նոսա և կամ դիմադարձ
 գտանիլ : Ձի անմեղ պարզունի հոգւոյ յաւէտ փայլէր
 առ նս մանաւանդ թէ և բարբ անմասն բողորովին ՚ի
 մեքենայելոյ զսուտ , զի առ հասարակ չարաչար
 խոշտանգանս , և բազումք ևս այն էին որք զանհա-
 րին մահունս յանձնառին վն վկայութեան յարու-
 թեանն յսի : Արդարև անհնար առն կատարելամտի
 էր համբերել այսքան բիրաւոր չարչարանաց միայն
 վասն ՚ի ներքուստ յլացեալ կարծեացն , իսկ և վասն
 ստոց կամ իբրև զսուտ ձեացելոց այսչափ չէ երկար
 վշտամբեր լինիլ ո՛չ միումն և եթ , այլ բազմաց
 անհաւան ստուէ ելոց , յայտնի անհաւատսելաց ինձ
 երևի բան : Բայց թէ չէիննք անմիտք և ցնդունք ,
 կեանք և գրուածք նցին ակն յանդիման վկայեն :
 Արինչ միանգամ զայլոցն առաջնոց նոյն և ⁹³ զՊողոսէ
 ասիլ կարէ . որ զքնի յերկինս թագաւորել զգալի
 աչք տեսեալ անշուշտ ճառագրեաց : Սա ո՛չ միայն
 հրէական օրինացն էր անկարօտ ուսման , այլ և փա-
 ռաւոր ՚ի մեջ համօրէն աղգին ճանաչիւր , եթէ զու-
 ղին զնախնեաց իւրոց դնացեալ էր : Բայց չէ հա-
 կառակն , ո՛չ միայն զանձն նպատակ կացոյց ատելուէ
 աղգատոհմի իւրոյ վն խոստովանուէս սյսմիկ , և
 զբազմավտանգ և զդժնդակ ճանապարհորդութեանս
 յանձն առ գրեթէ չէ համօրէն թեալոխսելովն ,
 այլ և ՚ի վերջոյ համբերել դառնագին մահուն
 նախատանաց արժան դատեցաւ :

§ 7. Որոյ անէպրէէ Բո-է յարո-բէ-ն :

Եւ իրաւի զհաւաստիս այսքանեաց և սյսպիսեաց
 երևելի վկայուէց ժխտել ո՛չ ոք ժպրհի , բայց զի
 ասացէ թէ նիւթ բանիս այնպիսի իմն է , մինչ ո՛չ
 ինչ եղանակաւ կարել ՚ի յանկ ելանել , զի ող և

ասինն , կրեն յինքեանս զանհարին վէճս : Այլ այս
 94 ոչ կարէ ստորագիլ զառաջիկայ նիւթոյս : Կարէր
 արդեօք , եթէ պնդէր ոք , թէ այս ինչ մարդ կեն
 դանի՝ միանգամայն և մեռեալ իցէ ՚ի միւսմ կիտի :
 Բայց եթէ զոմանս ՚ի մահուանէ՝ ՚ի կեանս վերակեն
 ցաղեալս ասեմք զօրուք այնորիկ , որ նախ կեանս
 մարդկան պարգևեաց՝ չգիտեմ , անմարթուք զինչ
 տեղիք : Զի և ոչ իմաստունքն իսկ չէ դարս դա
 րուց անկարելի գրեցին , այնինչ Արայի Հայկազն
 ւոյ զնոյն դէպ վիպագրէ Պլատոն . կնոջ ուրումն Հե
 րակլիդէս Պոնդացի . Արիստիդէայ՝ Երուտոս , և
 այլոց՝ Պլուտարք , որք թէ սուտ , և թէ ճշմարիտ ,
 յայտ առնեն մեզ զհարծիս գիտնոց հաւան սմին լեալ :

Ի որում յարուէն խն հասարակ ճշմարտութիւն

Վարդապետութեան նորին :

Արդ՝ զի անկարելի չէր քնի ՚ի մեռելոց յարուէ ,
 և զի զնոյն հաստատեն վկայք արժանահաւատք ,
 մինչ և Բիքայի վարդապետին հրէից պարտիլնո
 քօք ՚ի հաւանութիւն ճշմարտութեանն , և մանա
 ւանդ՝ զի քն իւրոց և օտարացն խոստովանութեան
 զնոր օրէնս ուսոյց ոնք թէ անձային պատուիրանաւ ,
 զհետ գայ ուրեմն , թէ արդարև ճշմարիտ իցէ վար
 դապետութիւն : Ատանդի՝ ներհակ այ արդարուէ և ի
 մաստուէ էր զարդարել զնա այսքան գերբնական
 պարգևօք , որ ՚ի նիւթ այսպիսի զգուշալի պաշտա
 ման մեղսապարտ խաբէուէ գտանէր : Եւ այս յայն
 ժամ մանաւանդ ուր 95 յառաջ քան զչարչարանս իւր
 անդիման կացոյց ընտրելոց իւրոց զմահուիւր , զտեսակ
 մահուն , զվերստին յարուէ և զգալոցն յառաջագոյն ,
 զի եղիցին նք ՚ի վկայս բանիցն ճշմարտութեան :

§ 8. Հառապ զամենեւեռմէ գերազանցէ :

Փաստք սորին իւրովին բղխին ՚ի գործոց անտի , այլ մեք յաւէտ ՚ի նոսին որք անընդմիջապէս ծաւալին ՚ի վարդապետութեանս՝ կանխեսցուք : Արդ՝ պարտ է կամ ՚ի սպառ ուրանալ զամ աղգս ամեղէն պաշտամանց , (զոր չէ Տար մարդոյ հաւատողի էութեան և նախախնամութեանն այ , գերազանցութեան մարդկային մտաց , ձրից ընտրուեք բարւոյ և չարի , հատուցման պակաս և պատժոց զմտաւ ամեղ :) և կամ ընդունիլ միայն զայս օրէն : Ոչ միայն յաղագս արտաքին գործոցն ցարդ ՚ի մէջ բերելոց , այլ և ուրոց ներքին և անդասին են հաւատոյս առարկայք : Քանզի չէ ամ դարս ՚ի մէջ համօրէն աղգաց և ազանց ոչ երբէք կացին կրօնք սմին գերազանց , եթէ մեծութի վարձուցն , եթէ վսեմութի պատուիրանացն , և թէ եղանակին որով աւանդեցան տարածիլ աստուածահրաշն սքանչելութօք :

§ 9. Խոստացէալ վրձոցն մեծութեան :

Ժամ հաս մեզ ՚ի վարձուց անտի , քի ՚ի վախճանէն սահմանելոյ մարդկան սկսանիլ աւանիկ . զի վախճան առնելեացն է ը առածին հասարակաց նախկին նպատակ կամաց : Մովսէս ՚ի կարգել իւրում օրէնս Հրէից՝ եթէ աչալուրջ զգուշութի զնին հանգամանացն յառիցուք , արտաքոյ բարեաց կենցաղականաց ⁹⁶ որ այնինքն են պողաւէտուի երկրի , հացալից հարստուի , յաղթուի ՚ի վր թշնամեաց , երկայն և երջանիկ կեանք , յոյս սերնդոց նոցա բարութի հանդերձ յաջորդելոյ հարց իւրեանց , ոչ ինչ այլ խոստանայ օրինապահաց իւրոց : Եւ եթէ գուցեն ինչ յաւէտ քան զոր ասացաքս , այնքան չէ աղօս

և ՚ի հարեանցի անցանին, մինչ ՚ի ձեռն իմաստուն փաստից հարկիւ դերեւել նոցին : Որում այս իսկ է հղօր ապացոյց, [Թէ ըզէ՞ր բազումք, որ աշակերտք օրինացն մովսիսի ճանաչէին, որդոն Սաղուկեցիք՝ փարատեցին յանձանց ՚ի բանց զամ յոյսս սկնկալուէ բարեաց յետ աստեացս : Իսկ առ յոյնս՝ յորս ծաւալեաց գետունի ՚ի Քարդէացւոց և ՚ի յեգիպտացւոց՝ [Թէ պէտեւ գտան ոմանք՝ որք մնային յետ աստեացս լաւագոյն իմն վիճակի, սակայն և այնպս ⁹⁷ բովանդակ յոյսնոցին յեցեալ էր ՚ի կարծ ՚ի կարծ սնտոխ, ոպ երեւի ՚ի վէճս Սոկրատայ ևս և ՚ի գրեանս Տուղղիոսի, Սենեքայ, և այլոց : Որք [Թէ պէտեւ փոյթ մեծ կալան, այլ իրօք գտանել զհաւաստիս ՚ի դորին ճշմարտուի չկարացին ստուգիւ, և զորս միանգամայն դրականօրէն սուանդեցին, ոչ այնքան մարդոյ որքան [Թէ ⁹⁸ անբանից պատկանէին : Առ որ հայելով ոմանց [Թերեւս՝ անդեցին զհոգւոց ՚ի մարդկանէ յանասունս և յանասնոց ՚ի մարդիկ դարձադարձ փոփոխուի : Դարձեալ զի որովհետեւ ոչ կարացին եզրակացուցանել զնոյն ՚ի վկայուէց կամ ՚ի ձեռն բարձրագոյն պատճառաց, ոպ և ոչ ուրաստ լինիլ ե[Թէ գոյ վիճակ իմն նախասահմանեալ մարդկան, բռնադեցան ոմանք ասել ՚ի հարկէ, [Թէ ⁹⁹ առաքինուին իցէ միայն վարձ իւր և [Թէ՝ իմաստունն է միայն երջանիկ, [Թէ և ՚ի հրացելցու Փաղարիսի : Բայց այլք՝ մարդկօրէն ևս դատելով քան անասնօրէն ՚ի բաց մերժեցին զայս կեղծիս, և ոչ առանց բանաւոր փաստից, բարևք իմն զմտաւածելով [Թէ երջանկուիք՝ մանաւանդ գերակատարն ՚ի նոցանէ, (հայելով միայն ՚ի Տրամունս բառից առանց զանաղանուէ իմաստիցն,) ոչ կարեն կայանալ յայնմ, որում զհետ գան բազմադէտ վտանգա-

նի, անհարին կորուստք, չարչարանք, տանջանք, վիշտք, և մահ գլխովին: Ուտի և ինքեանք հիմեցին զնոյն յղգայական բողձանս: Բայց և զայն ջրեցին՝ որք ջրեցինն, իբրև զպականարար ժանտախտս առաքինուէց, զորոց զտերմանս արմատացեալ ունիւք ՚ի սրտի՝ և իբրև զնուստարարս մարդկան ազնուականին հասելոյ վիճակին տսեմ, ՚ի հաւասարուի անբան անասնոց, որք երկապիրշ ցանկուքքն զառածե՛լ՝ զօրէին նշմարել և զո՛չ ինչ անդրքան զստորին և զհողեղէն բարիս: Ընդ այսքան բազմամանուած վարանս տարակուսանաց ծփեալ երէրէր աղգ մարդկան, այն ինչ քն որդին այ եցոյց նոցա զճմարիտ վախճանն իւրեանց, խոստանալով իւրոցն հետևողաց յարազուարժ կենդանուի ո՛չ միայն անցաւ, անվիշտ և անմահ, այլև յարակցեալ յաւերժանպատում ուրախուքք: Եւ այս ոչ եթէ միոյ մասին մարդոց և եթէ՛ հոգւոյն, զորոց երջանկուէն էր՝ որ ՚ի կարծիս, և էր՝ որ յաւանդուին տարութերէր ՚ի հունմն յոյս ինչ, սյլ նաև մարմնոյն: Եւ կարիքաջ յիրաւի, քանզի մարմին՝ որ բազում անդամ կրէր զրկանս չարչարանս և զմահ վն անձային օրինաց, մի և ՚ի պսակաց վարձուն հատուցման անմանն ելցէ: Նաև խոստացեալն մեզ երանութիւնք ո՛չ են սինք ինչ ո՞պ խնձոյքն՝ որոց միան յետ աստեացս հեշտք եբրայեցւոց. կամ իբրև զգրկանս հրեղէն հուրեաց, զորս անձանց խոստանան մահմետականք. զի եդան սօքին ՚ի պէտս մահկանացու բնութեանս յապտի կեանս մեր, մին՝ ՚ի պահ պանուի կենաց մասնաւոր արարածոց, և միւսն՝ ՚ի մշտնջենաւորուի տեսակաց նոցին: Այլ մարմին մեր ստանայ յայնժամ յարատև զիւր զօրութիւն. և լուսափայլուի գեղոյ երեսացն գերաշանցէ քան զգեղ

ամենագեղ աստեղաց երկնից : Միտք՝ զլրումն գիտութեան և նախախնամութեանն ւոյ , որով անխաբ իսկութեան տեսանեն նաև զարդիս ծածկեալն յինքեանց : Վամք՝ յանարուեստ և յանճառ երանութեան , մանաւանդ ՚ի տեսութեան անդ ւոյ՝ շնանին հանապազորէ հիացմամբ և օրհնութեամբ : Միանգամայն ասացից , այնքան անճառ են՝ անհաս և բնազանց բարիք կենացն հանդերձելոց , մինչ ոչ ինչ պատուականագոյնքան զնոսա կարել զմտաւ ածիլ , գոգ դու համեմատութեամբ ամենալաւ բարեաց կենցաղոյս :

§ 10 Հերի՛ք թէ Գործի՛ն Վերանորոգել ոչ էարէն :

Բաց ՚ի դիմադրութեամբ , զոր ՚ի վերագոյնդ հերքեցաք , սովորի առարկիլ և այս թէ՛ մարմին մարդկան յետ ապականութեան իւրում , այլ ևս չնորոգի յառաջին կերպարան իւր : Այլ այս հակառակ բանին է , զի մինչ գրեթէ ամ փիլիսոփայք միաձայն հաստատեն թէ նիւթ որքան և փոփոխիցի , դեռ ևս մնացեալ տարր նր կենթակայանայ բիւրազան ձևացութեց , ով ապա առարկել զօրիցէ , թէ կամ ամ անգէտ իցէ վայրացն , յորս մասունք տարերցն պատկանելոց մարդկային մարմնոյս հաւաքել պահին , թէ և յանչափս հեռաւորաց . և կամ անբաւական վերադարձուցանել զնս և վերստին միաւորել . և զնոյն առնել չէ՞ զոր և վերլուծականք ՚ի քրայս հալոցաց իւրեանց և ՚ի ձուլունս՝ բաղադրելով զհամանիւթ մասունս չէ միմեանս : Զի և ՚ի բնականս է տեսանել օրինակս ոչ սակաւ , ուր տեսակք իրաց որքան և փոխինն , դեռ ևս դառնան ՚ի սեպհական իւրեանց ձև , օրինակ իմն , սերմանք բուսոց և կենդանեաց : Աստուստ և ոչ իսկ կնճիռն ՚ի բզմց առաջարկեալ դժուարալոյծ թուի ինձ , իբր այն թէ՛ մարմին մարդկա-

յին յետ լինելոյ կեր կենդանեաց, ուտին դարձեալ
 'ի մարդկանէ. քղի մեծագոյն մասունք կերակրոց
 փոխադրին ոչ եթէ յանդամ մարմնոյն, այլ յաւեր-
 լածս, 'ի մարմնս, 'ի լեզուս, 'ի թուքս, և 'ի լորձունս,
 և շատ ևս այնք են՝ որք ծախին հիւանդութիւնս, ներ-
 քին ջերմութիւն և մշտաբաղի շնչմամբ օդոց: Եւ թէ
 այս այսպէս, ապա Ի՞նչ որ խնամ տանի անասնոց զի
 մի՛ կորիցեն. այնպիսի իմն յատկացուցանէ և զմարմ-
 նոց մարդկան խնամ, մինչ՝ ոչ ինչ մասին նորա ի զի-
 սաց կերակուր այլոց հանդերձելոցն փոխիլ յետեւնն,
 ող և թոյն և թիւրակէս ոչ փոխին երբէք 'ի մար-
 մն մարդկան. այն և առաւել քան զսոյն. վասն զի
 մարմն մարդոյ չտուալ յուտեստ մարդկան: Այլ
 թէ այլ ազգ՝ տակաւին ևս բացբարձումն պատկանե-
 լոց միոյն չմիջէր զամբողջութի միուսոյն: Ասան զի և
 մեծամեծ փոփոխութիւնք պատահին միշտ¹⁰⁰ 'ի մասնկունս
 Քի: Ոչ՞ աւանիկ¹⁰² թիթեոն 'ի ճծի ինչ, և էութիւնք
 ծառոց և որթուց 'ի փանաքին պարափակին 'ի սեր-
 ման յորոց արաստիւրեալ հաստատին յիւրեանց ստոյգ
 մեծութիւն: Արդ՝ որովհետև այս ազգ փաստից բազ-
 միցս առարկին առանց իրիք վնասուց, մանաւաղ զի
 և արք իմաստունք, ող 'ի քաղեացոց¹⁰³ Ջրադաշտ
 գրեթէ առ հասարակ Իմ¹⁰⁴ Ստոյիկեանք, և 'ի ճե-
 մականաց անտի¹⁰⁵ Թէոպոմպէս, համ հաւատացն
 և համ ստուգեցին թէ մարթ է և լինելոց է
 յարուի մարմնոց, ի էլ՞ ապա ի անկարելիս թուիցի:

§ 11. Գերազանց Տաքութեան պատերազմոցն:

Երկրորդ ձեռնարկութիւն, որով քնականն հա-
 լատ գերազանցէ զառաջնովք, զմիջնովք և զվերջ-
 նովք՝ է գերամաքուր սրբութիւն պատուիրանաց
 նորին շուրջ զձեռիէն պաշտամամբք և զայլովքն կա-

րևորօք : Մնտաիք Տե՛թանոսական պաշտամանց ո՞ղ
 երկարօրէն ցուցանեն Պորփիւր և մերոյ դարուս նա-
 ւաստիք , իբր ՚ի բազումս լի են անագորոյն անգը-
 թուքք գրեթէ չ ամ Ե . քղի տիեզերք անգամ
 մարտեցան զՏետ խաբէուէս , եթէ ¹⁰⁶ գիք արեամբ
 մարդկան ՚ի Տաշտուէն զիջանին . զոր ոչ յունաց իմաս-
 տուէ , և ոչ լատինացն օրէնք բառնալ զօրեցին , ո՞ղ
 երևի ՚ի զո՛հից անտի ¹⁰⁷ Բաբոսի Ովմեստականի առ-
 յոյնս ոչ ջակիզմամբ յունին և յունեայն , և ¹⁰⁸ Արա-
 մադդայ լատինացւոյ զենմամբ գաղղւոյն և գաղղու-
 հոյն : Գաղտնիք սրբուէց ուխտին Գիմետրեայ և
 ԱգատՏօր լի ամենատեսակ գարշանօք կատարէին ,
 ո՞ղ երևեցան մեզ , այն ինչ առ յապոյս սկսան բանիլ
 ծածուկք չարապաշտուէց նոցին , զոր և ընդարձակօ-
 րէն բացատրեն ¹⁰⁹ կղէ մէնտ Աղեքսանդրացի և այլք :
 Ուստի և յաւուրնս նու իրելս ՚ի տօնախմբուէն սոցին
 այնքան անպարկեշտ անառակուէս գործէին , մինչ
 ամօթ վարկանէր իւր ¹¹⁰ Կատովններկայ լինիլ անդ :
 Օրէնք Հրէից թէպէտ ազատ էին յապօրինաց և ՚ի
 Տակառակամարտիցն համեստուէց , սակայն առ ՚ի
 չաստեցուցանելոյ զժողովուրդն հակամէտ կռա-
 պաշտուէ յաստուածատուր օրինաց անտի՝ բեռնա-
 ւորեցան նորանոր ծիսօք , որք ը ինքեանց ոչ բարիք
 էին , և ոչ չարք . ո՞ղ զենմունք անասնոց , թլպա-
 տուէ , խիստ շաբաթապահուէ , պահեստ ՚ի բազ-
 մորակ կերակրոց և այլք : Ջորոց ինչ ինչ իւրե՛նց
 առին մահմետականք , յարելով ՚ի նոսին և զի գին-
 ւոյն հրաժեշտ : Իսկ հաւատ քրիստոնէուէս ուսու-
 ցանէ մեզ նախ պաշտել զնձ իբրև զՏօգի ամենամա-
 բուր՝ ¹¹¹ հոգւով սրբուէ , և այնպի իմն գործովք ,
 որք և ¹¹² արտաքոյ պատուիրանին և ը ինքեանց են
 անարատք : Կամի ոչ զմարմնոյն թլպատուի , այլ ¹¹³

դարտին . ոչ յամենայն գործոց շաբաթանալ մեզ , այլ
¹¹⁴ յապօրինաւորաց : Ոչ զարիւն և զճարպ անամնոց որ
 ջակիղելնայ , այլ թէ դէպ լիցի ՚ի վկայուի ճշմարտուն
¹¹⁵ զարիւնս մեր պատարագել : Զսիռեալսն կարօտե-
 լոց ՚ի բարեաց անտի մերոց իբրև ¹¹⁶ նայ փոխարինեալս
 հաւատալ : Ոչ ¹¹⁷ հրաժարիլ ՚ի մասնաւոր տեսակաց
 ինչ ուտելեաց և ըմպելեաց , այլ առնուլ մեզ ՚ի նո-
 ցանէ չափով՝ բաւական ՚ի պահպանել զկեանս
 մեր : Եւ ¹¹⁸ երբեմն պահօք Տրազանդեցոցանել հո-
 գւոյ զկտան մարմնոյն , ոպ զի ազատօրէն վերասցի
 նա ՚ի բարձրագոյն առարկայս : Այլ գլխաւոր
 մասն քարոզի հաւատոյ սրբուն մերոյ յամենայն ¹¹⁹
 ուրեք հաստատուն կալ ՚ի հաւատս անպաշտուն .
 գանձել նովաւ մեզ անկեղծ Տրազանդուն , զնա
 միայն ունիլ մեղապաւէն յուսոյ , պինդ ունիլ զհաւատն
 յանսուտ աւետիս խոստմանցն , ուստի աղբերանան
 յոյս և սէր ճշմարիտ առ ան և առ ընկերս մեր , և
 պատճառեն ՚ի մեզ Տրազանդուն պատուիրանաց նորա ,
 ոչ ծառայաբար՝ յերկիւղէ պատժոցն զարհուրելով ,
 այլ որդիաբար , զի այն է հաճոյն նորա , և զի նա է
 հայր մեր և վարձահատոյց : Հրամայեցաք նաև ա-
 ղօթել ոչ ¹²⁰ վն հարստունց , մեծութեանց , փա-
 ռաց , և որոց ՚ի կարուստ խնդրողացն լինին , այլ սյ-
 նոցիկ՝ որ հային ՚ի պատիւ և ՚ի փառս նայ : Իսկ վն
 անձանց մերոց զայնքան և եթ զկենցաղոյս , որքան
 և բաւականն լինին պիտոյից բնուն մերոյ , շատա-
 ցեալք զիարդ և էն բերմամբք նոցին՝ և թող-
 լով զայլն ամ անձային ինամնոց : Նաև վն որոց՝ առա-
 ջնորդն լինին մեզ ՚ի կեանս յաւետենից , այս է վն
 թողուն մեղաց մերոց անցելոց , և պաշտպանուն հո-
 գւոյն նայ չդէմ ապառնեաց . աղօթս առնել յամ
 սրտէ , որով և հզօրացեալ չդէմ արկածից և փոր-

ձութեանց հակառակորդին , զընթացս բարեպաշտուէ մերոյ առ ԹՅՄ անվթար և անբռնադատ կատարել : Ահա այս է պաշտօն քրիստոնէութեա մերոյ քան զոր վայելչագոյն ԿՅ ԶԲ Ինչ արդարև :

§ 12. Բարիս ստնէլ ընկերին և նեղլաց մերոյ :

Համանման սոցին տեսանլին և որք առ ընկերս մեր պահանջին պաշտօնք առ ՚ի մէնջ : Մահմետականդ աղանդ ծնեալ ՚ի զէն , շնչէ զէն , սիւնին և ՚ի զէն : Ջլակոնացի օրէնս՝ զամենալաւն և զգովանին առ հելէնս՝ զգրուատեսլն ՚ի պատգամախօսէն Ապոլոնի՝ վս ՚ի զէն խիզախերոյ զիւր օրինապահս շշափէ ¹²¹ Արիստոտէլ տինն և դարովէ խկ : Ուր չէդէմն ինքն թելադրէ գործարժանի օրինաց՝ տալ պատերազմ չ բարբարոս խառնիճաղանճաղգս , որոյ ներհակն արդարև թուի ինձ օրինաւոր ԹՄ մարդկան , որ ՚ի բնուստ հաստեցանն ՚ի բարեկամուի և յընկերական կեանս : Քանղի զինչ այլ յուեգոյն իցէ քան զսոյն ընդ սակաւս արեւնապարտից զազգ մի ողջոյն ՚ի սուրհանել , և իբրև զառնի քաջուէ պարծանս ՚ի ցոյցս յաղթանակի դրօշել : Իսկ և այն տիեզերս հռչակ քալաքն Հռովմ , որով արդեօք զմեծ զայս անուն , եթէ ոչ անդադար և անխրաւ պատերազմաւ յինքն յափշտակեաց , ող ինքեանք խոստովան լինին յիգս պատերազմացն Սարդանիոյ և Վիպրոսի : Բայց ՚ի հասարակի խօսելով . չ աւանդելոյ մեզ բաղմաց ՚ի հրախօսից անտի ¹²² ասպատակուէք արտաքոյ սահմանին իւրեանց համարեալ լինէին քաջագործուէք իմն ՚ի մէջ զանազան ազգաց : Չարեաց չարիս փոխարինեալն վրէժխնդրուի ¹²³ Արիստոտէլէ և ՚ի Վիկիրոնէ քարոզեցաւ

Ծայրագոյն մասն սրդարուէ : Փոփոխ ¹²⁴ փողոտմունք սուսերամարտիցն զմիմեանս տեսլարան զուարճուէ կարգեցան առ հեթանոսս , և ընկեցիկ առնել զմանկունս իւրեանց՝ հանապազորդ սովորուի : Իսկ առ հրէաստանեայս թէպէտ և ծաղկէին օրէնսդ ըրուիք բարեաց և հրահանգք սրբուեց , սակայն դէռ ևս կատարի դժնդակութիւն ժողովուրեանն , էր ինչ՝ որ ՚ի հոց զանց արարան , և էր՝ որ նորոգ ՚ի ներքս սպրդեալ մուծան : Չոր օրինակ ¹²⁵ փոր ձեռն նոցա զփորձ զօրութեանց իւրեանց ՚ի վերայ եօթնեսին ազգաց՝ թէ և իւ արժանեացն իսկ նոցին : Եւ ոչ այսքան միայն , այլ մշտալ ՚ի ներսին կատարուի իւրեանց , չարաչար հալածէին զոչ միաբանեալն ինքեանց , զորոց յայտնի ապացոյց մարթէ տեսանել տակաւին յաղթարանն նոցին ընդդէմ քրիստոնէից : Բայց ¹²⁶ զրկանացն կրեւոց վրիժառուս լինիլ դատատանաւ և զմարդասպանն գաղտնի ձեռամբ մերձաւորի սպանելոյն կորուսանել , նոյն նոցին օրէնքն հրամայեն : Այլ քրիստոնէականս հաւատ արդելու բոլորովին ¹²⁷ չարին չար հատուցանել եթէ բանիւք և եթէ գործովք , զի մի՛ զչարիս յայլն պախարակեալ , իրօք յանձինս հաստատիցուք : Բարիս առնել բարեաց են առաջին պարտիք մեր , սակայն և չարաց անգամ պնրտ է մեզ զնոյն ցուցանել , իւ օրինակի ողորմածին անյ՛ յորմէ ընդունիմք յարածամ զձիրս բարեաց հաւասար ան մարդկան , զարեգակն , զաստեղս , զօղ , զհողմունս , ևն :

§ 13. Ամոսնախն երանանք :

Լծորդուի արուի և իգին , որով աղք մարդկան զածումն առ , գործ է արժանի պաշտպանուէ

օրինաց : Բայց զի հեթանոսք անտես արարին զսովաւ չիք զարմանք¹²⁸ այնինչ զանառակուհս և զշնուհս աստուծոցն իւրեանց պաշտելեաց անպատկառ ՚ի գովս հանեն : Չարագոյն ևս այն է , զի զարուաց ընդ արուս արտաքոյ կարգի բնուէս զխայտառակուհի , օրինակաւ դից իւրեանց յաւէտ պանծալիս յօրինէին : Յորոց սակի ՚ի Գուամն¹²⁹ Գանխախդէս և յետոյ Անտինաւս ասին լեալ չարեացարդիւն վիճակաւորք : Այլ սարսափելիս նյս անօրէնուհի յաճախեալ տեսանի առ մահմետականս , առ ձենս , և առ այլ և այլ ազինս իբրև օրինական իմն զով ապօրէն բոցոյ ցանկուեց իւրեանց : Բազումք նաև ՚ի սոփեստիցն հելէնացոց չարաչար ձեռներէց գտան¹³⁰ զեղեռն ապականարար չարեացս չէ անուամբ համեստուե սքօղել : Եւ յետ Բատագով հանդիսանալոյ որոց ՚ի նոցանէ խմաստութն էին անխտրուե կանանց , զինչ այլ թերի թողին բայց եթէ դարձուցանել զքաղաքն¹³¹ ողջոյն ՚ի հասարակաց պոռնկոցս : Իսկ արդ՝ մինչ նաև ՚ի մեջ¹³² անասնոց պահի կարգ իմն ամուսնական լծորդուե , քանի առաւել նախատինք ոչ իցեն մարդոյ զանծպետականին բերողի յինքեան զնմանուհի , ձկնիլ յանստոյգ սերմանց , որով և զբնական սէր առնչուեն ՚ի սպառ աղաւաղել կործանել : Օրէնք եբրայեցոց բացասեն թէ պէտ զամ աղգս անմաքուր խառնակութեանց , սակայն և այնպէս թոյլ տան¹³³ առն ունիլ իւր բաղում կանայս , և արդարացուցանեն զնա արձակել զիւր կին վն ո՛ր և իցէ պատճառաց զոր և այժմ մահմետականք անխիղճ ՚ի վար արկանեն : Լատինք և յոյնք առ Գովք այնքան խենեշացան զեղևեցան ՚ի վարս իւրեանց մինչ լակոնացիք և Վատովն պայմանաւ ժամանակի փոխ տա-

յին այլոց զկանայս իւրանց : Իսկ գերակատար օրէնքըն քնն քննի , զնոյն իսկ զարմատ չարուէն ՚ի բանց տապարէ տյնինչ զնա՝ որ ՚ի փորձ ելանել փորձէ ¹⁵⁹ կնոջ և պարկեշտութեան նորին , և կամ , որ արատւ Տայեացն լինի ՚ի նա , թէ և իրօք չարիս չև գործեալ պարտուոր կացուցանէ առաջի այ քննողին գաղտնեաց սրտից և դատաւորին : Եւ քանզի Տարկէ ամ ճշմարիտ համակրուէ մնալ տեուն և անքակ , իրաւունս համարեցաւ ուրեմն և այսմ այնպս լինիլ , զի որ հաւանութեամբ կամացն ուխտիցեն միմեանց զհաւատարմուի կացցեն ՚ի նմին անլուծանելի և անորոշ մարմնոցն լծորդուք ՚ի խրատ արդարուէ սերնդոց իւրեանց : Լինէին առ հեթանոսս երբեմն ազգք՝ որք միով կնաւ շատանային զորոց տես ինձ զհռովմայեցիս և զգերմանացիս , որք սովին և եթ՝ օրինակ եղեն քրիստոնէիցս : Քանզի կին՝ կամաւ գրաւեալ զինքն ¹³⁶ ՚ի խնամս առն իւրում , նովին չափով և վարձատրիլ պարտի ՚ի բարիս նորուն , զի անտեսուի չէ միով տանտիկնաւ բարեվիճակ ևս կառավարեացի . և զի մի՛ բազմութիւն մարցն ծնցին ՚ի տան յաւէտ իւրովութիւնս՝ քան թէ մանկունս :

§ 14. Աերտոտեի արքային բարեաց :

Եկեալ աւանիկ ՚ի կիրառուի որոց ՚ի մասնաւորի անուանին բարիք , տեսանեմք , զի ¹³⁷ գողուին թուլատրեալ լինէր յոմանց ՚ի հեթանոսական ազանց անտի՝ որպս յեգիպտացւոց և յսպարտացւոց : Բայց ոյք ոչ թողացուցանէին զայս մասնաւոր անձանց՝ ազգովին գրեթէ զնոյն գործէին , սպ հռովմայեցիք , զորոց վերստին դառնալ ՚ի հիւղ իւրեանց ասէր հռովմայեցին ճարտասան , եթէ ուրոյն

զիւրն դարձուցանել օրէն իցէր զստացուածս : Ոչ
 ինչ այսպիսի [Թողոյր [Թէպէտև օրէնքն եբբայեց
 ւոց , սակայն , լը իրիք հաղորդ գտանելով շահասէր
 բնաւորուէ օրինապահացն իւրոց ¹⁵⁸ որոց և [Թող
 զայս խոստանայր և զհարստուիս՝ վաշխս լուծանել
 յօտարաց հրամայէր : Իսկ հաւատ մերոյս օրի-
 նաց , ոչ միայն ¹⁵⁹ ցրէ զամենայն ազգս անիրա-
 ւութեաց առ ամենայն արարածս , այլ նաև արգելու-
 մեզ ¹⁴⁰ հիմնել զյոյս մեր ՚ի բարիս եղծանելիս , զի
 ոչ բաւէ հոգի մեր ծառայել երկուց տերանց .
 յորոց երկաքանչիւրքն պահանջէն զմարդն ողջոյն ՚ի
 հոգս իւրեանց , և յածէն զմեզ ՚ի ծուփս հակա-
 ուակընդդէմն վարանաց : Նազի և ¹⁴¹ մարթանք հարս-
 տութեանցն և ջանք պահպանութանց նոցին , սյն-
 քան անհարին տանջանս , և շղթայակապ գերանս
 ՚ի վերայ դնեն , մինչ զնոյն ինքն զհետտութիւն ,
 զակնկալեալն ասեմ ՚ի հարստուէց անտի՝ գլխովին
 ապականել : Պահել անձանց զսակաւամասնեայս՝
 որով ¹⁴² բնութիւնն շատանայ , և առանց մեծաց
 ջանից փոյթ ՚ի ձեռս բերին : Իսկ զորս ածե-
 ցուցանէ ՚ի մեզ ւած անդր քան զայս ամենայն , ոչ
 ծովակուր առնել ոպ փիլիսոփայքն ոմանք , և այն՝
 կարի անմտաբար՝ արարինն , ոչ պահել առ մեզ ու-
 նայն ՚ի շահուց , ոչ մխտել անառակօրէն , այլ կամ
 ընուլ այնու զպէտս կարօտելոց , կամ պարգևել որոց
 ինդրեանն , և կամ փոխ նպաստի այլոց մատուցանել :
 Եւ այս գործ է այնոցիկ որք հստմարին զանձինս ոչ
 իբրև տեարս ստացուածոցն , այլ իբրև անտեսս նյ
 բարձրելոյ և հօր ւամ բարեաց , վնդի բարիք բար-
 ւոքապէս մատակարարեալ՝ գտնած են լի յուսով բա-
 րեաւ . առ որ ոչ գողոց գողութիւն , և ոչ արկած
 պատահմանց մերձ լինիլ կարեն : Այսր անկեղծ և

ստոյգ բարեպաշուէս օրինակ քանջ յառաջընծայեցին Քրիստոնէիցս նախահարք , այն ինչ սկսեալ ՚ի ¹⁴³Մակեդոնիոյ և յԱքսիոյ զտրոց ողորմուէն առաքեալ պտուղս՝ զաղքատս Պաղեստինացւոց լիալիր դարմանեցին , որով և ոչ այլ ինչ , քան եթէ բովանդակ էս ՚ի մի փոխեալ գերբաստան ցուցին : Չգուշացուցանեն մեզ օրէնք հաւատոյս՝ այնպս առնել զողորմուիս , զի հայիցին բոլրովին ՚ի պաշտօն փառացն նյ տուեալ . զի մի՛ գուցէ յոյս փոխարինի հատուցմանն և պատուոյ՝ աղօտացուցէ զչորհս սպայծառուէն նորին . զի առաջի նյ կորնչի վարձն , եթէ զայս փոխանակ նմին կալցէ ոք նպատակ իւրումն ողորմուէ : Աչ դէպ դատէ ումք ծշդել աշահանօք զիւր սակաւապէտն պարէն ըստ հասարակեալ սովորուէն , իբր այն թէ՛ յենուլ անդ նորուն յալիս ծերուէ , կամ ՚ի վերահաս վտանգս փորձուէց , իւրոցն յայնժամ կարիս ունիցի ընչից , վն զի խոտանան մեզ օրէնք զանվրէպ զիւրեանց խնամարկուիս , եթէ կատարիչք նոցին եղիցուք : Եւ ՚ի կնիք հաստատութեան բանին ածեն ՚ի վերայ յայտնի խնամարկուիս նյ ՚ի կերակրել նորա զգազանս վայրիս և զհօրանս անբան անասնոց և ՚ի շուք պանծալի զարդարել նորին զլաւարիս երկրի ծաղկօքն հանդերձ : Ապնքէն չար է չհամարել զանձ բարի և բաւական նմի , կամ չվտաս հանալ ՚ի նա իբր և յանազորոյն ոք պարտապան , յորմէ ապահովիմք և ոչ իւիք առանց գրաւականի :

§ 15. Երդմանք :

Ի սուտ երդմանց հրաժարեցուցանեն զմեզ նմ օրէնք , բայց այս՝ ¹⁴⁵եթէ ոչ ՚ի պարտաւորուէ հարկին , նաև ՚ի սոսկ երդմանց զմեզ հեռանալ կա-

մի, և այնպէս պատուել զճշմարտութիւնս, մինչ և երդման պէտս չունիլ բնութիւնս :-

§ 16. Առ Գործ 4 :

Չեք ինչ պատուական եթէ ՚ի սփեսայիկ գըրուածս Հելէնացոց և եթէ ՚ի կարծիս Եբրայեցոց, զորս ոչն պարունակեն յինքեանս ամբիծ հաւատոյս օրէնք, և զնոսին վկայեալս և կնքեալս անձաւանդ պատուիրանաւ : Չորոց տէս ինձ աստանօր ¹⁴⁰ զհամեստութիւն, զպարկեշտութիւն, զանարատութիւնս վարուց, զսրբութիւն, զերկայնմտութիւն, զչափաւորութիւն, զինաստութիւն, զերաւունս տերանց և ծառայից, իշխանաց և իշխելոց, ծնողաց և զաւակաց, արանց և կանանց, և որ մեծն է՝ փախուստ ՚ի չարեաց անտի՝ որ չ քօշով քաջապանծութեամբ պատրուակեալ զյողովս ՚ի յունաց և ՚ի հռովմայեցոց զակատեալն ասեմ զհետ սնոտի փնց և պատուոյ՝ ՚ի կորուստ անձանց հրապուրեցին : Աքանչելի է մանաւանդ լի բովանդակութիւնս պատուիրանաց նորին վս իւրոյ ճիշդ համառօտութեանն, որ գոգ դու պատուիրեմեզ ՚ի մի բան, սիրել զանձ ՚ի վեր քան զամ, զընկերս՝ իբրև զանձինս մեր . այս է, զի ող կամիմք թէ արասցեն մեզ մարդիկ՝ այնպէս արասցուք և մեք նոց :

§ 17. Ի հախառակութիւն եղելոյ ոտ Քրիստոնէայս :

Առարկեցէ ոք թերևս չեղէմ նախասացել գերազանցութեան վարդապետութեան քնի, իբր սյն զի՛ մեծամեծ հակառակութիւնք ՚ի մէջ քրիստոնէից, ուստի և խուռն գրոհ աղանդոց՝ ելին : Այլ ավին յայտնի պտտասխանի, զի այդպիսիք գրեթէ առ հասարակ ամ արուեստից պատահ գան, մասամբ ՚ի տկարութիւն բնութեան, և մասամբ ՚ի նա-

խաղաղաշարմանէ մտաց : Գարձեալ զի դիմորոշուիք
այսպիսի կարծեաց՝ ոչ ելանեն արտաքոյ սահմանա-
ւոր կողարի , ուրանօր է՝ զի համաձայն ընթանան
մարդիկ , և է՝ զի վճռօք որոշեն զերկդիմի կարծիս ,
ոպ նաև առ չափաբերականս երեկն երբեմն
վիճմունք , [Թէ մարթիցէ՞ արդեօք վերածել զծիր
բողորակ ՚ի ձև քառակուսի , [Թէ ոչ , և [Թէ՝ ՚ի բառ-
նիլ հաւասարին ՚ի հաւասարէ , լինի՞ և մնացեալն
հաւասար , [Թէ ոչ , սոյն և առ բնականս , առ բժշ-
կականս , և յայլ արուեստիկս կարէ նշմարիլ : Ըստ
այսմ պարտ է իմանալ և զվէճս ՚ի մէջ քրիստոնէից ,
որ ոչ երբէք խոչեւ քարնդուաւել զօրեցին մանաւանդ
գլխաւոր պատուիրանացն՝ որով քաջարգոյն ընծա-
յեցաք զօրէնս քրիստոնէուէս մերում : Ա ճիտ տե-
սուի բանիս սաուգի և անտուտ , զի նոքին ևս ,
որ ներքին ատելուիք ներհակ միմեանց զինեցանն ,
և դժնդակ տանջանօք ՚ի խնդիր նիւթոց հակառա-
կուէ անձնատուր եղեն , չվստահացան դուն ու-
րեմն չ չափ սահմանի անցանել , մինչ ժխտել պա-
տուիրանացն Քրիստոսի , կամ ուրաստ հարազա-
տուէցն լինիլ մանաւանդ [Թէ և նոքին՝ որ զընթացս
իւրեանց քանոնօք նմին իսկ պատուիրանացն
ուղղել չկամեցան : Բայց եթէ սիրիցէ ոք ՚ի վէգ և
առ այս մտանել , [Թուի ինչ հաւասար իմաստա-
կացն , որք և զսպիտակուի զձեան ուրանալ յիմարե-
ին . զի ոպ նոքա ՚ի լուսոյ բանին , նոյնպէս և սոքա
՚ի հաւանուէ ամ աղգացս Քրիստոնէից , ՚ի գրոց
անտի առաջնորդաց հաւատոյս , հետևողաց նոցին ,
և որոց յետոյ վարդապետքն եղեն և մահու իւր-
եանց վկայք ճշմարտուէն , խայտառակեալ պար-
տասին : Քանզի զորս այսքան բաղմունք մարդկան
չենին իբրև հարազատ վարդապետութիւնս քնի ,

չէ պնդուած յետ արդարահաս քննութեն ժխտել, որպս
և այժմ Պշատոնի, Քսենոփոնի և այլոց աշակեր-
տակցաց նոցին ոչ անհաւանիմք վն աւանդութեան
Սոկրատայ, ոպ և Սոյիկեանց և Դպրոցականաց
վն որոց Չենոն աւանդեաց :

§ 18. Ի գերականոցութենէ վարդապետ Կորին :

Երորդ փաստ, որով ասացաք քնական հաւատոյս
գերազանցիլ զամենեքումք որք ենն, և որոց չ
միտս անցանիլ կարեն պաշտօնք՝ էնոյն ինքն եղանակ
քարոզութ և տարածութ նորուն : Առարկայնախիկին
մասինս այսորիկ և քննութ մեծի արժանի՝ է անա-
ռաք նորին վարդապետ : Առաջնորդք խնաստութեն
յունաստանի իւրեանցովին խոստովանին ոչ ինչ
ստուգութ առարկել. քանզի ¹⁴⁷ սուղեպէր ճշմարտ-
ութն իբրև ՚ի խորս անդնոց, և միտք կուրացել առ
տեսուիս անայնոց ոպ աչաց բուոց առ ամենա
պայժառ ճառագայթս արեգական : Մանաւանդ
զի չէր ոք ՚ի նոցանէ անախտ ՚ի բազմեղեոն չա-
րեաց, գորով ոմանց պատառաքաշս իշխանաց, այ-
լոց վարարեալս զհետ մարմնապարիշտ ցանկութեց, և
կիտոց անառակեալս ՚ի զազրանս գարշանաց : Իսկ
նիւթատելութ և նախանձու առ նն էին հանապա-
զորդեան հակառակութք ՚ի վն բառից կամ անպի-
տան առարկայից : Տուրաք և յունպետ էին ՚ի
պաշտօն այ, զի թէև զմին միայն ան ճանաչէին,
սակայն զնա մեկուսի թողեալ զանականն նորա
զպատիւ կուրութն նոցին ձօնի նուիրէին, զորս չ անս
խակ չհամարէինն, կանոն հաւատոց եղեալ անձանց
զորս ՚ի գործ անէր խուժանն մտամուլար սովորութ :
Իսկ թէ յաղագս վարձուցն արդարութեան ոչ ինչ տի-
րապէս վճռել իշխեցին, ահա վկայ քեզ ՚ի մօտոյ

վիճաբանութիւնն Սոկրատայ փոքու յիջ քան ըզ-
 մահ իւր : Մահմէտ իւրումն չդարձակատարած
 կրօնիցն աշանդապետ , այր ճակաճանեալ ՚ի տըռ-
 փիս հեշտախտուեց նաև յիւրոց ճանաչի : Որ և
 վասն խոստացեալ վարձուցն՝ հիմնելոցն ասեմ գլխո-
 վին ՚ի ինճոյս և յառազաստս պագշտուեց՝ չեցոյց
 գրաւորական իմն հաւաստիա , թէ զիմրդ , կամ
 որով արդեօք մարթ էր ՚ի կատար հանիլ : Ուր
 զի և մարմին նորա ՚ի կեանս յարուցեալ տա-
 կաւին չասի թաղածն իսկ մինչև ցայսօր ժամ-
 անակի ՚ի հողս մետինացւոց աշխարհին : Հրէից
 օրէնսդ իրն Մովսէս՝ այր պատուական էր թէպէտ ,
 սակայն ո՛չ ազատ գլխովին յարատոյ , սարսաւանաց
 որ յայ ինքեան զպատգամաբերութիւնն շնորհեալ
 յետ ¹⁴⁸ բազում չդիմադրուեց հազիւ թէ յանձն
 առ , և առ բանն այ՛ որ յաղագս ՚ի վիմէն
 ջուրցն խաղացման եցոյց զիւր անհաւատութիւն ,
 որպէս խոստովանին և եբրսյեցիք : Իսկ զորոց
 միանգամ խոստացաւ նա յօրէնան՝ իւրոց հետև-
 ողաց իւղացոյց ինքեան և ո՛չ ինչ , այլ յածեալ
 պտոյտքեալ նորա ընդ անապատ տեղիս՝ պատեալ
 պաշարեալ յազգի ազգի աղէտս խռովութեանց
 և շփոթից , ՚ի վերջոյ՝ անմասն գտաւ նաև յերջանիկ
 մտից երկրին սուտեաց : Այլ Քս , ո՛չ եթէ անա-
 բատ յամ մեղաց յիւրոց և եթ քարողի , այլ և ո՛չ իսկ
 վկայուք այլոց հաւաստիւ կարէ , ¹⁴⁹ եթէ մեղս ինչ
 գործեաց նա : Գարձեալ՝ զի զոր այլոց քարողէր ,
 ինքնին նախ զնոյն ¹⁵⁰ կատարէր , և աւանդեալն
 յայ ինքեան ընդ հաւատարմապս ¹⁵¹ աննեւզն և
 անարատն ՚ի բովանդակ կեանս իւր : ¹⁵² Համբերա-
 տար գտաւ նա չարչարանաց և նախատանաց , զորս
 դատակնիք խաչին յայտ ակներև յանդիմանեն :

Սիրող աղգի մարդկան եղև, մանաւանդ թէ և թշնամեաց իւրոց և խաչահանուաց, մինչ զի և աղօթել առ Թոմաս վն նոցին թողութեան: Իսկ զորս իւրոցն խոստացաւ անհասանելի վարձուց հատուցմունս¹⁵⁴ բնաղացնապէս յանձին իւրում ցուցանէր, որպէս քարողի, և ապացուցանի ևս յարժանահաւատ վկայութեւ որոց տեսինն զնա յարուցեալ ՚ի մեռելոց, և լուան և, շոշափեցին: Նա և յանդիման իւրոց երկոտասան առաքելոցն ՚ի յերկինս համբարձաւ, ուր և զանճառելի և զբարձրագոյնն սեպհականեաց ինքեան զփառս, որում բացերև նշան էր¹⁵⁴ պարզև հրեղէն լեզուացն, որով զաշակերտս իւր զտգիտունն ասեմ այնպիսի սքանչելեաց ելից ՚ի սբ վերնատանն, և¹⁵⁵ շնորհք հրաշագործութեցն, և՛ զորս խոստացաւ նոցա նախ քան զմեկնին իւր ՚ի նոցանէ: Յորոց համանգամայն եզրակացուցանի, թէ անարժան է մեզ երկուանսու զամենաբաւական իշխանութեւ նորա ՚ի հատուցանելն մեզ զխոստացեալ բարեացն զպսակ: Այլ գիտելի է ևս զի հաւատոյս գերազանցութիւն զայլովքն ամենեքումբք՝ մասամբ իմն և յայտմ կայանայ զի վարդապետ նորին¹⁵⁶ զորս պատուիրեացն կատարեաց, և զորս խոստացան յանձին իւրում կրէր:

Ստանելի փարձոտէն հաւատոյս:

Գամահան և յաւանդեալս ՚ի նմանէ գործս օրինաց, զորս եթէ բարւոք ՚ի միտ առցուք, և եթէ անախախնամութեանն ակնածեցուք, երևին գող ոչ այլ ինչ քան թէ անարդարութեանն քարոզք: Անկէր նախախնամութեւ նպաստել տարածութեւ գերագունին հաւատոց, և ահանոյն քնականիս դէպ տեսանի պաշտաման, որ քարոզեցան և հիմնեցաւ

Շ ամ Եւրոպիայ անդր քան զվերջին եզերտս կողմանցն հիւսիսի , Շ համօրէն Ասիա ցկղղիս ծագացն Ովկիանու , յԵգիպտոս , յԵթովպիայ , և ՚ի տեղիս տեղիս Ափրիկեցւոց Յին . ապա՝ և յամերիկայ , և յայլ : Եւ զայս ոչ ՚ի նորս և եթ՝ այլ և առ հինսն հանրասփիւռ տարածեալ Շ տիեզերս գրեն երկայցզ վիպասանք , գիրք վարդապետաց , գործք ժողովոց , և նախնի՛ աւանդուիք : Յաղագս ճանապարհորդուեց և սքանչելագործուեցն Թովմայի և Անդրէի առաքելոց և այլոցն բանք անդրդիւն կան և մնան մինչև ցայսօր ժամանակի ՚ի մեջ բզմց բարբաւրոս աղգաց : Եւ թէ՛ որքան վեհ հանդիսացաւ աւունն քսի առ Բրիտանեայս , առ Գերմանս , և առ այլ հեռաւոր և մօտաւոր աղինս ՚ի ժամանակս իւրեանց ցուցանեն¹⁵⁷ Սղէմէնա , Տերտուղիան , և¹⁵⁸ այլք : Արդ՝ որ կրօն հաւասարիլ կարիցէ սմին տարածուի : Եթէ առցես ինձ զկուսպաշտուիդ , այժ զանուն զմի առնուս , բայց ոչ զկրօն մի : զի ամենեքին նոքա ոչ ընդունին զնոյն կուռս , այլ ոմանք զաստեղս , ոմանք զտարերս , այլք՝ զանասունս , և կէսք՝ զխառնածին զառասպելեալ և զանգոյ էակս : Ոչ Շ միով օրինօք կառավարին , և ոչ միոյ հովուի ՚ի Տրաղանդու թեան կան : Իսկ եթէ զԷրէայս՝ թէպէտ ցանեալ և ցնդեալք ընդ համօրէն երեսս երկրի , սակայն ոչ ինչ աւելի քան թէ զմի միայն կացուցանեն աղգ : Հաւատ նոցա յետ քսի չեցոյց երևելի իմն յառաջադիմուի , մանաւանդ թէ և ՚ի Քրիստոնէից քան ՚ի նոցունց ՚ի հրէիցն՝ քարոզեալ ցուցաւ Յի : Յաւելուցուս ինձ թերևս զմահմետականուիդ տարածեալ ՚ի յօրով տեղիս , սակայն և այնպէս՝ ոչ առանձնակի : Քանզի ուր ուրեք նայն գտանի , անդ՝ պայծառ ևս փայլէ

քրիստոնէութիւն բաղմութեամբ հաւատացելոց ,
 և ընդ հակառակն՝ զմահմետականդ աշանդ չէ՛
 մարթ գտանել ՚ի բաղում տեղիս , ուրանօր գտանի
 Քրիստոնէութիւնն և պաշտի :

Տէրութիւնէ՛ նախնի վարդապետաց հասարոյս :

Քննի աստանօր թէ որով ձեռնառու նպաստաւո-
 րուք այսքան աճեալ տարածեցաւ հաւատս Քսա-
 կանս . քիչ յատուկ և ՚ի մասին այսորիկ բաղդատեալ
 նորա ընդ այլոցն ամենեցուն՝ վէհ նոցին դժխոյա-
 նայ : Տեսանեմք , զի բաղումք ՚ի մարդկանէ ընտ-
 ըեցին իւրեանց ՚ի նիւթս հաւատոյ վարիլ օրինա-
 կաւ թաղաւորոց և իշխանաց , մանաւանդ այն ինչ
 հարկ օրինաց և բռնութիւն պարսաւորէր զնո-
 սա . յորոց հեթանոսուի և մահմետականութիւն
 ունին զիւրեանց յառաջնուի : Բայց առաջնորդք
 մերոյս հաւատոյ՝ ոչ միայն զուրկ էին յամ
 իշխանուեց և պետուեց , այլ և նուաստափառք ,
 վրանսկարկատք , և որ սոցին նմանիք : Սակայն
 և ՚ի ձեռն անտանելի ճգանց և քրտանց իւրեանց չե-
 ամս երէտուն , կտուտուն մի պսկաս , ոչ միայն զլայ-
 նառարած սահմանս հռովմայեցւոց , այլ և անդք
 քան զՊարթևաստան և զՀնդկաստան աշակեր-
 տեցին ՚ի Տրազանդուի աւետարանին Քսի : Եւ այս
 ոչ եթէ ՚ի սկզբանն և եթ՝ այլ և շարունակեալ
 ցերէքհարիւր ամացն յաջորդուի ջանիւք մասնա-
 ւոր արանց , առանց իրիք ստատնալեաց կամ հրա-
 պուրանաց , այլ չ հակառակն խոշտանկեալ տանջեալ
 և չարչարեալ ՚ի բռնակալուէ իշխողաց ժամանակին ,
 այնքան չարձակ սիրեալ տարածեցաւ , մինչ չ իւր-
 և գրաւել զմեծ մասն ¹⁵⁹ Հռովմէական տէրուէ նախ-
 քան զհաւատայն Առասանդիանոսի մեծի : Դար-

ձեռալ զի ոյք առ յունաստանեայս բարոյականին հան-
դիսացան վարդապեաք՝ հաւանելի ընծայեցին
զնոյն ՚ի ձեռն իւրեանց բազմահանձար արուես-
տիցն , զոր օրինակ , Պղտտոնեանք՝ երկրաչափուք ,
Ճեմականք՝ բնաբանուք . Ստոյիկեանք՝ տրամա-
բանուք , Պիթագորեանք՝ թուաբանուք և երաժշ-
տուք , և բազումք ևս այնք էին , որք լի չափ անցին
մարդկային ճարտարուէս , ոպ Պղատոն , Քսե-
նոփոն , և Թէոփիրատէս : Բայց նախուսոյց դաստի-
արակք Քսական հաւատոյս զուրկ գլխովին ՚ի
սոցունց երևէին , ուստի և ¹⁶⁰ բանք նոցին պարզ , և
զերծ ՚ի հրապուրող խաբէուէց անտի , սոսկ և ան-
զարդ խօսիւք և եթ քարոզէին զպատուիրանս , զա-
ւետիս և զսպանալիս ան իւրեանց : Եւ զի՛ չէր ՚ի
նոսա զօրուի բռնի այսբան մեծի յառաջուղիմու-
թեանս արարօղ , հանրկիւ ընդունի . զի կամ
բնազանց իմն շնորհք սքանչելագործութանց ,
կամ աներևոյթ օգնութիւն Աստուծոյ էր՝ որ
յաջողէր զգործս նոցին : Եւ կամ

§ 19. Մեծամեծ արհէլէխոսսոյն անուխեանս :

Ձի սոցին քարոզուք առաջին ընկալուաց քրիստո-
նէուէս բողոքովին միտք շփոթեալ և նախապաշարէլք
էին նախկին և հաստատուն ծիսօք կրօնից իւրեանց ,
և հետևապէս՝ կարի դիւրամետք ՚ի նոյն , ոպ և նո-
քին՝ որք նախ զկուսապաշտուի և զմահմետականու-
թիւնդ ընկալան : Գարձեալ զի և ոչ իսկ յառաջնա-
ղդեցիկ իմն նախապատրաստուք հարթեցան եր-
բէք , լի Հրէիցդ՝ որ ՚ի ձեռն թլպատութեան և
նախամանօթութեանն միոյն անյ յարմարեցան
պատրաստեցան կացին յընդունելուի մովսիսական
օրինացն , այլ միտքնոցին բեռնաւորեալք էին կեղա-

կարծ աւանդութեամբ, և անձինք ճշնշեալք չենորանոր սովորութեամբ, մինչ զեկդ բնութիւն ունիլ զտեղին, և դիմադարձ գտանիլ բազմօք նորոյ վարդապետութեայ սորիկ : Նա զի կրթեալ և վարժեալքն ՚ի մարդս հրէական և հեթանոսական պաշտամանց՝ յաւէտ ՚ի նոսին ամրանային անվաւեր իշխանութօր զինաց և հանապազօրդեան դաստիարակութօք ծնողացն իւրեանց : Դարձեալ էին և այլ ազգի ազգի խոչ և արգելք Քրիստոնեութեանս, քանտանելի չարչարանքն, զորս կամ հաւատացեալք անշուշտ յանձնես կրէին, և կամ յերկեղէ նոցուն հանապաղ զդողանի հարկանէին : Եւ որովհետև այսպիսի չարիք հակառակ բնութեան միշտ, յայտ է ուրեմն զի և պատճառ այնպիսեացն՝ ոչ դիւրաւ ընդունելի լինիլ կարէ : Արկնի, զի Քրիստոնեայք չէ երկար ժամանակառունայնսցեալ զրկեալ և ՚ի բնց մերժեալ կացին իշխանական պերճութեց, մատնեցան ՚ի բանտս, տուժեցին զինչս, և որ մեծն է, աքսորեցան ՚ի մետաղս քրայից, տարան անտանելի տանջանաց, և որոց միանգամ հարել կարաց նոցա կատաղուի բռնաւորաց յանձն առին համբերատար ժուժկալութօք, իսկ պատուհաս մահուն այնքան յաճախեցաւ ՚ի նս, մինչ պատմել մատենագրաց ժամանակին, թէ ոչ սով, ոչ ժանտախտ, և ոչ պատերազմ երբեք կարացին սպառել եղձել ապականել զայսքան անթիւան համար բազմութիւնս մարդկան ՚ի միումս ժամանակի, որքան այս խոստովանուի ուղղափառ դաւանութեանս : Իսկ տեսակ մահուն արտաքոյ հասարակաց կերպին, էին¹⁶¹ կենդանւոյն ողջակիցմունք, խաչ, և որ այլ դժոխքներ չարչարանք սոցին նմանողք, զորս անհարկն է ումք առանց մեծի արհաւրաց ընթեռնուլ կամ ՚ի միտ առնուլ : Այս ա-

նագորոյն դժնէութի , որ թէև ոչ յամ տեղիս այլ ՚ի ,
 սահմանս Թին հոսմայեցւոց անլէհատ շարունակե-
 ցաւ ցկոստանդիանոս մեծ , և ուրեք ուրեք հարուստ
 և անդր , այնքան անդոր երևեցաւ ՚ինուաստացուցա-
 նել նուածել զբազմութի հաւատացելոց , մինչ լէ հա-
 կառակն արիւն նոցա անուանեցաւ սերմն եկեղեց-
 ւոյ . և որքան առաւել նահատակէին , այնքան և
 շատ շատանային : Անկ պարտ է մեզ բաղդատել
 զքրիստոնէութի լէ այլակեան կրօնից նաև յայսմիկ
 մասին : Յոյնք լէ որս և այլք ՚ի հեթանոսաց անտի ,
 որք բնաւորեալ են անբաւ գովութի յօդս թուոցանել
 զիւրեանց առարկայս , թուեն կարի սակաւ ոմանս
 ՚ի համար վկայելոց վն հաւատոց իւրեանց , որք մն
 զոմանս ՚ի Տրդիկ իմաստակաց , զՍոկրատես , և զայլս
 ոչ շատ , և հազիւ ոք կարէ ուրանալ , թէ չիցէր
 փառասիրութի առիթ այսմ ամի : Իսկ բազումք ՚ի
 քրիստոնէից անտի՝ որ վասն ճշմարտութեան վկայե-
 ցին հաւատոյ էին արք ռամիկք , նուաստազունք ,
 անծանօթք գրեթէ և յիւրեանց մերձաւորաց .
 կանայք , կուսանք , և երիտասարդք , որ ոչ ցան-
 կութ ունէին և ոչ յոյս մշտնջենաւորելոյ անուանց
 իւրեանց յետ իւրեանց : Ձի արդարև սակաւուց
 ոմանց , նկատմամբ անթիւ բազմութեան որք վկայ-
 եցին վն հաւատոյս , կան մնան անուանք ՚ի վկայ-
 արանս ազգաց , և այժմ ՚ի յայտ դան միայն ¹⁶²
 խմբովին իւրեանց : Դարձեալ զի Տար էր բաղ-
 մաց ՚ի նոցանէ ապրեցուցանել զանձինս իւրեանց
 ՚ի վերահաս վտանգէն չնչին իմն պատճառանօք ,
 զոր օրինակ՝ նուիրմամբ ինկոց ՚ի սեղանս դից , որ
 ոչ կարէր լինիլ նոց ուրացութեան նշանակ , վասն
 զի ՚ի ներքուստ պինդ ունելով ՚ի մտի զօրէնս
 ճշմարտութեան , արտաքուստ կարէին զիջանիլ ՚ի

կարծիս հասարակաց , այլ չարարին : Եւ այսպէս՝
համբերել մահու վն Աստուծոյ՝ ոչ այլոց ումեք ,
եթէ ոչ միայն քրիստոնէից և հրէից պնւտ է ըն-
ծայել : Բայց և հրէից՝ ոչ յետ գալստեանն Քնի ,
և յառաջ քան զնոյն և սակաւ ոմանք համեմատուի
քրիստոնէիցս . յորոց առաւել բարձրաթիւ գտանին
վկայք ՚ի միում նահանգի , քան զհամօրէն
հրէիցդ չէ ամ տեղիս , զորոց և զվն հաւատոցն համ-
բերուի մարթէ հանել առ ժամանակն Մանա-
սէի և Անտիոքայ : Ապաքէն , որովհետև յայտ
ևս գերազանցէ հաւատս մեր քան զայլս , իրաւունք
են ուրեմն՝ յարգի քան զնն ունել մեզզսա : Գարձել
զի յայսքան անթիւ բնուեց իւրաքանչիւր վիճա-
կաց և աստիճանաց մարդկան յայսքան զանա-
զան տեղիս և ՚ի ժամանակս աներկբայաբար վկայե-
լոցն վն հաւատոյս , յայտնի ցուցանի , թէ էր
ուրեմն պատճառ իմն յարատևուն հաստատուի
առաքինուեցն , զոր այլ չիք , քան եթէ լոյս
ճշմարտուեն և կամ հոգին ամբողջն :

Որոց յուլիս և հարագոյնս ինչրէն հաստատուի :

Եթէ ոք ոչ շատացեալ առարկելովքս ցայս վայր ,
ինդրիցէ իւր հզօրագոյն հաւաստիս , գիտացէ .
զի նիւթոց զանազանեւոց յինքեանս ,¹⁶³ պիտի և զա-
նազան փաստից փորձ . մի՛ առ չափաբերուի , միս՝ առ
անդամաշննուի . այլ ՚ի ինդիրս երկբայականս , և
այլ ՚ի ցոյցս ճշմարտութեան : Մեզ պնւտ է հա-
ւանիլ վկայուեց մատենադրաց , ապա թէ ոչ ոչ մի-
այն պէտք պատմութեանցն կորնչին , այլև սէր և
առինչքն ընդ մեջ ծնողաց և ծնեցելոցն համանգա-
մայն անհետանան : Ձի զմե՞¹⁶⁴ գիտիցէ ոք , թէ ով
ուր որդի իցէ : Ամբ եղեն ան , զի որոց ՚ի մենջ

Հաւատալն հաճէր, մի լիցին յաւէտ հարթք և
 դիւրինք ը առարկայիցն՝ զորս մտօք ըմբռնեմք, (զի
 ընկալնուլ ակործէր զնոյն ՚ի մէնջն հաւատ իբրև
 զնշան Տաղանդուէ՝ քան եթէ մտաքնին ընտրու-
 ղուէ,) այլ այնքան, որչափ և բաւական լինէր կոր-
 զէլ զմարդիկ ՚ի հաւանուէ ճշմարտուէ հաւատոց,
 և համոզել զնս յորս չեն հակառակ բնութեան:
 Աստուստ աւետարանն է փորձաքար, որ փորձէ զհա-
 մեստ առաքինութիւն մարդկան: Արդ՝ որովհետև
 փաստքս ցարդ առարկեալ զայնքան հոյակապ և ի-
 մաստուն որեար զօրեցին աշակերտել յիւրեանց ըս-
 տուգութիւն, իսկ և իսկ հաստատի, թէ առիթ
 անհաւանուէ ոմանց չէ հաւաստեաց պահասութի,
 այլ նիւթն¹⁶⁸ հակառակ ներսին ունակուէ և կրից իւ-
 րեանց, մինչ ը այն իբրև ը արդար ինչ նայել չկա-
 միլ: Քանզի ծանր է նոցա թեթևինչ գրել զփառս՝
 խլիստ է և յուսկէտ համարել զշահս, զորս պարտ
 էր նոցա առնել ամբերով զանձինս իւրեանց ՚ի Տա-
 ղանդուէ պատուիրանին քնի, եթէ զաւանդեալնս
 ՚ի նմէ անվթար համարէին: Այլ որ մեծն է ընդու-
 նին նոքա զազգի ազգի վիպասիկ աւանդանիս հիւ-
 նեալս ՚ի վկայուին՝ որոց արդ և ոչ հետք ճշմար-
 տութեանն կան, և ժխտեն աւետարանի տն, ոյր
 մասամբ՝ ՚ի վկայութենէ հրէից մինչև ցայսօր ժա-
 մանակի, և մասամբ՝ ՚ի խոստովանութենէ քրիս-
 տոնէից ը ամ տեղիս՝ հարկիւ ցուցանի անստերիւր
 ստուգութիւն: Ապաքէն այս ը երկար յարատևու-
 թիւն, այս գերմարդիկ օրինակաւ տարածութիւն
 քրիստոնէական հաւատոյս՝ մղեն զմեզ խոստովանիլ
 աստուածահրաշ սքանչելեաց զնոյն գործ իսկ
 թէ ոչ՝ զայս մի և եթ յուշ ածել, զի որ կարաց
 առանց սքանչելեաց առնել զայնչափ զօրութիւնս,
 մեծ արար քան զամ սքանչելիս:

ՀՈԳՈՆԻ ԳՐՈՎՏԻՈՍԻ

Քրիստոնէական Ճշմարտութեան

Գ Ի Ր Ք Գ

§ 1. Ստուգութիւն գրոց նր Ուխտի :

Որ Պիանգամ յառ ձեռն առաջարկուեց աստի , կամ որ յայլ ևս բնց ՚ի սոցունց հաւաստեաց յաղթահարեալ , զնոյն զ ՚ի քրիստոնէիցս խոստովանեալն ասեմ հաւատ գերազանց և ճշմարիտ գատիցի , առ բարևք յիւշ առնելոյ ուրոյն զմասունս նորուն՝ դարձ նմանդէն ՚ի տեսուիս գրոց պարունակողացն յինքեանս զնոյն՝ զոր և կտակարանս անուանեմք , կամ լնւ ևս նոր ուխտիս աւանդ , առաջիկայն է , պատրաստ է : Քանզի վրիպի , որ ուրանայն թէ՛ լրումն հաւատոյս մերոյ չբովանդակին ՚ի նոսին , յի համաձայն խոստովանուեալ առ հասարակ ամ քրիստոնէսոյ ազգաց և աշանց . յի որում տեսանէ , զի ամ ծիսից և կրօնից մարդկան , եթէ բարեաց և թէ անբարեաց պատշաճ ու պարտ է զնոյն խոստովանիլ անվրէպ գանձարան հաւատոց իւրեանց , ո՞պ և հետորդք մահմետի աղանդոց իւրեանց երազահան դնեն զնորին մտածածին զԱլկուրան : վնկ՝ ո՞պ ՚ի վերագոյնդ ապացուցաւ ճշմարտութի հաւատոյս շտեմարանելոյն ՚ի սոսին , նոյնպէս և այժմ՝ նովին սկզբամբք հաստատի սոցին ստուգութիւն : Այլ եթէ ումք կամք իցեն վճիտ կրկտել ինքեանց զնոյն ,

պարտին առ ձեռս ունել իւրեանց զքանոն ամարդարացի քննչաց , զի որ կամիցի զայսքան դարուց և զդարուց հետէ ընկալեալ գրեանն ջրել , պարտի յառաջ բերել փաստս դերևեցուցիչս հաւանականու թեանց նոցին . զոր եթէ չկարիցէ , ուրեմն գրեանն ինքնին ընկալեալ ստուգուիքքն իւրեանց ջատագովին , հաստատին , և կան :

§ 2. Են որոց և ոսին գրեանն :

Ապաքէն զգրեանն՝ զորոց չիք դիմասուի առ քրիստոնեայս նոցին ասեմք հարազատս , զորոց և անուանս մակագրեալ ունին ՚ի ճակատս իւրեանց , վնդի նախնիք , զորոց տէս ինձ յանուանէ և յականէ¹⁶⁶ զՅուստինանոս , զԵրենիոս , զԱղէմէս , և զայլ զկնի նոցա , սովին անուանակոչուի հռչակեցին զնոսին . մանաւանդ զի և Տերտուղիանոս՝ ինչ ինչ ՚ի նախատիպ գտղափարաց գրոցն ցիւր ժամանակս երկարեալս դնէ : Դարձեալ զի ամ եկեղեցիք ընդ տիեզերս սովին մտօք ընկալան և ՚ի գործածէին նախ քան զընդ հանրական ժողովս . և ոչ ոք ՚ի¹⁶⁷ հրէից կամ ՚ի¹⁶⁸ հեթանոսաց կարաց առ գամմի ևս ՚ի վէգ մտանել , թէ չէին՝ որոց և խոստովանէինն : Ուրզի՝ և¹⁶⁹ Յուլիանոս անգամ յայտնապս խոստովանի զնոսին հարազատ գու գրած Պետրոսի , Պաղոսի Մատթէոսի , Մարկոսի և Ղուկասու , զորս ընթեռնուին քրիստոնեայք յանուն իսկ նոցին : Եթէ Հովերոսի և Աիրգիլիոսի իցեն գրեանքն յանուննոցա՝ ոչ ոք ՚ի լրջմտաց երկուանայ , յաղագս սորա առ լատինս՝ և նորա առ յոյնս եղելոյ յարատե սուանդուէց . քանի՛ առաւել ապա՝ և ստուգուի հեղինակաց գրոցս պատասպարելոց վկայուիք գրեթէ ամ աղգաց ՚ի :

§ 3 Ասիւնիսն ՚ի հնունս զգրոց ոմանց մերժին :

Ասն գրուածք ինչ ՚ի Ատակարանսն արդէն իսկ ՚ի վար առեալս ՚ի մէնջ , զորս ՚ի հրումն նոյնաւասար ոչ ընդունելին , որ են թուղթ Պետրոսի երկրորդ , Յակոբայն , Յուդային , երկոքին կաթուղիկեսայք Յովհաննու երիցու , և թուղթն առ Եբբայեցիս : Սակայն և այնպէս բազումք ՚ի նախնի եկեղեցեաց ընկալան զնոսին , և այս յայտ անտուստ է , զի առաջնորդք հաւատոյս մերոյ բազում ուրեք քաղեն ՚ի նոցունց վկայուլն իբրև զսքց գրոց : Ուստի հետևի , զի եկեղեցիքն այնոքիկ , որ ոչն ընկալան զնոյն ՚ի սկզբանէ՝ անծանօթ էին նոցուն , որով և կարծուտ և երկուտ , բայց զինի իբրև լիովին ճշմարտուէն հասին ՚ի վերայ , սկսան այնուհետև օրինակաւ այլոց օգտել անձանց զնոցին գործածութիւն , ոպ այժմ հասարակեալ տեսանի չէ ամ տիեզերս : Նաղի և հաւանականուէ իմիք պատճառ չիք բնաւ , թէ զիւրդ տարակուսելի գիրքն թուիցին , յորոց ոչ ինչ առաւել քան զոր պարունակեալն են յանտարակոյս և անշուշտ գրեանսն արտագրիլ կարեն :

§ 4. Մտոգութիւն անանոան գրոց ՚ի Գրեւեացն ցուցեալ :

Թէ ընդէր յեցեալ ոմանց ՚ի տգիտուիս անուան և եթ հեղինակին նուաստացուցանիցեն զհաւատ թղթոյն առ եբբայեցիս , և կամ յուղեալ իսուվեալ ՚ի կարծիս իւրեանց , թէ արդեօք Յովհաննու առաքելոյ իցեն երկոքին կաթուղիկեսայքն , թէ այլում համանուան նմին երիցու , իսպառ ՚ի բնց քերեսցեն յինքեանց զնոցին յարգանս ևս և զՅայտնուէն , չիք ազդու պատճառ : Զի առ մատենագիրս ինդրի

յաւէտ զօրութիւն գրուածոցն , քան թէ անուն Տեղի-
նակին : Եւ այսպէս շունիմք զարդիս զանազան մա-
տենանիս պատմութանց՝ զորոց չգիտեմք զՏեղինակս
թէ՛ ո՛վ . զոր օրինակ զԱեսարոսի պատերազմին Շ-
Աղեքսանդրեայսն վէպ , վասն զի տեսանեմք զնոյն
գրեալ յումմէ և իցէ յառնէ առաջիկայ և համայա-
ւիտեան եղելոյ իրացն պատահելոց : Սմին իրի՛ և
այնինչ աւանդութիւն գրոցն՝ զորոց են բանքս , յառա-
ջին գարու կեցեալ զինքեանս՝ և ձրիւք առաքե-
լուք զարդարեալս վկայեն , պարտ է մեզ շատանալ
նոքիմքք : Բայց թէ պնդեսցէ ո՛ք , բն՝ այսպիսի
հանգամանք իբր ՚ի բազումս սայօգիլ կարեն , ող
նաև անուանքն ՚ի զանազան գրեանս երևի ինձ զան-
հաւատալեաց ցնորել , իբր այնթէ՛ նոքին , որ Խմիւ
Խմի զարբութեանն և զճմարտուք փոյթ յանձինս
կրէին , անհարկի հարկեալ իցեն վնասապարտ ստու-
թեանցն գող , որ ո՛չ միայն գարշելի բարեաց ծա-
նաչէր չարիք , այլ նաև գլխովին զառնելեացն իւ-
րոց տուծէր զպատուհաս ՚ի Հռովմէական օրինացն :

§ 5. Գրեաց Ուխտիս Ճշմարտութիւն :

Ատակարանքնոր ուխտիս կամ ՚ի նոցունց՝ զորոց և
անուանս ունին ՚ի ծակատու՝ գրեցան , կամ յայն-
ցանէ՛ սր սկզբնահարք նոցուն ծանաչին : Արդ՝ ո-
րովհետև սոքա զստուգուի զորոց գրէինն՝ կրէին , և
իղճ պատրանաց՝ յորոց խորշէինն՝ չունէին , զհետ
գայ , զի զոր գրեցինն՝ ճմարտուք գրեցին : Պատ-
րանք յառաջ գան կամ յանգիտուի նիւթոցն , և կամ
՚ի չարուի կամաց գրողին : Բայց ¹⁷⁰ Մատթէոս , Յով-
հաննէս , Պետրոս և Յուդաս հաւասար երկուտա-
սանինցն ընտրեալ գորով ՚ի քնէ վկայս վարուց և վար-
դապետուեց իւրոց , անգէտ չէին զորոց և գրեցինն :

Նոյն և ¹⁷¹ զՅակոբայ ասիլ կարէ , որ կամ մի յառա-
 քելոց անտի էր՝ և կամ ը ոմանց մերձաւոր արեւնա-
 ռու կենարարին , և յերկոտասանից կարգեալ տե-
 օուչ եմի : Ոչ և զՊօղոս ունայնացուցանէ տգիտութի
 զորոց զՅմէ թագաւորողէն ՚ի յերկինս յայտնեալ
 ինքեան խոստովանի . ոչ նաև գործքն զորս նա գոր-
 ծէաց զօրէին խաբէր զինքն . կամ ¹⁷² զՂուկաս որ ան-
 բաժան վիճակակից և հանապազորդ ընկեր ճանա-
 չէր ամ գնացից նորուն : Ոչ և սայս Ղուկաս անուս էր
 ամի՞ զոր գրեացն վս կենաց և մահուանն Յսի ,
 քի զի դիւրաւ հասու լինել կարէր իրացն ճշմարտուէ ,
 գուով , ող և էրն իսկ . ծնեալ ՚ի սահմանակից գա-
 ւառի , շրջեալ ը ամ Պաղեստին , խօսակից և ա-
 ւանդառու լեսլ ող ինքն խոստովանի , որոց ՚ի սկըզ-
 բանէ ականատեսեղեն և վկայ Բանին . ծանօթ
 բազմաց ՚ի Վենարարէն բժշկելոց , և յարութեան
 նորին ահանացի վկայելոցն : Արդ՝ եթէ Տակիտոսի
 և Սուիդանի հաւատս տամք վասն անցիցն բազմօք
 յառաջքան զինքեանս պատահելոց , թիկնելով մի-
 այն յաչալուրջ կրկտանս նոցուն , քանի՛ առաւել ևս
 սմին , որ զամն յականատես վկայից անտի առեալ
 պատմէ մեզ : Անհատ աւանդութի հաս առ մեզ լինել
¹⁷³ Մարկոսի ընկերակից Պետրոսի , այնպէս , մինչ զի
 և այժմ ամ գրուածք նորա ՚ի պետրոսէ շարագը-
 բեալք համարին . զորս եթէ արդարև Պետրոսի
 տացութի , չմնայ այլ ևս նշան տարակուսի յստուգու-
 թիւնս նոցա . թող զի և գրեալքն ՚ի նմանէ բովան-
 դակապէս պարունակին ՚ի գրուածս նոցին իսկ ա-
 ռաքելոց : Ոչ խաբիւր նաև ¹⁷⁴ Հեղինակ յայտնու-
 եցն , որ զտեսիլսն զամ յմ) տուեալ ինքեան հա-
 ւաստէ : Ոչ նաև ¹⁷⁵ գրիչ թղթոյն առ Եբրայեցիս ,
 յայնս՝ զոր կամ ՚ի հոգւոյն ւ) և կամ յառաքելոց
 անտի ուսեարս խոստովանի :

§ 6. Եւ զի սպել ոչ տրեկն :

Երկրորդ՝ զի չէին սք հակամէտ ՚ի պատրանս խաբէուէց յայտնի անտուստ երևի, զորս ՚ի վերագոյնդ յառաջ բերաք ՚ի հաստատուի ճշմարտուէ հաւատոյս առհասարակ, և ՚իսկուէ յարութեանն քսի: Բայց թէ ոք դէմ այսմ առարկիցէ, թէ նոքա ինքնուրոյն և կամակար մտօք գլորեցան ՚ի ստուէս պնդաւ յատեան հանել փաստս նմին հաւանարար: Այլ այս ոչ կարէ տեղի ունիլ աստանօր. քզի եթէ ոք զայս ամ արարելս կարծ իցէ առանձին իմն պատճառաւ, քննել պիտի, թէ առ ինչ արդեօք: զի արդարև ոչ էր վախճանաւ շահուց իմիք, և ոչ վասն փրկուէ իւրեանց ՚ի վաղահաս վտանգից, ուր ընդ հակառակն վասն այսր հաւատոյ ուղղափառ դաւանուէս, ոչ միայն զամ ինչս զոր ունէին կորուսին, սյլ և չէր վտանգ, չ որ ինքնագրաւ շահատակութեան իւրեանց ոչ մատուցանէին: Արդ եթէ չէր այս ամ վասն առանձին իմն վախճանի, էր ուրեմն վս փառացն ան, և եթէ վս փառացն ան, որ զոչ ոք բուանաբարէ ՚ի խաբս և ՚ի պատիրս ստուէց, մանաւանդ յգգուլաշիս առարկայ, զորմէ կախի յայաւիտեանական փրկութիւն ազգի մարդկան, ուրեմն լի ամ ճշմարտութե հաւանի: Գարձեալ զի այսպի չարապարիշտ անօրէնուէս բարութիւ զնոցանէ հրաժարեցուցան զմեզ³⁷⁶ վարդապետութիւն քննիցին լցեալ սրբութե ընդ իւրաքանչիւր մասունս իւրեանց, միանգամայն և անարատ վարք նոցա՝ միշտ անենթա կայն այսպիսի բամբասանաց, որ և ՚ի թշնամեաց իսկ իւրեանց ՚ի դէմս նոցին բերողացն ասեմզմի միայն նոցին զանհմտուէս, (որ և հարագէտ լինել խաբէուէց չմարթէր,) անդատապարտ գտանին:

Դարձեալ եթէ էր առ նս գէթ նշանախեց իմն անհամեստուէ, ոչ երբէք յաշտանակի դնէին զմեզ իւրեանց ՚ի մշտնջենաւոր նախատինս և յամօթ երեսաց իւրեանց . որպէս¹⁷⁷ փախուստն առաքելոց , և¹⁷⁸ երիցս ուրացուծիւնն Պետրոսի ՚ի վտանգիլն անդ քրիստոսի փրկչին մերոյ :

§ 7. Եւ յստանելագործ շնորհաց նոցա :

Այլ չհակառակն՝ քաջահաւատ ստուգուեց նոցին ան ինքնին վկայեաց զարմանահրաշ և ակներև սքանչելեօք , որոց¹⁷⁹ ինքեանք և աշակերտք իւրեանց քնջ ջատագով հանդիսացան . հետեւեցուցանելով նոցին և զանուանս անձանց՝ և տեղոյ և ժամանակին : Չորոց զհաւաստին ճշմարտուէ, կաս անճշմարտութիւն կարէր արդարև յերևան հանել բուռն և հետագօտ քննութիւն դատաւորոց , ՚ի մէջ որոց՝ այս յաւետ է արժանի սքանչանաց և ազատ ՚ի տարակուսանաց բան . զի խօսէին լեզուս զորս ինքեանց ամենևին չէր ուսել, և այն՝ ակնյանդիման անթիւ բաղմուէ մարդկան . բժշկէին միշտ զախտս ցաւագինս ՚ի բաղմամբօխ հրապարակս : Աներկիւղ և համարձակ քարոզէին, թէպէտ և անշուշտ գիտէին , զի հզօր զօրուք զինեալ էր հակառակ ինքեանց դատաւորացն հրէից՝ ևս և անիրաւ ատենակալացն հռովմայեցւոց . ոյք ոչ անտես առնէին կրկտել պատճառս զրպարտուէ առ ՚ի դատապարտել զնս ՚ի մահ գառնագին , իբրև զքարոզս նորահաւատ օրինաց : Ոչ հրէայք , և ոչ հեթանոսք , որ համայաւիտեան նոցին դիպեցան՝ ժպրհեցան երբէք ուրանալ զառ ՚ի նոցունց սքանչելիս , այո՛ և¹⁸⁰ Պղէզոն գերին փրկանաւոր՝ Անդրիանոսի կայսեր մատենագրէ զհրաշագործուիս Պետրոսի ՚ի յիշա-

տակարան անդ իւրում . նաև քրիստոնէայք ՚ի գիր սըն յայնոսիկ , ուստի համարս տան զհաւատոցն իւրեանց առաջի կայսերաց , թագաւորաց , և իշխանաց , խօսին զայսցանէ իբրև զհանրահոջակ և ըզյայտնի ճշմարտութեանց . բնցէ ՚ի բայց հալածելով զամ կեղահարծ երկուանս , և պնդելով ևս թէ զարմանահրաշ ներգործուիքս այսոքիկ մշտնջենաւորեցին ՚ի գերեզմանս նոցա՝ բազմօք զկնի : Ապաքէն եթէ սուտ լինէր առարկուի նոցա , ինքեանք անպատիժ անպատուհաս ոչ զերծանէին , և զամօթ և զնախատինս յանձինս իւրեանց յաւէտ կրէին : Բայց ընդ հակառակն՝ սքանչելեացս ՚ի շիրմաց անտի յառաջելոցն , (զորոց են բանքս ,) այնքան հանապազորդ նշանք , և այնքան բաղմաթիւ վկայք ՚ի վեր երևեցան , մինչ զէ և ինքն¹⁸¹ Պորփիրոս հարկիւ միեցաւ խոստովանիլ զնոցին ճշմարտուի : Թէ պէտ և շատ էր յասացելոց աստի հաւանիլ ճշարտուեն , սակայն որովհետև կան և մնան տակաւին յողովութիւնք հաւաստեաց , որք իբր բռամբ կալեալ ամեն զմեզ ՚ի հաւատս ստուգութեան գրոցս այսոցիկ՝ ուրեմն

§ 8. Եւ ՚ի գրոսածոցն որք այ յայնոնի :

Քանզի գոն գուշակուիք ՚ի նս յաղագս իրաց ինչ զորս մարդ բնական իւրովն ազդեցութեամբ գիտել ոչ զօրէ . բայց և զուգընթաց գիպուածովք պատահարացն անվթար կատարեցան : Զոր օրինակ .¹⁸² շոյտ և համասփիւռ տարածուի Աւետարանին , սորուն և¹⁸³ յաւիտեանս տևողուի ,¹⁸⁴ արհամարհին ՚ի Հրէից անտի ,¹⁸⁵ ընդունին ՚ի հեթանոսաց ,¹⁸⁶ ատելուի հրէից և քէն զխոստովանողաց այսր հաւատոյս ,¹⁸⁷ չարաչար պատուհասն որ ՚ի վն գալոց էր նոցա վն այսր ,¹⁸⁸ պաշարումն Եմի , կործանումն տաճարին , և¹⁸⁹ անհարին տառապանք ազգին Հրէից :

§ 9. Եւ ՚ի խնամացն անց զի վ' սուսա գրուէ՛ բռնասցին :

Յարի՛ զի եթէ դիցուք աստանօր զայն նախախնամուին զմարդկային արարածովք, մանաւանդ զորովքյանկին գլխովին ՚ի պատիւ իւր և ՚ի փառս, անհարին լինէրնմա թողուլ այսքան անհամար մարդկան, որոց չէր գիտումն ինչ քան զնոյն իսկ զպաշտօն երկրպագութեն ինքեան՝ հոգևով և ճշմարտութեամբ, սահիլ ՚ի պատրանս խաբէութեանց ստյոգուն գրոց : Եւ թէպէտև այսքան խուռնընդոսա ձգեալ տարածեցան ելուստք աղանդոց, սակայն դեռ ևս հազիւ երբէք գտան ոմանք՝ որ կամ¹⁹⁰ համանգամայն և կամ գէթ լը մեծի մասին ոչ ընկալան զգիրսոյ . բայց յոմանց անտի՛ զոչ ՚ի մանաւորի ինչ տանողացն յինքեանս : Եւ հաւանական պատճառ ոչ գուրյն ՚ի նոսա առիթ հակառակուեց այս է՛ զի դասդասք աղանդաւորացդ այնքան ռիւերիմ առելութեբ բերին առ միմեանս, մինչ զի այն՝ որ հաճոյն սԹ է, յղգստորին իսկ պատճառի անհաճոյ միւսոյն լինի :

§ 10. Բապտիսմ հապեանէ անհատան գրան :

Եղեն արդարև ՚ի միջոյ ըկ անուն հաւատացելոց ոմանք, որ ժխտեցին գրոցն դիմադարձ ընթացողաց մանաւոր կարծեացն իւրեանց, զոր օրինակ այնք՝ որ կամ առ¹⁹¹ տարապայման առելութեն իւրեանց ընդ ազգին Շ հրէից զածն յուզայ՝ զարարին և զԸ հանուր օրէնսդիրն Պի անարգեցին, և կամ¹⁹² վհատեալքյան հարին տառապանաց անտիքրիստոնէիցն ՚ի վերայ հասելոց հանապազօր՝ ամուր ապաստանի կալան ինքեանց զանունն Հրէութե, որպէս զի¹⁹³ անպատիժ և անսասան զիւրեանց կրօնից զանշուշտ զխոստովանուի կալցեն : Բայց և երկոքին սոքա խոտան գտան յաչա քրիստոնէից Շ ամենայն

տեղիս և ՚ի Ժամանակի անդ սյնմիկ՝ ուր ամսրբասէր
 հոգի թէպտեւ դիմաբաժան ՚ի միմեանց՝ մեծաւ համ-
 բերութե 194 ժուժկալէին լը առաքելականն պատ-
 ուիրանաց : Առաջին դասու այսօրէն պոռնկողացն
 սատմ դքրիստոնէութիւն , լը բաւականին՝ ուղ ինձ
 թուի՝ լը դէմ զինեցաք ՚ի նախակարգեալ գիրտը .
 ուրանօր ապացուցաք թէ՛ մի է իձ , որոյ և հս է
 արարած : Այլ զի այս ինդիր քաջայայտ ևս
 ճշմարտի ՚ի գրոց անտի , զորս և ինքեանք վն առե-
 րեսս ձեացուցանելոյ զինքեանս քրիստոնէայս լը-
 ունին , որգոն ՚ի մասնաւորի Աւետարան սքն Ղու-
 կասու , յորուստ բացերև փայլի , զի զոր Մով-
 սէս և Հրէայք պաշտէին , զնոյն և քրիստոս՝ իձ
 քարոզեաց : Իսկ եկեղին լը դէմ զինեցուք , երբ
 պատեհ հասանիցի մեզ դերևել զՀրէայս , և կամ
 զորս այնպսն անուանիլ կամիցին : Արդէն զայս
 մի և եթ զմտաւ ածեալ , թէ քանի՛ զարմանաց
 ոչ իցէ նոցին անամօթութիւն , որք առ ոտն հար-
 կանեն զվկայուհն Պողոսի , ուր ոչ ոք յառաքելոց
 անտի այնքան բաղմաթիւ եկեղեցիս հաստատեաց՝
 որքան նա , և ոչ ոք այնքան երևելի հրաշս զար-
 մանագործեաց՝ որչափ նա , մանաւանդ յայնմ Ժմնկի՛
 ուր՝ որպէս և ասացաքս , դիւրաւ ՚ի քննին ելանէին
 ելք իրացս : Արդ՝ եթէ հաւատ նուիրեմք սքան-
 չելագործուեց նորին , լըէր ոչ ապա և երկնաւոր
 տեսլեանն . և լուսոյ ճշմարտութեան հաւատոցն
 յայտնելոց նմ՛ի քնէ : Զի որ այնչափ սիրելի դտաւ
 քրիստոսի , անհարին էր ուսուցանել ինչ հակա-
 ուակ քնի՛ ուր թէ և սուտ իսկ : Այլ նք կեղտ զայս
 դնեն զմմանէ , զի համարեցաւ ՚ի կանուի օրինաց
 անտի աւանդելոց ՚ի մովսիսէ՝ տրիլ ազատուե իսրա-
 էլեան գրոհին , սակայն և այսմ չիք այլ ինչ առիթ

Տարկեւոր քան զնոյն զճշմարտունի : Զի և ինքն իսկ
¹⁹⁶ Թլպատելն էր , ¹⁹⁶ պահէր կամաւ զբաղումն ՚ի մա-
սանց մովսիսաւանդ օրինաց վասն քնական հաւա-
տոյս , ¹⁹⁷ կատարէր գործս անհարին տարժանեաց ,
տանէր անտանելեաց ևս քան զոր օրէնքն հրամայե-
ին , կամ յորոց իւր չկայր ակնկալուի ինչ :
¹⁹⁸ Առիթ լինէր աշտկերտաց իւրոց համբերուեց և
առից նոցին , ուստի և յայտ է՝ զի յորոք լսելեաց
կամ ՚ի շահ անձանց հետեւողացն իւրոց՝ ոչ ինչ աւան-
դեաց . ¹⁹⁹ որ փոխանակ հրէական շաբաթ ապահուե-
ուսոյց նոցա զօրհանապազ պարապիլ ՚ի պաշտօն փա-
ռացն ւայ . փոխանակ դիւրատար ծախուց օրինական
ողջակիզին՝ ²⁰⁰ զհամայն ընչից արհամարհանա . և
փոխանակ անբանարեանցն հեղմանց՝ ²⁰¹ զիւրեանց իսկ
զարին ւայ պատարագել : Գարձեալ զի Պօղոս իւրո-
վին յանդիմանէ ²⁰² Թէ Պետրոս , Յովհաննէս և
Յակոբոս ետուն նմա զձեռն հաւանութեան : Արդ՝
եթէ ձեռնտուուիս չիցէր ճշմարիտ , բնաւ չհա-
մարձակէր ՚ի կենդանութեաննցն , (որոց մարթ էր
դիմադրել ինքեան և փչել յայտնի զիւրն սուտ ,)
այսպէս հռչակ յատեան հանել : Անկ թողեալ ըզ-
կեղտս զորոց խօսեցաքս՝ որք և անուան քրիստոնե-
ուե անգամ ոչ են արժանի՝ յարեմք , զի ամենատոյգ-
խոստովանուի առ հասարակ ամ հաւատացելոց
բազմուե յընկի նոցին զգիրս , սքանչելագործութիք
հեղինակաց նոցին և մասնաւոր ինամ ւայ զայսպի
նիւթովք , բաւական են մելել զանկողմնապարիշտ
և զարդար մարդիկ ՚ի հաւատս գրելեացն ՚ի նոսին :
Զի հաւատան բազմաց պատմաբանական գրեանց
որոց չեն լը սց այսչափ բուռն ապացուցուիք .
միայն Թէ կարիցեն հզորագոյն փաստս դէմածել
սոցին , որ արդարև յանհարեաց սակի է :

§ 11. Անյարելի է գերոյ լուծանէն

Առարկիցէ՞ ոք թէ պատմին ինչ ինչ ՚ի գիրսդ գըլ-
խովին անկարելիք : Կանխաւ արդեօք ցուցաք թէ
են ինչ անկարելիք ՚ի մարդկանէ , այլ կարելիք առ
յայ , որդոն՝ այնք որ չընդ իմանան յինքեանս , չ որս
թուին և թուեալքն ՚ի մէնջ անկարելիք . այս է ,
Տրաշք , յարութիւն մեռելոց , և : Եւ այսպէս՝ Տա-
կասութիւնդ չունի իւր զկատարեալ Տաստատուի :

§ 12. Կամ անկամայայն բանի :

Չէ փոյթ անսալ եթէ առարկիցեն , թէ կան ինչ
ինչ ՚ի գիրսդ անհամաձայն ուղիղ բանի : Նախ՝ զի
կեղծիք այնպիսեացն ջրին ՚ի խուռն բազմուէ Տոյա-
կապ և հանձարեղ արանց որ ՚ի սկզբանէ հետէ յե-
ցեալ թիկնեցան ՚ի հաւատարմուիս նոցին՝ անձամբ
խկ հետևողս լեալ : Երկրորդ՝ զի զնոյն հաւատեն
մեզ և առարկեալքն ՚ի մէնջ յառաջին գիրս՝ համըն-
թաց գոլ լուսոյ բանին . որդան , թէ է ան , որ և մի
և ամենակատար , ամենազոր , ամենիմաստ , ամենա-
բարի , արարիչ անի որկանս , ինամիչ տիեզերաց ,
մանաւանդ՝ մարդկան , և վարձատուր յանտիս՝ որոց
յաստիս պահեն զպատուիրանս նորա : Թէ պարտիք
են մեր սանձահարել զմարմնական ցանկուլս , և չ-
որում բնուստ իմն են մարդկան ընկերական կեանք ,
սիրել զմիմեանս . զորս մի մի յանդիմանեն քեզ սք
գիրք : Բայց ճշդեւ բան զայս յաղազս անեղէն բը-
նութեան , կամաց նորա , և ²⁰³ այն լոկ բանիւ մարդ-
կային իմացականութեան , եթէ քանի՞ անկայուն ի-
ցէ և դիւրակործան ուսուցանեն մեզ ոչ միայն այս
քան վաղէմի վէճք ՚ի մէջ զանազան դպրոցաց չդէմ
իրերաց , այլ և կարծիք ուրոյն ան իմաստասիրաց :

Եւ այսմ չէ զարմանալ, զի թէ վիճարկուք ՚ի վրձնութեան առանձին հոգւոց իւրեանց այսքան խորախոր գահավիժեցան ՚ի տարբերութիւն կարծեաց՝ որքան առաւել ևս ոչ սուղանէին արդեօք փորձիչք գիտուէ գերագոյն հոգւոյն, որ անցանէր ընդ ամչափս հասողութեան մտաց իւրեանց : Քանզի եթէ թեակոխել իմանալ զմիտս իշխանի մեծ իմն եղին վտանգ գիտունք մարդկային կառավարուէն՝ ո՞րքայնքան խորիմաց ուրեմն՝ մինչ թեւել ՚ի խորհուրդս ան ազատիշխան տնօրինչին անի : Անկ գեղեցիկ իմն վճռեաց պղատոն յասելն թէ՛ ²⁰⁴ չիք որ առանց յայտնուէ իմանի : Արդարև ոչ ինչ քան զպարունակելք ՚ի գիրս նորոյ ուխտիս օրինաց յառաջ հանեն յայտնուէք : Չէ պնդել ևս՝ եթէ յայանեալ իցէ ան ինչ զքնուէ իւրմէ առ ազգս մարդկան տարբեր յաւանդելոցն ՚ի սոսին, նաև չէ հաւանական՝ եթէ հրատարակեաց նա յապայտ զիւր կամս սմին խափանիչ : Այլ եթէ ՚ի միջասահման և յանզանազան տեսակաց անտի ոմանք, որ ոչ ճշգիւ հարկաւորքն էին և ոչ իսպնու լի ինքեանց չարք, պատուեցան և ընկալան նախքան զքն՝ ոչ իւրիք հակառակ գրոցս գնան, վնդի ՚ի նիւթ այսպի նոր օրէնք ՚ի բնաց բառնան զհինան :

§ 13. Են ինչինչ ՚ի գերոգ անամոհոյն երբեաց :

Բնաւորեալ են ոմանք ստգիւտ դնել գրոցս վնան համաձայնուէ մասնաւոր իրաց պարունակելոցն ՚ի նոսին : Այլ որ արդարահայեաց մտօք քննէ, գտանէ զոյն զայս իբրև ապացոյց անվթար ստուգութեան նոցին : քզի յայն տեղիս՝ ուրանօր աւանդին նիւթք հաւատոց և կամ առարկայք պատմութեանց՝ վճիտ իսկուք համաձայն միմեանց ընթանան, զորոյ նմանն չէ ուրեք տեսանել ՚ի գրուածս

Համահաղոյն կրօնից , թէ եբբայականին՝ թէ
 հելեն սոփեստիցն՝ եթէ բժշկականին , և թէ օրէնս-
 գիտացն հռովմայեցոց . յորս յաճախին հակառա-
 կութիւնք և վէճք ոչ միայն համակրենիցն առմի-
 մանս , ոնց Պլատոնին և Քսենոփոնին , այլ անձին
 չէ դէմ իւր ինքեան , երբեմն զայս՝ և երբեմն զայն
 ջատադովելովն . ոնց թէ մոռացել էր զինքն , կամ
 չգիտէրն թէ զինչ խօսէր : Ուր զորոց բանքս են
 հեղինակք , միաբան զնոյն հաւատալիս քարոզեն
 մեզ բան , միաբան զնոյն աւանդեն յիշգս վարուց , մա-
 հու , և յարուեն քրիստոսի , և զամ գնիւթաւորս և
 զգուշալիս գրեթէ յամ ուրեք համաձայն կնքեն :
 Իսկ առ փոշետեսակ պարագայից տարաձայնու-
 թիւնս գիւրին է հանել մեզ համապատշաճ ձայնակ-
 ցութիւնս , թէպէտ և յապաղեն զմեզ ՚ի նոյն նմա-
 նութիւնք իրացն եղելոց յառաջին ժամանակսն , և
 կամ երկդիմուի և հոմանունուի մարդկան , տե-
 ղեաց , և նմանեաց : Է միւս ևս ձեռնարկութիւն ,
 որով ազատ կացուցանին հեղինակք ՚ի զրպարտուի
 խաբերոյ իւրեանց զոք . և է այս , զի որ ստոյն
 լինին ջատագով՝ իբր ՚ի բազումս բնաւորեալ են
 խարսխել զնոյն ՚ի ձեռն զուգընթաց փաստից ,
 պարունակողաց ինքեանս զտարբեր առարկուիսգր-
 ուածոց իւրեանց : Զորս չիք աստէն գտանել ՚ի գիրս
 սքս : Իսկ եթէ վասն խուն ինչ զանաղանուէ , զորս
 չկարացուք միանաւորել՝ ժխտեսցուք զբովան-
 դակ գրուածսն , ապա ոչ ինչ մատեաննք , մանաւանդ
 որ երկիայցն են վիպագրութիւնք՝ մնան հաստա-
 տուն : Բայց որովհետև Պօղիւպէոս Աղիկառնացի ,
 Լիվիոս , և Պլուտարք ունելով զայսպիսի՝ և յաւետ
 քան զսոյն անմիաբանուիս , տակաւին ՚ի հաւատար-
 մութեան մասին պահեն առ մեզ զվկայուիս իւրեանց ,

բանի առաւել ապա չ գէժ կատարելուէ ոչ է մեզ
այսպիսի ջնջին տարբերութե անղազաւ պարտասել
դճաւատս մեր ՚ի սբ գրուածոց նոցին՝ զորս՚ի բանից
իւրեանց ճանաչեմք միշտ հետևողս ճշմարտու-
թեան և սրբութեան լեալ :

§ 14. Հոստոսի նաև յարտոնոց :

Թեպէտ Գար է այլով եղանակաւ ևս հաւաստել
մնոյն ՚ի ձեռն տրտաքին և հակառակ փաստից , սա-
կայն ինձ թուի այսմ անԳարին լինիլ գիւտ .
միայն թէ՛ ՚ի մեջ առցուք աստանօր զբանս նոցա՝ որ
բաղմօք յետոյ սպրդեալ ՚ի ներս , և թշնամիս քրիս-
տոնէուէ զանձինս կալեալ գրեցին , զորս և չ վկայս
կարգել անգամ չէ արժան : Ապաքէն՝ թէ և մեզ
չէն պէտք իմիք ՚ի նոցանէ , սակայն և այն-
պէս բաշումս գտանեմք առ նոքօք վկայուին . որ
մտածաք իւրք հաստատեն զաւանդեալն ՚ի գիրադ
դճաւատին պատմութիւն : Արպէս ասա զխաչե-
լուին քնի , զսբանչելիս նորա և զառաքելոցն՝ Հրե-
այք և հեթանոսք առ հասարակ վկայեն : Յղիս
Հերովդէսի , Պիղատոսի , Փեստոսի , Փիլիքսի ,
Յովհաննու մկրտչի , Գամաղիէլի , և պաշարմանն
Եմի ստուգիւ ճառէ մեզ Յովսէպոս յետ իբրև
ամաց քառտանից ծննդեանն քնի : Արում համա-
ձայնին և որք առ նովին ժամանակօք գրիչք թալ-
մուտացն հանդիսացան : Ասան չարաչար հալածա-
նացն Ներոնի յարուցելոց ՚ի վն քրիստոնէից՝ Տակի-
տոս : Այլին ՚ի Գրումն նաև առանձին և հանուր
գրուած , ո՞ղ ²⁰⁵ զՊղէգիոնին , և ²⁰⁶ հասարակեալ
գրուածք առ որ քրիստոնէայք բազմիցս բողոքեցին ,
որ և համաձայն ընթանային սբ գրոց վասն աստեղն
երևելոյ ՚ի ծննդեան նոն , վն երկրաշարժուէն ,
և վն ժամանակի խաչելութեան նորա

§ 15. Լուծանէ խնդիրն որ վասն փոփոխութեան ան գրոց :

Ոչ ինչ այնքան չէ՛մ տեսանեմ ստուգուէ գրոցս, որքան զայս մի և եթ' թէ չհասին նոքա առ մեզ սկզբնական անարատութն խրեանց : Կոստովանի արդարեւ, զի ո՞ր այլ ամ գրոց՝ նոյնպէս և սոցին պատահիլ կարէր, և պատահեալ ևս է փոփոխուի՞ զանց՝ և յաւելուած տառից՝ վանկից՝ և բառից . էր՝ որ յանհոգուէ . և էր՝ որ ՚ի չարակնուէ անտիգրչացնոցին : Բայց յանչափս վրիպի, եթէ ոք զայսոյի փանաքի տարբերութիւնս օրինակաց, որում անհարին էր չլիպիլ չէ այսքան բազմահոլով ժամանակացս շրջանն նիւթ հակառակուէ ունիլ ինքեան և դերեւել նովիմբ զհաւատս ստուգուէ սք գրոց : Բնաւորուի և հարկն միանգամայն պահանջէն զայն յաւտ նախամեծար ընտրել, որ գտանիցին համաձայն հագոյն օրինակաց : Բայց եթէ ՚ի ներքին չարութիւն, կամ յոր և իցէ առթից գրութեալ ումեք՝ զամ օրինակսն առհասարակ, մանաւանդ զականաւոր տեղիսն՝ ուր աւանդին վարդապետուիք հաւատոց, և զերեւելեք երեւելի անցիցն փորձ աղաւորեալս դատիցի, առնէ հաւանական և ո՛չ ումեք ՚ի կատարօն որերոյ . զի չիք վաղեմի մատեանք պատմութեանց, և ո՛չ ժամանակակից վկայ հաստատիչ իւրումն թելադրուէց : Իսկ թէ ոք յեանոց անտի սխերեմ ատելութեք բերեալ առ որս ջատագով նոցին գրոց հանդիսանանն՝ ձախող իմն առարկիցէ, հայել պարտ է չէ այն իբրեւ չէ թշնամանա, և ո՛չ իբրեւ չէ վկայութիւնս : Շնտ լիցի ՚ի պատասխանիս նոցա որոց զսք գիրսն աղաւորեալս և խանդարեալս համարիցին ինդրել ՚ի նոցանէ զհաւատսին ստուգութիւն, զի որ զնոյն առարկէն՝ մանաւանդ յայսքան վաղնջուց ընկալեալ գրոց

չէիմ, պարտին՝ զորս միանգամ ժպրհին բանիւք՝
 հաստատել փաստիւք, Այլ մեք՝ որով սնուտիք դի-
 մասիրութեանց նոցին յաւետ խայտառակեալ
 արհամարհինն, ճշգրտեմք՝ զի զոր նոքայն բաջա-
 ղենն ոչ եղեալ է, և ոչ լինելոցն է: Եզրակացու-
 ցեալ մեր ՚ի վերագոյնդ թէ գրեանք նոցայն՝ զո-
 ռոց և զանուանս ունին՝ էին, մնայ հարկիւ պնդել
 մեզ աստ, թէ ուրեմն այս գիրք փոխանակ այնր,
 կամ այս մասն, փոխանակ այնր մասին չէ առեալ:
 քանզի այսպիսի փոփոխութիւն պարտ էր ունիլ իւր
 զգաղտնի իմն դիտումն, որով և բացարձակապէս
 տարբերիւր յամ յանփոփոխ և յանայլ մասանց և գը-
 րեանց անտի, զոր չէ ուրեք ՚ի նոսին տեսանելի, այլ
 յաւետ սքանչելի ներդաշնակութիւն և համատաւիղ
 զուգընթացութի մտաց յամ ուրեք ՚ի գրածս նոցին:
 Քարձեալ՝ զի այն ինչ ՚ի հուամն առաքեալքն նքք
 կամ առաքելաշնորհ արք ոմանք ՚ի վեր փայլեցու-
 ցանէին զգիր ինչ, քրիստոնեայք՝ ո՞նչ վայելէր ար-
 դարև սրբութեան և փութոյ եռանդեան նոցա առ
 անկորուստ պահելոյ իւրեանց զճշմարտութի և յետ-
 նոցս մշտնջենաւորելոյ զնոյն, առանց իրիք յապա-
 ղանաց իսկոյն յեղուին զնոյն ՚ի բաղմաբաշխ օրինակս
 և սիւռեալ տարածէին չէ ոլորտս տիեզերաց ցորչափ
 և ծաւալեալն էր կենդանի անուան կենարարին քսի,
 այս է՝ չէ Եւրոպիա, յԱսիա յԵգիպտոս, և ուր ծաղ-
 կեալն էր յայնժամ լեզու հերկնացուց: Եւ ո՞նչ ՚ի
 վեր անդր յիշեցաք՝ կացին մնացին նախագաղափարք
 նոցին ամբողջ ցերիւու հարիւր ամաց շրջաբերութի:
 Քարձեալ՝ զի անհար էր գրեանց յայտչափ անհա-
 մար գաղափարս չէ օրինակելոց, և այտչափ զգուշուք
 պահպանելոց ոչ եթէ ՚ի խնամս մասնաւոր անձանց
 և եթ՝ այլ և չէ հանուր եկեղեցւոյ՝ ենթակայանալ

ինչ չափ անդր աղաւաղուէս : Յարի , զի վաղվաղաւի
 յետ յառաջին դարուն , թարգմանեցան գրեհիս ՚ի
 լեզուս Ասորոց , Արաբացոց և Լատինացոց , որք
 ամբողջ հասեալ ՚ի մերս դար՝ տակաւին ոչ իւրք ՚ի
 գլխաւորացն տարբերին ՚ի յունական բնագրէն :
 Սան առ մեզ նաև գիրք անմիջապէս հետևողացն
 առաքելոց և կամ աշակերտաց նոցա՝ յորս ծաղկա-
 քաղ հաւաքին բազումք ՚ի բանից նոցին նովին մտօք
 ուղ և մեքս իմանամք այժմ : Գարծել՝ զի չէ որ այնքան
 ամբարձեալ ՚ի սատիւ եկեղեցական նահապետուէց
 ՚ի Ժմնկի անդ այնմիկ , մինչ ձեռնէրէց լինիլ ՚ի փոփո-
 խուիս նոցին , և կորզել չէ այն զհասարակաց հաւա-
 նուին . ուղ յայտնի ցուցանեն մեզ ինանձնի համարձա-
 կուի Երեսիոսի , Տերտուղիանոսի , և Սիպրիանոսի ,
 յորոշիլ նոց յերևելեաց անտի եկեղեցոյ սպասաւո-
 րուէցն : Նամանաւանդ զի , զայնու ժամանակաւ բա-
 զումք յիմաստուն և ՚ի հոյակապ արանց ընկալան
 և զհետ գնացին գրոցս այսոցիկ իբրև բերողացն յին-
 քեանս զնախնի և զանվթար ստուգութիւնս իր-
 եանց : Արևիս աստանօր և ձեռնարկութիւնն հանել
 յախուուն բազմուէ բազմորոշ կրօնից , ծիսից , և ա-
 զանդոց քրիստոնէից , որ ամենեքին առ հասարակ
 կամ գէթ որ ընդունին զաժարարիչ ճի և զքն նու-
 րոյ ուստիս օրէնսդիր՝ վար առնուն զնս անտարբեր
 ՚ի մէնջ , և եթէ գտանի որ ձեռնամուխ՝ մուծանել
 ՚ի նոսս զնոր ինչ , իբրև զշուն գատապարտեալ ար-
 համարհի յայլոցն ամբոնց : Արդ՝ զի ոչ որ յազան-
 դաւորաց անտի յանդգնեաց ձեռնէրէց լինիլ ՚ի նս ,
 յայտ անտի է , զի իւրաքանչիւրն ՚ի նոցանէ ՚ի սոյն
 գրոց հանէ զիւր նիւթս վիճաբանուէց ընդդէմ
 ախոյեանի իւրում : Իսկ զոր աւանդեցարս վս անտ-
 յին նախախնամուէն վերբերի յաւէտ առ երևելի

մասունս գրոցս, քան թէ առ բովանդակ մարմին նոցուն : վն զի՛ հեռի յածեղէն բարերարուէն է, թողուլ զայսքան բազմաթիւ որեար, զանխաբ յուսով և հաւատով մեծարուս ճշմարտուէ և հետեոյս կենացն յախտենականաց գահալիժեւ յայնպիսի մոլորուէն, զորս անհարին լինէր յապայս յանձանց ՚ի բաց մերկանալ : Այսչափ վասն կտակարանաց նորոյ ուխտիս ճշմարտուէ՝ հերիքացի ՚ի մէնջ բան, որոց միայն ամբողջ հասոյթն առ մեզ՝ բաւական էր արդարև ուսուցանել մեզ զստոյգ, զանարատ և զամբիծ հաւատն :

§ 16. Սքողութիւն հին կառնարանաց :

Եւ արդ՝ քանզի հաճոյ թուեցաւ նյ զերբայականն օրէնս, որ ՚ի նախնումն հաւատ անարատ և նորումն հզօրիչ քրիստոնէուէն՝ կտակ անշուշտ մեզ աւանդել, ոչ օտար ՚ի կարծեաց երևի ինձ ցուցանել աստանօր թէ՛ յոր հիման վերայ կայանայ բովանդակ շինուած ճշմարտապատումն նոցին ստուգուէց : Նախ՝ եթէ իցեն գրեանքն որոց և զանուանո ունին՝ եզրակացուցանի նովին ասպացուցութեամբ՝ որով և մերքն : Եւ արքն ճակատագրերեալք ՚ի նոսին կամ մարգարէք էին, և կամ քաջահաւատ ոմանք, զոր օրինակ Եզրաս, որ համարի ՚ի մի հատոր բովանդակել զնս առ կենդանուք Անգեայ, Մաղաքիայ, և Չաքարիայ մարգարէիցն : Չէ պարտ կրկնել աստանօր զոր ինչ միանգամ գրուատեցաքս ՚ի գով Մովսիսի, զի ոչ եթէ միայն առաջին մասն հոյ կտակարանին աւանդեալն ՚ի նմանէ, այլև որ յետ նորա գրեցան ընդ դարս դարս՝ ճշգրտին ստուգաբան վկայուք արտաքին վիպագրաց, ²⁰⁷ ոպ ահանախնի յիշատակարանք Փիւնիկե-

ցւոց , որ յուշի տան մեզ զանուանա Ռաւթի և Սողոմոնի և չ Տիւրացիս բարեկամունի նոցին : վն՝ Նաբուկոդնոսորայ , և այլոց քաղղէական թագաւորաց ²⁰⁸ Բերոսոս , ոչ ինչ ընդ հատ ՚ի նք գրոց : Որ առ Երեմիայ ²⁰⁹ Աստուարքայ եգիպտոսի առ ²¹⁰ Երողոտոսի Ապրիս ճանաչի : Աիւրոսի և ամ քաջագործութեանց նն՝ ց՝ Գարեհ լի են յիշատակուէք ՚ի գիրս հելենացւոց . յորոց բազումն հաւաքէ Յովսեպոս ընդդէմ Ապպիոնի վերաբերեալս առ ազգիւր : Որում զհետ դան և զորս մեքն հաւաքեցաք ՚ի վերագոյնգ Ստրաբոնէ և ՚ի Տրովգայ ՚ի նոցուն ստուգուէս : Անհամար վկայուէս քաղեալ տեսանեմք գրեթէ յիւրաքանչիւր գրոց անտի նոցա յաւետարան հաւատոյս , որ և առ արդի եբրայեցիս համանման գտանին : Գարձեալ զի թէպէտ անհարինս դարովեաց քն՝ զգնացս դպրաց և փարիսեցւոց յիւրումն ժամանակի , սակայն ոչ երբէք թշնամանեաց զնն իբրև զապականարարս գրոցն Մովսիսի և մարգարէից : Եւ ոչ իսկ հաստատիլ կարէ կամ գէթ հաւանական ընծայիլ , եթէ առարկիցէ ոք փոփոխեալ նոցին յետ քնի ՚ի գլխաւորագոյն մասանցն . եթէ միայն նկատեսցուք թէ չ քանի և քանի հեռաւորութիւնս սլխարհաց տարագիր տարապարհակցանեալ զնդեցան ազգ եբրայեցւոց , որ յամենայն ուրեք անկորուստ պահէին անձանց իւրեանց զնոյն գրեանի : Նախ՝ տտանեքին ցեղքն գերի վարեալ տարան յԱսորւոց յերկիրն մարաց , և յետոյ՝ երկոքին մնացորդքն ևս . ուր բազումք ՚ի նոցանէ յետ դարձի ՚ի հայրենիս իւրեանց ընկալնոյն ՚ի Աիւրոսէ զազատուի տակաւին կացին մնացին : ²¹¹ Մակեդոնացիք հրաւիրեցին զնն յԱղէքսանդրիս տալով նոցա բաղմադիւսի առանձնաշնորհուէս : Անհարին սրա-

ծովածի բռնաւորին Անտիոքոսի , առ անին պատե-
րազմն Ամովնացւոց , և արտաքին արշաւանք Պոմ-
պէի և Սոխոսի տարագիր ցանեալ ցրուեցին զյու-
լովսն ՚ի նոցանէ : ²¹² Երկիր Վիւրենայլ ցաւ զերեօք
Հրէից , նոյնպէս և ²¹³ քաղաքք Ասիաստանի , ²¹⁴ Մա-
կեդոնացւոց , և ²¹⁵ Լիկիոնացւոց , ևս և ²¹⁶ կղզիք Վի-
պրոսի , Արետայ և այլք յղիացան կապելովք նոցա :
Էր նաև իուռն գրոհ բազմութեան նոցա անդ ՚ի
²¹⁷ Հռովմ քաղաքի , ոպ ուսուցանէն մեզ Ուրատիոս ,
Յօբնաղ , և Մարտիաղ : Աղաքէն անհարին էր այս-
քան բաղմամբոս ժողովրդեան , և այսքան տար
բեր միջոցօք ՚ի միմեանց հատուածելոց [Ժեքիլ ՚ի
հրապուրանս ո՛ր և իցէ մեքէնադբուք , կամ ՚ի խաբս
համախմբիլ ամենեցուն : Յարի՛ զի իբրև երեք դա-
րու յառաջքան զքն խնամով (Պտղամէոսի Փիղագեղ-
փեայ) արքային եգիպտոսի [Ժարգմանեցան նբ գիրք
՚ի բարբառս յունաց ՚ի ձեռն նոցա՝ որ եօթանա-
սունքն անուանեցան , որպէս զի և զՅոյնս կար-
ասցեն առնել մարգարէադէտս և ծանօթս ճրշ-
մարտուէ , ուր այնքան ահանակիտ վճառք պահե-
ցին զմիտս բանին , մինչ փոփոխման նոցա ՚ի լաւ անդր
չմնալ երբէք առ [Ժի պիտոյից : Ի նմին հելէնա-
կան [Ժարգմանուէ յեղան նաև ՚ի լեզու Քաղղէա-
ցւոց , և Երուսաղէմացւոց՝ որ էր խառնուրդ իմն բար-
բառոյն Ասորեստանեայց , մասամբ անդր՝ և մասամբ
այսր քան զքն : Յետ նոցա ՚ի վեր երևեցան և այլ
բաղմաբաշխ ընդօրինակութիւնք հելէնականին ,
ոպ Ակուիլեանն , Սիւմաքեանն , և Թէոքորինն , զորս
Որոգինէս և այլք զկնի նորա բաղտադէլ չէ բնիկ
[Ժարգմանութեանն Եօթանասնից չգտին երևելի
իմն զանազանուի : Փիլոն առ Գալիզուլեան ծաղկել
և Յովսեպոս ցամն Ա եսպիանոսի երկարել ՚ի կեանսն
իւրում , հաւաքեն վկայուէս ՚ի գրոց անտի այնպի

մտօք՝ որպէս և մեքս գտանեմք այսօր յերբայական բնադրին : Չայսու ժամանակօք իբրև սկսաւ առաւել քան զառաւելն տարածիլ և սփռիլ հաւատն քնական՝ բազումք յազգէ իսրայէլի աշակերտել նմին և քաջագէտ ևս գորով հայրենի անձատուր աւանդութեանց , կարէին՝ եթէ գոյր ուրեք , նշմարել և յանդիման հանել զի Հրէից անտի ներմուծեալ խանգարմունս առ ո՛ր և էր զգուշալի առարկայս՝ բաղտատուք Տրագունին ՚ի նախագաղափարս ժամանակին : Բայց նոքա ոչ զայս՝ այլ յաւէտ ՚ի հակառակի առնուն զազգի ազգի վկայուիս ՚ի նոցին կտակարանաց անգանազան յայնցանէ՝ որ առ երբայեցիս և ցնորդ ևս ընդունելի ծանաչին : Ասան զի Հրէայքդ այդօքիկ , ոչ եթէ յաւէժագոյն չարեաց իմիք այլ ²¹⁸ (չասեմխաբէուէ) նաև զանցառութեան ևս չեղեն ենթակայս , զի գրեթէ բնաւորեալ իմն էր նոցա այնքան ահիւ և երկիւղիւ գաղափարել , և այնքան ճշդիւ և խստիւ համեմատել ընդ բնադրին , մինչ զի և համարս տալ զօրէին , թէ քանկցս արդէօք իւրաքանչիւր տառք կրկնեցին ՚ի բովանդակ յայն մատեան : Ա երջապէս՝ յարելի է և զայս մի ևս՝ այլ ոչ թեթև իմն առարկուի՝ թէ՛ վասն էր հրէայք տեսանելով դքրխատոնեայս՝ որ ՚ի նմին գրոց զօրս ինքեանք ընթեռնուին՝ հաստատէին , (և այն լը իւրեանց իսկ խոստովանութեանն կարի հզօր զօրուք ,) թէ նոյն իւրեանց տը Յն՝ նոյն ճշմարիտ մեսիայն էր՝ որ աւետեցան ՚ի հուան նախահարց իւրեանց՝ ինայեցին գեռևս փոփոխել զայն տեղիս զսքց գրոց : Չայս՝ անձանիւք իւրեանց ջանային , և փոյթ ևս կալնուին անձանց ՚ի կատար հասուցանել յետ խռովութեանն սպրդելոյ ՚ի մէջ նց և բրխատոնելոցս , եթէ գոյր նոցա արդարև

Տար զօրս կամէինն՝ փոփոխել :

ՀՈԳՈՆԻ ԳՐՈՎՏԻՈՍԻ

Քրիստոնէական ճշմարտութ

Գ Ի Ր Ք Դ

§ 1. Հէրքուան էրօնից որոշելոցն 'ի Քրիստոնէս :

ՉՈՐՈՐԴ գիրք սկիզբն արարեալ 'ի մարդկային ախորժակաց անտի՛ զոր իբրև 'ի բազումսն հասարակեալ է արանց ազատ ելոց 'ի վտանգից քաղել անձանց իւրեանց 'ի թշուառագին վիճակէն այլոց՝ ցուցանէ, թէ գործ մեծ է քրիստոնէին ոչ միայն շատանալ ընդ շահ օգտի ճշմարտութեանն զոր եգիտ, այլ և ջանալ 'ի թիկունս հասանել որոց 'ի ճանապարհս մոլորութեան կոյր զկուրայն տատանին. և առնել զնն հաղորդս երանաւէտ բարութեանն : Զայսմանէ թէպէտև լիովին ցուցաք 'ի նախադաս գիրքս, ուր ստորասուութեան ճշմարտութեանն հարկիւ զհետ գայր բացասուի մոլորութեան. սակայն՝ որովհետև կան մասնաւոր ազգք պաշտամանց հակառակամարտք քրիստոսական ոճոյս, որպիսի է կուպաշտութիւն, հրէականութիւն, և մահմետականութիւն. որ արտաքոյ հակառակութեցն կրելոց առ միմեանս բերեն նաև հակառական փաստս չդէմ մեր՝ ոչ օտար 'ի տեսուէ առաջիկայ գործոյս թուի քննել աստանօր զերկաքանչիւրսն 'ի նոցանէ : Ուստի և աղաչեմ զձեզ ընթերցողք, ազատ կացուցանել զանձինս 'ի մրկայոյդ ամբօխմանց կրից և 'ի մթին նախապաշարմանց մտաց ձերոց՝ 'ի խաւարեցուցչացն ասեմ վճիտ հայեցողութեանց բանին. ոպ զի անվթար զհետագայս կշռել կարասջիք :

§ 2. Ձեռքի արարածս ոչ է պարզ պաշտել ասանց
պատուերունէ մեծին ւն, եսէ զլորս Բնակ ոչ:

Եւ նախ չդէմ կուպաշտից զայս առարկիցուք,
զի եթէ զբաղմութիւնս ւնց իւրեանց յախտինա-
կանս դնեն և հաւասարս իրերաց. մեք յառաջին
գրի անդ բաւականին հերքեցաք յեզրակացուցա-
նելն մեր զմութիւնս ւն արարչին ամցն. բայց եթէ
ւնքս իմանան նոքա զարարածական բնուիս վեհա-
գոյնս մարդկան, մարթէր այնպիսեացն կամ բարիս
գո՛ւ և կամ չարս: Եթէ պնդեն թէ բարիք իցին,
պարտ է նախ ճշդիւ զփորձ առնուլ բարուէ նոց. զի
մի՞ ²¹⁹ գուցէ կոյր զկուրայն թաւալիցին ՚ի վտանգս
անհարինս, զթշնամիս չ սիրելիս՝ և զդասալիս չ
դեսպանի փոխանակ ընդունելով: Ուր թէ և նոյն
խսկ բան պահանջէ խտրել ընդ մեջ պաշտամանց մե-
ծին ւն և եղական ոգւոցս: Դարձեալ քննել արժան
է, թէ յորոյ աստիճանի իցեն սոքա. զինչ բարիս
առնել կարիցեն. կամ զոր պաշտօն թողու մեզ թա-
գաւորն փնց նուիրել սոցին: Արդ՝ զայս ւն պակաս
տեսանելով ՚ի կրօնս նոցա՝ շատասցուք կնքել. թէ
ստուգիւ ոչ ինչ արտաքս հանել զօրեն: Ապաքէն
քանի՛ ասպհով ոչ առնէին զանձինս իւրեանց
կուպաշտքդ, եթէ դահնային միայն ՚ի պաշտօն
փառաբանութե միոյն և բարձրելոյն ւն. զոր գործ
իմաստնոց լեալ և Պղատոն վկայեաց: Դարձեալ
զի որովհետե ւն պաշտօնեայք են հոգիքն այնու-
քիկ՝ անհարին էր նոցա չգալ ՚ի թիկունս պաշտ-
պանուէ ճշմարիտ աստուածասիրաց:

§ 3. Եւ չար ոգիք պաշտեցոն:

Այլ թէ պաշտեցեալքն ՚ի հեթանոսաց ոգիք չի-
ցեն բարի այլ գլխովին չարք՝ հաստատի հզօր առար-

կուրբ: Նախ՝ զի ոչ²²⁰ առաջնորդեցին զերկրպագուս իւրեանց ՚ի պաշտօն փռց մեծին ւոյ, այլ մեքենայեցին որքան և կարացին անհետ առնել զայն . և ըստ ամի ջանադիր եղեն հաւասարիլ բարձրելոյն ամօրէն պաշտամամբ: Երկրորդ՝ զի սօժին զանհարին հալածանս ՚ի վր պաշտօնէից միոյ և մեծին ւոյ . և գրգռեցին զդատաւորս և զհամայն խուժանս մարդկան տեղալ ՚ի նոսա կայծակունս պատուհասից: Եւ թէպէտ թողուին քերթողաց իւրեանց երգովք բանաստեղծութեց հռչակել զամօթալի չարիս սպանուեց և անառակուեց աստուծոց իւրեանց. թէպէտ գրգռէին զԵպիկիւրեանս արտասահմանել յճէ զնախախնամութիւնն ւոյ . թէպէտ զամենայն կեշտս և զկրօնս ճի զգեղուն , զյղիուն և զթաթախունս ամ չարեօք . զոր օրինակ զԵգիպտացին , զՓուլգացին , զյոյն , և զթոսկոնեան խտրանս լատինացւոց առնուին յաւելուին ՚ի բարդս սնտեաց իւրեանց , սակայն և այնպէս՝ տակաւին ազգն Հրէից լինէր նոցա յամ ուրեք ՚ի կատակս և ՚ի ծաղր նախատանաց . ո՞վ երևի ՚ի կատակերգունս և ՚ի դիւցազնաբանութն նոցուն : Ըստ ամին օրինակի և քրիստոնեայք չէր անտանելի թշուառութիւնս , զոր ոչն կրեցին ՚ի նոցանէ : Որոց չիք այլ իմն զօրաւոր պատճառ , բայց զի՛ երկոքին սոքա զմի միայն ամ պաշտէին՝ որոյն փռց սատան գային յինքեանց հաստուած չաստուածանին . առաւել նախանձախնդիր նմին քան իրերաց լինելով : Երրորդ՝ անպատշաճութեան զոհիցն՝ որ ոչ վայելէր արդարեւ բարի և նք էակացն , այս են՝ զոհք արեան մարդկան , մերկանդամ յարձակմունք խեղկատակացն ՚ի տաճարս նոցա . խենէշ խաղք և պարք . և ամ սնտոիք աղտեղութե , շնութե , և անառակութե լիք . զորպիսիս մարթ է տեսանել և առ արդի խուժա-

դուժ բնակս Ամերիկայ և Ափրիկայ, որ կան մնան տակաւին ՚ի խորին խաւարի կուսպաշտութեանն իւրեանց : Այո՛, առաւել քան զոյնս էին ՚ի Տրուսն՝ և են արդ ևս ազգք՝ որ գիտութիւն չարին պաշտօն նուիրեն, ողիք էին ²²¹ ԱրՏիմանեանքն առ Պարսս, Չարադէք առ յոյնս, ²²² Աէյովեանքն առ լաթինս, և այլք առ փիւնիկս և Տրիկս, քան զոր չեն արդարեւ մեծագոյն չարիք : Զի զինչ բարեպաշտ երկրպագութիւնն իցէ արդեօք՝ քան եթէ խոստովանուի գերմարդկեղէն բարութեան նորին՝ որում երկրպագանեսդ, զոր փոխանակելովդ չար հոգւոց՝ ոչ միայն չարացուցանես գլխովին զպաշտօնդ և ստես, այլ և ընկղմես նովաւ զմարդիկ ՚ի խոհերս կամակոր ապստամբուէ, որ զպատիւ թագաւորի ոչ միայն ՚ի բնց խլեն ՚ի նմանէ, այլև դատալիք և ապստամբ թշնամեաց նորա տան : Տիմար է կեղծել, թէ անձ լը որում ներհակ իւրոյ անձեղէն բնութեանն է՝ ոչ լուծանէ վրէժս այսպիսի չարեաց : Արդ՝ եթէ վասն անհուն ողորմուէն կարիցեն արդարացուցանել զայս ցնոր իւրեանց, պարտին զմտաւ ածել նաև զանաչառ արդարութիւնն, զի ուր չարիք անչափանան, անդ և արդարութիւն հաւասար նոցին պատիժ հատանէ : Բայց ամօթանաց յաւէտ արժանի թուին այնք՝ որ առ երկիւղի մղեալ ասեն զինքեանս ՚ի Տրազանդութիւն չար ոգւոց, բանդագուշելով ՚ի կարծիս իւրեանց, թէ անհուն բարին անձ անհրապէս հաղորդէ զինքն յարարածս իւր, որով և որկանս են, թէ չար՝ թէ բարի : Դիցուք թէ այս այսպէս իցէ, սակայն և այնպէս՝ նմէ տանիլ միահեծան և բացարձակ իշխանուի ՚ի վերայ ամենայն բնուէց իբրև ՚ի վերայ գործոց իւրոց, ուստի և չզօրէին առնել ումեք բարի կամ չար՝ եթէ ան կամք ինքն ի սափանել զնս :

Զայս այսպէս նախադասել՝ եղբակացուցանելք ,
 չար ոգիք ոչ ումեք մեղանչել կարեն ՚ի Նաճոյից ան-
 տի մեծին Կ՛յ անհունն ասեմ և յաւիտենական Բա-
 րուոյն . անդր քան զոր Կ՛յ թոյլ տայ ն՛ց վն՛ բարե-
 գոյն իմն վախճանի : Զէ՛ մեղ յուսալ ինչ ՚ի նոցանէ-
 քան զոր պարտն իցէ արհամարհել , դի մինչ չարն
 սատան բարեաց լինի՝ փոխի ՚ի սպառ յամենաչար :
 Եւ պարգև թշնամեաց՝ է թակարթ կենաց :

§ 4. Ընդդէմ պաշտաման մտելոց :

Էին՝ և են կուսպարիշտք որ նուաստացուցին
 ստրկեցին գերեցին զանձինս իւրեանց յերկրպագու-
 թիւն անջատեալ հոգւոց մահանուէր մարդկան :
 Բայց նախ խտիր մեծ է ընդ մէջ պաշտաման սոցա և
 երկրպագութեան տիրականին Կ՛յ . վասնզի աղօթք
 մեր և պաղատանք ՚ի զուր մատչին այսպիսի հոգւոց
 եթէ ինքեանք չբաւիցեն կատարել զնն՛ օգնե-
 լով տկարութեան մերում յ՛ և իցէ նեղութիւնս :
 Որոց և պաշտօնեայք անգամ անապահով չեն , և
 չ՛զօրեն հաստատել թէ զիւրդ յաւէտ կարողք իցեն
 նոքա ՚ի բարերարելն քան անկարք : Իսկ որ մեծն
 է ՚ի չարիս , արքն՝ որ Կ՛յ թօրէն պաշտամամք գեր ՚ի
 վերոյ մարդկայնոյս ամբառնային բնութեան , իբր
 ՚ի հասարակի երևելիք մեծեղեռն չարամասնութք
 ճանաչէին . որդոն , Սպանդարամեան շամբշիւ ,
 Հերբուլէս վարար . Հոռմոլոս եղբայրասպան , և
 Արամաղդ հայրախոշոշ : Անկ պատիւք ս՛ց արհա-
 մարհանք են մեծին Կ՛յ և անհաճ բարերար
 կամաց նորա . ²²³ քանզի իբրև ՚ի հաւատոց անտի
 շարժեն զմարդիկ յայն չարիս , որ ը ինքեանց ևս
 բաւական լինին հրապուրել զփոս ն՛ց :

§ 5. Աստեղոյ և աստերոյ :

Նախկին քան զայս ճանաչէր պաշտօն աստեղաց և տարերց՝ հրոյ , ջրոյ , օդոյ , և հողոյ . որ և գլուխ ամ մոլորուէց : վն զի գոլով աղօթից գլխաւորագոյն մտնն հաւատոց և վերառաքեալաւ անշունչ և անմռունչ արարածս՝ լինէր ցոյց անհարին յիմարուէ : Իսկ եթէ որք ՚ի մէնջ տարերքն ասին իցեն այսպիսիք՝ նոյն իսկ փորձն ցուցանէ : Բայց եթէ զլէգէմն ոք առարկեսցէ զնոցանէ , ոչ իւրք հաւատել կարէ . այնինչ յազգեցուէ անտի աստեղաց՝ որ այնինքն է յատկութիւն բնութեան նոցին՝ ոչ քաղի այսպիսի ինչ (բան ,) այլ զհակառակն . զոր դիւրին է մեզ ՚ի միտ առնուլ յանփոխ ընթացից նոցա՝ չիւրք նմանողացն ազատակամ և անձնիշխան գործողացն . այլ ճիշդ և որիշ . ոնք և ցուցաքն յայլուր թէ՛ շրջան աստեղոց կարգեալ են ՚ի պիտոյս մարդկան : Անյ և մարդ՝ որ ՚ի վերագունի մասին իւրում հաղորդ է անծեղէն բնութեան , որով և յաւետ սիրելի նմո՛ բաղմօք գեր ՚ի վերոյն քան զաստեղս ճանաչել պարտի զինքն , քան թէ նուաստացուցանել զվէհ զիւր վիճակ , և պարաւանգիլ յատկութիւն նոցին՝ զորս անծ ետ իւր ՚ի սպասատարութիւնս : Մանաւանդ թէ՛ և փառս մատուցանել անյ վասն նոց՝ որ առաւելու քան զոր նոքայն կարեն առնել , կամ գէթ՝ երեւիլ կարողս :

§ 6. Անասնոց :

Անարգ քան զամենայն է և չար ևս իսկ՝ զի կորեցին մարդիկ և մանաւանդ ²²⁴ եգիպտացիք՝ զգլուխս իւրեանց յերկրպագուի նաև անբան անասնոց : Ձի թէպէտ և ստուեր բանին երեւի առ ոմանս ՚ի նոցանէ ,

սակայն դեռևս այն չէ՛ ինչ բաղդասուո՞ւք մարդկայնոյս . զի ո՛չ կարեն արտադրել զներքին խորհուրդս զգացողութեան որո՛շ բանիւք կամ գրովք : Միշտ միօրինակ գործեն , ո՛չ որոշակի . և կամ զնոյն գործ տարբեր տարազու : Անհաս է՛ ՚ի նոցանէ գիտութի՛ թուոց՝ տարածութեան՝ մակերևութի՛ և երկնաշին մարմնոց : Բայց մարդ իւրով ներհուն բանականուո՞ւք և ճարտարմտուո՞ւք ընդ իւրև ²²⁵ նուաճէ զհօրս ՚ի զօրաւորաց անտի վայրագասուն գաղանաց , թռչնոց , և ձկանց . կրթէ՛ զնս լը չափու ՚ի հրազանդութի կարգաց և կանոնաց . զոր օրինակ , զփիղս , զառիւծս , զձիս , և գրաստս . քաղէ՛ զօգտակարս ՚ի վնասակարաց անտի . հիբւո՞ յիժից անդեղեայս : Աթէ՛ զիմաստս յանիմաստից , և զլսօսս յանշնչականաց : Աշմարէ՛ զկաղմուածս մասանց մարմնոյն իւրոյ . համեմատուինս առնէ՛ լը մէջ սեռից և տեսակաց , և եզրակացուցանէ՛ անտուտ զիւրն գերազանցութիւն և զբարեգրութի անդամոցնս իւրոց քան զայլոցնս ամենեցունս : Զորս եթէ՛ արժանապէս ոք կշռեսցէ՛ հեռի տեսանէ՛ յոյժ զպատճառ գրդելոյն իւրոյ յստրկութի անբանից , և դնէ՛ զինքն յաւէտ անճ նոցա երկրորդ մեծին ան :

§ 7. Ուրուականաց :

Ի պաշտօն առեալ ընթեռնուելք ՚ի յունաց , ՚ի լատինացւոց , և յայլոց ազգաց ²²⁶ զէս՝ որք լը ինքեանց ո՛չ են , այլ են թակայանան ՚ի վրէ՛ից իբրև զպատահումն : Զի թո՛ղ զերկիւղ՝ զամօթ՝ և զայլս , առողջութի ո՛չ այլ ինչէ՛ եթէ՛ ո՛չ մասանց մարմնոյ լը միմեանս քաջաջիղ կապակցութի : Բաղտ , եթէ՛ ո՛չ ներդաշնակութի պուլածոց լը հաճոյս մարդկան : Ընդ որս և կիրք ցանկականինս , զոր օրինակ . սէր , երկիւղ , բարկութի ,

յոյս , և նմանիք նոցին . որք յնժ գան ՚ի կարծեաց մտաշուտ բարւոյ և չարի իմիք . կամ ՚ի հեշտուէ և ՚ի դժուարուէ առից , ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ յարձակ մունք իմն զգայական բաղձանաց . որ անլքմիջաբար յարակցեալ են ընդ մարմին մշտաբաղլս զուգուի արեան , ինքեանց անզօրք՝ և ստորագրեալք կամաց՝ իբրև միահեծան դշխոյի , որ զնոցին տեղուե և զուղուեն ունի յինքեան զերասան : Ըստ այսմ տես ինձ և զառաքինուիդ ի զանազան անուանակոչուե իւրոյ : Չսոհեմութի՝ որ կայանայ միայն յընտրուի բարւոյն : Ի տես վշտաց՝ արուի . ՚ի հրաժեշտս յօտարութեան՝ արդարութիւն . ՚ի չափաւորութիւնս ցանկութեան՝ պարկեշտուի , և այլք սյսպիսիք : Են միւս ևս ներգործութիք արդարութեան որ չերկար փորձով փթթին ՚ի հոգւոջ , երբեմն յաւտ՝ և երբեմն նուազ . բայց երբեմն և ՚ի սպնո անհետացեալ ՚ի զանցառուէ : Իսկ պատիւ՝ որում և տաճարս կառուցեալ կարուամք ՚ի հրումն . է լոկ կարծիք միոյն զմիւսոյն իբրև զառնէ առաքինւոյ , որ ՚ի բնական հակամիտութենէ մարդկան ՚ի վրիպանս , յաւտ չարաց դիպի՝ քան բարեաց : Արդ՝ որովհետև չեն սօքան իրօք գոյք , ոչ հաւասարին բնական էից . ոչ և զաղօթս կամ զպաշտօն առ ինքեանս՝ իմանան . վնկ շամբնու է սոցին չայ երկրպագանել , զի յաւտ մարդ՝ յանձին բերելովն զնս և մշտնջե՝ նաւորելովն է պաշտելի՝ քան նոքին :

§ 8. Ընդդէմ հեթանոսական սխալելէոց :

Հեթանոսք ջատագով լինին պաշտամանց իւրեանց յառաջ բերելով զսքանչելիս ինչ , ընդդէմ որոց բաղում բացառուիք առարկիլ կարեն : քզի՝ որ ՚ի հեթանոսաց անտի²²⁷ իմաստունքն էին՝ հերքե-

ցին յողովան ինոցանէ իբրև զոչ Տերիք վկայութեամբ պատ-
սպարեալս, տինա և իբրև զյայտնի խարդախուհիս :
Իսկ որ զլուսնէ մն պնդեն՝ ասեն, կամ ՚ի դիպահոջ պա-
տահեալս ուր ՚ի գիշերի, կամ առաջն մի կամ երկու
անձանց . որոց բազմիցս խաբին աչք յառաջօք եր-
ևութից : Ի խորամանկ խաբէութեան քրմաց էին և
այլ ազգ իմն ցուցանք որ, զուսմիկ մարդիկ զտրգի-
տունսն ասեմ բնութե կամ գաղտնի սրակութեանց
նիւթոցն ՚ի զարմանս կրթէին . որպէս թէ ոք ա-
ռաջն տխմար շինականաց՝ որ չիցեն լիովին հա-
սու իրացն ՚ի վեր ձգիցէ զերկաթ մագնեստիս վի-
մաւ : Եւ եթէ այսպիսի արհեստիւք վարժեղ դնեն
ոմանք զՍիմոն մոգ և զԱպողինոս Տիւրացի՝ ես ոչ
ուրանամ : Տեսան և երբեմն գործք յաւէտ քան
զսոյնս, որ բնական պատճառաց կամ առանձին կա-
րեաց մարդկան անհար էր արտագրել, և երեւին
միայն արարք ամենակալ զօրուէ, վասնզի հոգիքն
այնոքիկ որ ՚ի խոնարհ քան զած և վեհ մարդկայ-
նոյս խոստովանէին լինիլ բնութեան՝ բաւէին նու-
ցին ՚ի ձեռն անհարին արագութեան՝ զօրութեան՝
և ճարպկութեան իւրեանց, զհեռին մտաւոր, և
զմօտն հեռաւոր, զշփոթան որիշ, և զորիշն շփոթ
ի մի զանգուածելով և արտադրելով ցոյցս ապշա-
րարս մարդկան : Բայց զի հարկչք այսպիսեացն հո-
գիք չար էին՝ չար ուրեմն էր և կրօն նոցին, որպէս
երեւի յառաջնմէ և ՚ի հետեւեալ ասացելոցս . զի զին
քեանս հակառակ կամաց իւրեանց մղեալս ասէին ՚ի
ձեռն մասնաւոր իմն նուագաց : Ուր և ՚ի միւս կուսէ՝
պնդեն իմաստունքն հեթանոսաց, թէ լոկ բանի
անհար էր ունիլ զայսքան բունութիւնս բաց ՚ի հա-
մոզանաց և եթ . և այս ըստ նոցին իսկմեկնութեան :
Միւս ևս նշան անօրէնութեանցն էր հրապուրել նոց

զմարդիկ ՚ի տուփիս այլոց , թէպէտև ինքեանք զԷ-
դէմն երևեցուցանելին սուտ խոստմամբք և սպառ-
նալեօք . զոր իբրև զկախարդութիս հալածէր մարդ-
կային օրէնք ՚ի բնաց : Ձիք զարմանալ աստանօր ի
Թողացուցանելն զնս մեծին ան ՚ի նշանս , զի որ յետս
չոգանս յերկրպագութի ճշմարտին ան ²²⁸ շահեցին ՚ի
գատապարտութի իւրեանց զպատրանս դիւական խա-
բէութեց . որոց ուրուականութեանն այս է ապացոյց
զի ոչ ինչ յայտնի բարութի զհետ եկն նոցինափորձ
զարմանաց : Ձի եթէ ոք թուեցաւ յառնել ՚ի մեռե-
լոց չեկաց ընդ երկար ՚ի շնորհս յարութեանն . և
ոչ իսկ կենդանօրէն կենցաղեաց : Արկնի եթէ ուրեք
անժաբար իմն հրաշագործեալ երևեցաւ նշանս յաչս
կռապաշտից՝ չունէր իւր կանխաստիկ գուշակութիս , ո-
րոյ ՚ի կատարին յայտնէր դէնիցն ճշմարտութի : Անկ
մակարբերի , զի անժային զօրութիւնն ներգործէր ՚ի
նս տարբեր վախճանաւ : Ասն օրինակի , դիցուք
թէ ²²⁹ Աեսպետիանոսիարդարեւ բժշկեալ իցէ զկոյրն ,
սակայն և ոյնպէս՝ վախճանս այնր հայեր յահեղա-
սաստ երևեցուցանել զԱյսրն առ հեշտին կանլոյ
նովաւ ՚ի ձեռս զհոգովեական տէրութիւն . քզի
ընտրեալ էր յայ գործի արդարութեան և գատաս-
տանաց իւրոց ի գէմ աղգին Հրեից : Ըստ այսմ և
բազում են հակասութիք ՚ի գէմն հեթանոսական
զարմանաց , որոց չէր բնաւ ի գէնիցն հաղորդութի :

§ 9. Գոռաշահեցն :

Աերակարգեալ փաստիւք մերժին աստանօր և
գուշակութիւնքն յառաջբերեալ ՚ի նոցանէ . զի ոչ
՚ի վերոյդ շոշափեցաքս՝ արժանիք այսպիսի պատ-
րանաց էին՝ որ ՚ի բանէ և ՚ի նախնի տւանդութեց
հաւաստեալ գիտութեց ոտնհար եղեն : Ենդ զի միշտ

երկդիմիէին բանք ըղձիցնց և դիւրաւ թեթեւութիւն առայս կամ յայն մեկնուի: Եւ եթէ դիպան ՚ի նոսա բանք համապատեհ գործոց՝ ապահարկէ յամենադէտ էութեն բղխելս կարծել. զի կամնիւթ կանխասացուէն ՚ի ներքին համօկրուէ անտի ընդ բնական սրտածառաց անդէն և անդ ճանաչէին, որպէս բժշկաց է տեսանել զի գուշակէն զապագայ աստու, և կամ որ հաւանական ևսն է, ենթադատութեամբ նախադէպ պատահարաց որիբր ՚ի բազումս հստալախճան յանկէին, զորոց և յաճախակի աւանդեցին մեղ մակացութեամբ քաղաքական կառավարութեց: Բայց եթէ երբեմն թուլատրութեն այ ՚ի գլուխ եւ կանխասացուի, ում չէր համակիր զուգընթացութիւն բնառիթ փաստից՝ քան եթէ միայն կամք ամենակալին, այն հայէր յաւետ ՚ի կործան՝ քան ՚ի շինոյթ կրօնից նոցին: Զոր որինակ.

²³⁰ Աւերգիլիոս թէ և անձանօթ՝ մանրապատում ճառագրէ զգալուստն քնի և զշնորհան՝ որով կնքեցաքն ՚ի չորորդ տուարածական գիրս իւր առեալ ՚ի Սիբելեան նուագաց: Նաև առ նոքիմբք իսկ Սիբելեալն ասի, թէ որ գալոցն էր՝ թագաւոր փնց ճանաչէր, արդարև թգէրն մեր: Թէ՛ ծագեալ յարևելից՝ և կոչէր թգէր թգէրց: ²³¹ Պատգամախօսուին Ապողոնի տեսանի մինչ ցարդ ՚ի գիրս Պորփիւրի, ուր ասի զայլ ամայն օգական ոգիս լեալ բանց այն եբրայեցոց, որում և միայն տալիէր պաշտօն: Արդ՝ եթէ բանիցս Ապողոնի միտ դնեն երկրպագութիւն՝ պարտին լուել զսնոտիս պաշտամանց նորա, իսկ թէ ոչ՝ ուրեմն զամ իւրե՛նց ընդ ստուք դատապարտեն: Յարի ևս՝ զի եթէ փոյթ ինչ էր ոգւոցն այնոցիկ բարիս առնել ազգի մարդկան պատգամախօսութեն իւրե՛նց՝ նախքան զամ պանրա

էր կարգել նոցա հասարակաց օրէնս կենաց , և խոստանալ վարձս պահողաց նոցին . բայց նք ոչ և զմի յերկուցս արարեալ ընդ հակառակն ՚ի գովս հանին զբռնաւորս լիս ամ պղծութք և ամբարշտութք . անծացուցին զըմբշամարտս , հրատուրեցին զմարդիկ ՚ի պատկառելի գրկանս , ՚ի փորձ անօրէն վարձուց , սպանուեց , և . զորս մերթ է հաստատել ՚ի բաղում օրինակաց :

§ 10. Դիւրեղծ Վեճակի նորս :

Բաց յայցսնէ ածէ հեթանոսութիւն ընդդէմ իւր միւս ևս երևելի սուարկայ . ք է՝ զի ուր ուրեք պակասեաց մարդկային բռնաւորութի իւր միմիայն խարիսխ հաստատուէ և յենարան ամբուէ՝ ինքնուրոյն խկոյն գլորեալ կործանեցաւ : Չի եթէ ոք զաչս ՚ի վեր կալեալ հայիցի ՚ի թագաւորուես քրիստոնէից և մահմետականաց , ոչ ուրեք նշմարէ յիշատակ կուսպաշտութիւն եթէ ոչ ՚ի գիրոն միայն : Հաւաստեն մեզ երիկայցն վիպասանք թէ՛ նաև ՚ի ժամանակի անդ այնմիկ ուր բռուք , էին՝ որ չարաչար պատժովք , զըրօրինակ նախնի թագաւորք . և էին՝ որ խորամանկ դաւանօք . որպէս Յուլիանոս պաշտպան կէին կրօնիցն , դեռևս առանց իրիք ստիպող հարկի խոնրհեալ գլխիկորէր : Չէր անդ պայազատութիցեղի , զի գրեթէ առհասարակ զ յնորդի հիւսան դնէին , ոչ ճարպկութի ասից . ոչ կաշառ գանձուց՝ զի աղքատին ոմանք էին . ոչ հրապոյր՝ զի արհամարհէր յաչս նոցա գրեթէ ամենայն շահ . և չէր վտանդ ընդ որ ոչն մխեցին զանձինս իւրեանց ՚ի փորձ վնասն օրինացս : Տես ուրեմն թէ քանի յողորդե և սպառօր կուսպաշտութիւն ոչ էր՝ որ հիմն ՚ի վեր տապալեցաւ ՚ի տկար սատարացս

յայտցանէ : Մինչ ոչ միայն սնտոի կրօնք ՚ի հաւատոցս՝ այլ նաև ²³² երկրպագեալքն ՚ի նոցունց հոգիք բաց խլեցան ՚ի մարմնոց անտի անուամբն քնի , և իբրև հարցաւ վասնէրն՝ ասացին՝ ²³³ անդ ուր անունն քնի մաղթի յոգնուի՝ մեք կարեմք և ոչ ինչ :

§ 11. Որոյ զնէղծ էրօնէ Աստեղց ասն :

Եղին փիլիսոփայք , որ որպէս զելուստն՝ նոյնպէս և զկորուստ կրօնից ազդեցութեան ընծայեցին աստեղաց : Բայց զաստեղաբաշխս այս մակացութի յորում ներհուն զանձինս խոստովանինն , այնքան այլ ընդ այլոյ աւանդեն , մինչ ոչ ինչ ստոյգ քան զնոյն իսկ զանստուգուին նոցա երևեցուցանել յարտաքս : Ոչ խօսիմ աստանօր զգործոց բնականապէս յառաջ բըլսելոց ՚ի հարկաւոր պատճառաց այլ զայնց միայն՝ որ աղբերանանն ՚ի մարդկային կամաց : Որ լը ներքին և բուն որակութեանն՝ այնքան ազատ է և անարգել , մինչ տրտաքին ազդեցուէց պէտս բնաւ ոչ ունիլ : Զի եթէ ²³⁴ գործ կամաց յեջ գայր յարտաքուստ ՚ի հարկաւոր մղմանէ , զօրուի ընտրուի բարւոյ և չարի՝ զոր փորձիլ տեսանեմք զկայտեալի հոգևոջ՝ անհարկի լինէր : Ուստի և իրաւունք համհական օրինաց , բարեացն վարձ և չարացն պատուհաս միանգամայն անհետացել վերջանային . զի ոչ գով և ոչ դարով կարէր տրիլ որոց ՚ի բնուստ իսկ էին անհրաժեշտ : Դարձեալ՝ որովհետև ոմանք ՚ի ներգործուէց հոգւոյն են չարք . եթէ պատճառել էին ՚ի բնական ազդեցուէց երկնից , անձ գովով տուիչ այսպի ազդեցուէց երկնից և երկնային զօրուէց , հարկիւ զհետ գայր ուրեմն թէ անձ որ է ծայրագոյն բարի՝ լեալ իցէ ²³⁵ պատճառ ան բարոյական մոլուէց : Դարձեալ զի որովհետև պիղծ

դատի ան զայսպիսի չարիս ՚ի դրական օրէնս իւր .
 և զհետեղելով նորա զհակասական ծայրս նոցա ըզ-
 ներգործական և զանհրաժարելի ազդմունսն ՚ի
 նիւթոցն բնուիս, կամէր ապանա զերկուսներհական
 սկզբունս միանգամայն, քէ՛ զի նոյն իցէ, և չիցէ .
 և զի՛ ՚ի մեզս համարիցի գործեալն իւրական ազդե-
 ցութի : Պնդեն ոմանք՝ և հաւանականապէս, թէ
 ազդեցութի աստեղաց ներգործի չ օդս և ընդ մար-
 մինս մարդկան և անասնոց, և տարրացուցանէ՛ ՚ի նո-
 սա այնպի իմն որակուիս՝ մինչև բազմիցս յարուցա-
 նել ՚ի հոգւոջ կիրս համաբուն նցին : Թէ և չենի-
 ցի այս նոցին կարծիք . դեռ ևս ոչ ինչ ազդէ առա-
 ջիկայ տեսուէս : Վասն զի անմարթ էր քրիստոսական
 հաւատոց, որ յամզօրութի տարհամոզէ զմարդիկ ՚ի
 ՚ի հեշտապէաց մարմնոյ, հանել զիւր ելուատ ՚ի
 ցանկութեանց անտի զգայականաց, և հետեւապէս՝
 յազդեցութեանց անտի աստեղացոյ, որ ոչ այլով ի-
 վիք քանեթէ այսպիսի կրիւք ներգործէն ՚ի հոգին :
 Քանքն յաստեղացէտս զարս կիրթս և զբարիս հա-
 նեն ²³⁶ յօրինաց աստի աստեղացն ՚ի բաց : Եւ թէ
 այսպիսիք լեալ իցեն նախահաւատ առաջնորդք
 քրիստոնէութեանս՝ յայտ յանդիման ցուցանեն մեզ
 գործք նոցուն : Իսկ եթէ զանկրաւորութի մարմնոց՝
 իմաստութի և գիտութեան տացութի, ոչ պակաս գտան
 և առ քրիստոնէայս ընդ դարս դարս արք ծայրա-
 ցեալք ՚ի նոսին : Դարձեալ, ազդեցութիւնք աս-
 տեղաց՝ չ խոստովանութի վսեմադուռիցն ՚ի ներ-
 հունս էութեց նոցին՝ յատկանան միայն առանձինն
 մասանց Յի . ուստի և անձկանան ՚ի սուղ իմն սահ-
 ման կոպարի տեղեալ և ժամանակալ : Բայց հա-
 ւատս որ ՚ի քն յարատեւաց սհա չ պարսյաժուիս
 վեշտասան դարուց, և այն՝ ոչ յանկեան ուրեք՝

այլ ձգեալ տարածեալ գրեթէ չէ ամհեռաւոր ծագս
 Եի և ընդ զանազան դրութիւնս աստեղաց :

§ 11. Գլխաւոր սկզբանց հասարոցս համայնցնին
 և իմաստունք հելանոսաց :

Տարադէպ տքնին խուժանք հեթանոսաց հայ-
 թայթել իւրեանց պատճառս հակառակամար-
 տութեան ընդդէմ ամբիծ հաւատոյս . որոյ գրե-
 թէ իւրաքանչիւր մասունք համաձայն ընթանան
 բուն կանոնաց առաքինութեանց . և որպէս թէ
 ճառագայթարձակ լուսովն իւրեանց յաղթահարեն
 զմիտս այնքան՝ մինչ նաև բազումք՝ ի կռապաշ-
 տից հաստատեցին ուրոյն զմասունս առաքինու-
 թեանց համախմբելոցն ՚ի մերս հաւատ : Չոր օրի-
 նակ .²³⁷ Հաւատն ո՛չ յարտաքին ցոյցս՝ այլ ՚ի հոգիս
 կայանայ :²³⁸ Շուն է՝ որ խորհին շնալ : Չէ պարտ չա-
 րին չար²³⁹ հատուցանել : Միոյ կնոջ այր լինիլ : Անքակ
 պահել զոսկի կսպանս ամուսնուէ :²⁴⁰ Պաշտօն մար-
 դոյ է²⁴¹ բարիս առնել ընկերին²⁴² մանաւանդ կարօ-
 տելոց :²⁴³ Ըստ կարի հրաժարիլ ՚ի յերդմանց : ՚Ի կե-
 րակուրս և յըմպելիս շատանալ միայն պիտոյիլ քնու-
 թեան : Իսկ եթէ կայցէ ինչ գժուարահաւան նոցա
 յօրէնս քրիստոնէութեան՝ զնմանն՝ ո՞պ ՚ի վերդ-
 ցուցաք , մարթ է գտանել առ հանճարաւորսն ՚ի
 նոցանէ . հիբար , զանմահութիւն հոգւոց , յա-
 րուի մարմնոց , ին : Ըստ այսմ ուսեալ ՚ի քարդէացւոց
 Պղատոն բաժանէ զամօրէնէն էութիւն²⁴⁴ ՚ի Հայր , և ՚ի
 հայրական Միտս . զոր և Շառաւիղ ամուէն կար-
 դայ , և Արարիչ , Հոգի Եի և Տէր ամի : Եթէ
 գոյր արդարև հար ամայնոյն չէ մարկայնոյս միա-
 ւորիլ բնուէ , յիսերիմ թշնամին քրիստոնէիցս ան-
 գամ Յուլիանոս և՛ դաւանեաց և՛ ճշմարտեաց , Օրի-

նակիմնառնչով ինքեան²⁴⁵ զԽաբուլապիոսզկարծեցել
 իջէլն յերկնից վարդապետ արուեստին բժշկուէ :
 : Եւ յիրաւի բազումք գայթակղին ՚ի Խաչն. քնի .
 բայց քննել պարտ է , թէ քանի և քանի ինքեանք
 երաղադատ կեզծիսո՞չ կցկցեն զաստուծոց իւրեանց :
 Զունանց ասէն թագաւորաց ստրկել , զայլոց՝ շան
 թասատակ հերձոտիլ , և որքան դառնագին այն-
 քան և քաղցրագին աւանդեցին զառաքինութիւնն
 քաջք ՚ի գիտնոց նոցա : Պղատոն յերկրորդ հասա-
 րակապետուէ իւրում մարգարէապատում կանխա-
 գուշակուի իմն ոսկեգրէ , պարտ է ասէ ճշմարիտ
 առաքինւոյն թափուր ընծայեցուցանել զառաքի-
 նութիւն իւր յամենայն զարդուց , զի երևեսցի յաչս
 միւսոց իբրև չարարար ոք , արհամարհեսցի , կատա-
 կեսցի , և կախեսցի : Եւ իրաւի օրինակ գերազանց
 համբերութեան չկարէ այլազգ քան զսոյն լինիլ :

ՀՈԳՈՆԻ ԳՐՈՎՏԻՈՍԻ

Քրիստոնէական Ճշմարտուն

ԳՒՐԳ Ե

§ 1. Հերի՛ օրէն՛ Հրէից :

ՋԵՐԾԵԱԼ ահա՛ ՚ի Թանձրամած խաւարէ
դիցակրօն պաշտամանց՝ ընթերակայ մեզ տեսանեմք
զօրէնս Հրէից զմասն և զսկիզբն ճշմարտուն, իբրև
զարշալոյս իմն չաղօտ առաւօտեալ՝ որոց ՚ի նսեմաս-
տուեր և յանլոյս տարտարութ՝ ո՞տն առ ո՞տն յառաջ
ժամանեն : Առ որ և զանկեղծ աղերս մշտապաղէտ
մաղթանացս ուղերձեալ Իսրայէլի՝ հայցեմ, մի՛ զմեզ
չ թշնամիս իւրեանց գրել : Գիտեմք²⁴⁶ զնս անծերան
նահապետաց սերունդս, որոց այց արար ան մարգա-
րէիւք և հրեշտակօք իւրովք սքովք : Ի նոցանէ ծա-
գեցաւ մեզ Օծեալն, և լոյս աւետարանին ցոլացեալ
միջօրէյեաց ՚ի համօրէն տիեզերս : Նոքա են բունն՝
յոր մեքն պատուաստեալ հաստատեցաք, նոցա տուան
անձային յայտնուիք, զորս և մեք չնս հաւասար ըն-
կալեալ և ընդունիմք : Ուստի զնուէր ջերմեռանդ-
աղօթից մերոց ընդ Պօղոսի մեծի ՚ի վեր առ ան ուղ-
ղեալ խնդրեսցուք կանխեսցուցանել առ մեզ զորն տեն-
չալի, յոր մերկացեալ նոցա զառկախեալն երեսաց իւ-
րեանց²⁴⁷ զքօղ տեսցեն չմեզ աւպատրուակ զլրումն օ-
րինաց իւրեանց : Եւ մեք յայնժամ սղգք օտարք՝ չ
կանխաձայն գուշակուենց անաղղեցիկ սք մարգարէից
²⁴⁸բունն հարցուք զգրօշակէ առն հրէի, և մաղթես-
ցուք զի և մեք ընդ նս նոյնպէս գունակ սրբուք պաշ-
տիցուք զմին միայն զԱստուած Աբրահամու՛ զԱստ-
ուած Իսահակայ և զԱստուածն Յակովբայ :

§ 2. Արիցէն զսոսնէլէն յի աբթանահուսոս :

Մի առօտանս ապօրէն ունիցին՝ զոր յինքեանս օրինաւոր վարկանին : Եթէ կուպաշտ ոք հարցանիցէ ցնս թէ էր վս հաւատայք սքանչելեացն Մովսիսի ասէն , զի ՚ի նախնեաց անտի հետէ անընդհատ եկաց առ մեզ աւանդուին ամանցեալ յականատեսնօցին եղևոց : Ըստ սմին օրինակի հաւատան նք²⁴⁹ աման իւղոյ այլոյն , սրբուէ բորոտութե ասորոյն , յարութե որդւոյ այլոյն ՚ի ձեռն Եղիայի և հիւրելոյ նորա նմին՝ այլովքն հանդերձ հիմնելովք միայն ՚ի շարունակ վկայութե ազգին : Եւ որ մեծն է , վասն համբառնալոյ նորուն յերկինս՝ ընդունին զմի միայն վկայութե Եղիսէի իբրև առն անդրանցելոյ լէամ կարծիս հակառակուեց : Իսկ մեք վս հրաշափստ համբարձման քնի յերկինս յատեան հանեմք²⁵⁰ վկայս երկոտասանս՝ անարատս վարութ և բանիւք , նա և զբազում այլս ականատեսեալ վկայ եղեալս յարութ նք ՚ի մեռելոց , զորոց զճշմարտուէ կախի ճշմարտութե հաւատոյս : Աստուատ որով նք զիւրեանցն՝ նովին և զմերն կազդուրեն զփաստ : Այլ զանց արարեալ մեր արդէն զյուզուէ վկայից զայս միայն յառաջ բերեմք , զի օրէնսդիրք թալմուտաց և ամ հրէաստանս առ հասարակ պարտաւորին խոստովանիլ զսքանչելիս քնի , որով և անկ էր նց բաւարարիլ , զի ամ ոչ այլով իւրք բայց միայն սքանչելեօք յարգէ զհաւատն քարողեալ ՚ի մարդկանէ :

§ 3. Ու դէսան զօրութեմք :

Զսքանչելեացս դիւական սադրանացլեալ գործբաջաղէն ոմանք , այլ այս անդուստ անէանայ զբրպարտութե , զի լէ իսկոյն լէ երևիլ քնաւանդ վարդա-

պետուէս՝ բեկան զօրուիք դիւաց : Իսկ որ կցկցեն
 թէ ուսաւ յն հմայս յճին եգիպտացւոց՝ ոչ միայն զի
 չտան նշմարանս ճշմարտուէ , այլ բերեն զնոյն դի-
 մասուիս , զոր և հեթանոսք առ Պլինիոսի և Ապո-
 ղինոսի չըզէմ Մովսիսի : Ձի յաղագս երթալոյն յնի
 յեգիպտոս ոչ ուրեք գտանի՝ եթէ ոչ ՚ի գիրս աշա-
 կերտաց նր միայն , որ յարեն նաև՝ թէ դարձաւ անտի-
 մանուկ հասակաւ : Իսկ յաղագս Մովսիսի իւր գիրք
 և ²⁵¹ վիպագիրք արտաքնոց միահաղոյն աւանդեն
 թէ եկաց նա յեգիպտոս մինչ յարբունս հասակի կա-
 տարելու թեան իւրոյ : Բայց զմովսէս միանգամայն և
 զՅն անպարտ առնեն Օրէնք երկոցունցն ևս , և ՚ի
 բնց հրաժարեցուցանեն ²⁵² յարուեստից աստիճունողս
 իւրեանց իբրև յաստուած ընդդէմն չարագործուէց :
 Դարձեալ՝ եթէ առ քնիւ և աշակերտօքնն լեալ էր
 այսպի դիւթ յճին եգիպտացւոց կամ յայլուր՝ որով և
 զքն զրպարտեն թշնամիք իւր տալ ախտաժխտաց
 բժշկուի , համերց լեզուս , կաղաց՝ ոտս , և կուրաց՝
 աչս , ինքնակալքն ²⁵³ Տիբեր և Ներոն անտարակոյս
 գտեալ զնոյն՝ դիւրաւ անձանց կորզէին զայսպի զար-
 մանս : Առարկեն հրէայք առ վնասապարտ կացու-
 ցանելոյ ճշմարտուէ զսքանչելիս ան թէ՛ խորհրդա-
 կանք ատենին առ հասարակ կրթեալ էին ՚ի հմայս ,
 այլ այս թէ իրան , ապաքէն նք ոստիք քնի գողով
 և ռիսերիմ համբաւոյ հանապաղորդ սքանչելեաց նր
 կամ զնոյն նովին արուեստիւք և ինքեանք կատարե-
 ին , կամ անուրաստ հաւաստեօք ցուցանէին զծա-
 գումն նոցա յոչ այլ ուստեքէ՝ եթէ ոչ ՚ի հմայից :

§ 4. Ամ Բոտական .

Եւ կէսք տան զայս ամ գաղտնի իմն ճայնի , զորմէ
 ցնորեն ևս թէ ՚ի Սողոմոնէ եգեալ ՚ի տաճարին պա-

Տիր յերկուց առիժուց անդր քան զերկու հազար
ամս , մինչ յն եհան անտուտ : Բայց այն ոչ միայն
զի սուտ այլև առասպել առասպելաց է , զի վն ա-
ռիժուցդ որ է ականաւոր իմն , ոչ միայն գիրք Թա-
գաւորաց , մնացորդաց , և յովսեփոս ոչ յիշեն ինչ ,
այլ և հռովմայեցիք . որ նախ քան զքն չ զորավա-
րութեամբ մեծին Պոմպէի մտեալ ՚ի տաճար անդր՝
և չգտին սյապիսի ինչ :

§ 5. Այլ «սոսո» ծայնով :

Եդեալ ը խոստովանուէ նոցին իսկ եբրայեցւոց
Թէ եղեն սքանչելիք ՚ի ձեռն քնի՝ կնքեմք , Թէ
պնրտէ ուրեմն հաւատալ նոցին ը աւանդելոյ մեզ օ-
րինացն Սովսիսի : Քնի խոստանայ ան յովսեփոսուտա-
սանեթումն գլխոջ երկրորդ օրինաց յարուցանել
մարգարէ յետ մովսիսի . և ծանունս սպառնայ որոց
ոչն լուիցեն նմա : Արդ՝ նշան մարգարէին սքանչե-
լիք են , և ոչ ինչ այլ դիպող քան զնոյն մարթէ ըզ-
մտաւ անել : Բայց և գրել է յեկդ օրինաց գլուխ
ԺԳ , Էթէ յարեցէ ասէ մարգարէ , և քոցէ նշանս էմ ար-
ուէսս և ասիցէ երկեցոս քաղաքսցոս քնս օսարս , մի լսե-
ցէս նմ : Ձի ան թոյլ տայ այնպիսեաց միայն ՚ի փոր-
նել զժողովուրդ իւր , եթէ հաստատունք իցեն ար-
դեճք ՚ի պաշտօն ճշմարտին ան թէ ոչ : Ի բաղ-
դատուէ երկուց գլխոցս չ միմեանս քաջ եզրակա-
ցուցին մեկնաբանք Եբրայեցւոց Թէ՝ պնրտէ հա-
ւատալ առն սքանչելագործի , միայն Թէ չլստո-
րեցուցէ զաշակերտեալս իւր ՚ի պաշտօնէ ճշմար-
տին ան : Ձի յայտմ և եթ պատուիրեցաւ չհաւատալ .
Թէ և գերագունին յսքանչելիս : Այլ տր յն , ոչ
միայն զի զպաշտօն սնտեացն չուսոյց , այլև՝ արգել
զնն իբրև զեղեռն մեծ ան չարեաց և պատուիրեաց

մեզ անսալ Մովսիսի և մարգարէիցն : Անկ չէ և չէ իսկ ոանհար լինիլ սքանչելեաց նորա : Բայց թէ գիմաբանեն ոմանք զսուղ ինչ տարբերութիւն չէ մեջ օրինացն յսի և մովսիսի , այդ չէ բաւական առիթ :

§ 6. Աստուծոյ անհրաժեշտութիւնն
պարտ էր լինել օրինաց :

²⁸⁵ Անտոն Է նոցին իսկ վարդապետացն հրէից վն չարձակուե իշխանուե մարգարէից կամ սրոց առնեն զսքանչելիս , զի բնաց ՚ի բանէ պաշտաման միոյննն , աներկեւան զանցանել կարիցին զայլ նմ մասամբացի պատուիրանօք : Արդ՝ իշխանուի օրէնսագրութեաննն նայ ոչ բարձաւ յետ կարգելոյ նորա զօրէնս եբրայեցւոց , և չիք որ իսպիան տայ այլոց յօրէնսագրութեաննն յետ հրատարակելոյն նորա զոր և կամեցաւ օրէնս : Նիւթ անփոփոխութեաննն նայ ոչ ինքրի աստէն , զի մեր ոչ է բան յիշատակուե և ստորագրութեանցն նայ այլ յիշատակուե նորուն : Ձի ՚ի հրամանէ արարողական զօրութեաննն լոյսն ՚ի իսաւար շրջի , աղայ մանուկ ՚ի ծեր փոփոխ , և ամառնն ՚ի ձմեռն յեղանակի : Աճ հրաման ետ աղամայ ՚ի սկզբան անդ ուտել յնմ ²⁸⁶ պտղոց բնաց ՚ի պտղոյ անտի ծառոյն գիտուե , ընդէր , զի այն իսկ էին կամք իւր : Պատուիրեաց մի՛ սպանանել , սակայն և Աբրահամու ասաց ²⁸⁷ զենուլ զորդի իւր : Չոմանց արտաքոյ խորանինն պղծեաց՝ և զոմանց սրբեց զգոհս : Եւ թէ բարոք էին մովսիսի աւանդեալ պատգամանինն , զեռ ևս ոչ հարկի զհետ թէ ուրեմն չէր որարտ յաջորդել բարեգունինն քան զնոսինն : Ձի ծնողք նախ՝ թոթովեն ընդ որդեակս իւրեանց , անտես առնեն զմեղս մանկութեան նոցա , յորդորեն զնն կարկանդակաւ ՚ի կիրթս ուսմանց , բայց

'ի գալնոցա 'ի չափ հասակի կատարելուեցն, յղկին
 նոցա վարք, ուղղին բանք, գեղեցկուիք առաքի-
 նութեանն գողանին 'ի սիրտս նոցա, կանոն և կարգ
 համեստութեանց տրին, և մեծութիւնք վարձուցն
 քաղցրանան 'ի քիսն նոցին: ²⁵⁸ Անկատարուե օրի-
 նացն Մովսիսի յայտնի այս է ցոյց, զի ոմանք 'ի սբց
 անտի առաւել սրբուիք քան զոր օրէնքն պահանջէր՝
 կեցին: Մովսէս, [Թէպէտև հրամայեաց ²⁵⁹ զվրէժ-
 ինդբութիւն մասամբ առն ձեռամբ իւրով լուծա-
 նել, և մասամբ դատաստանաւ օրինաց՝ սակայն
 այնինչ տարաւ չարաչար բամբասանացն՝ աղօթեաց
 վասն թշնամեացն իւրոց: ³⁶⁰ Դաւիթ՝ զապստամբին
 Աբիսողոմայ զորդւոյ իւրոյ կամէր զկեալն, և համ-
 բերատար ժուժկալուիք յանձնառնոյր զանէծս շան
 [Թառաքեալս 'ի յինքն: Ոչ ոք 'ի բարեաց երբէք
 ստինդկեաց զկին իւր, սակայն և այնպէս օրէնք ըզ-
 նոյն հրամայեն: Չիք զարմանք ուրեմն՝ եթէ օրէնք
 հայէր յայնժամ առ մեծագոյն մասն ժողովրդոց,
 ուստի և իրաւ դատեցաւ ձծ 'ի նմին ժամանակի
 անտեսել զոմանց զ'ի կատարեալն հանելոյ 'ի կարգս:
 Բայց 'ի վտիճան ժամանակացս՝ այնինչ հաճոյ [Թու-
 եցաւ նմ՝ զօրուիք ամենակալ հոգւոյն իւրոյ ժողովել
 իւրնոր և սեպհական ժողովուրդ յամագգաց երկրի,
 կարգեալ հաստատեաց և զնոր օրէնս: Դարձեալ զի
 վարձն մովսիսական օրինաց ամփոփիւր միայն յաստի
 բարիս, ապաքէն ²⁶¹ արժան էր կատարելագունին
 նմին օրինաց հրատարակիլ՝ տուաջնորդ վարձուցն
 յաւիտենականաց, ոչ չնոցայն ընդ ստուերօք և
 օրինակօք, այլ պարզ 'ի պարզոյ չն քնին ընդ
 բացայայտ աւետեօք:

§ 7. Քսէն եւ իւրո՛ւ ամբողջ պահեցին զօրէնս Տոգտսի :

Ի դէպ է մեզ աստանօր զճանապարհայն անցանել սակաւութեւ և զմեծեղեուն ամբարշտութեւ Տրէից՝ որ առ կենարարին մերոյ յայտնեցան ժամանակօք . զի առանց փաստ ինչ և չդէմօրինացն իւրեանց անարգաբար նախատեցին զնա և մատնեցին ՚ի մահ խաչին արհամարհանաց : Զի ը նոցա և ²⁶² ինքն թլպատեցաւ , ²⁶³ զնոցին կերուստ կերաւ . ²⁶⁴ նոցինաձև հագուստ ագաւ . ²⁶⁵ զարբեալն ՚ի բորոտութեանց առնոցին քահանայս առաքեաց . ²⁶⁶ զզատիկ և զայլ տօնսնոցին անվրէպ պահեաց . և եթէ ²⁶⁷ բժշկեաց զոք ՚ի շաբաթու՝ ոչ միայն յօրինաց անտի , այլ և ՚ի նոցին իսկ ընկալեալ սովորութեանց ստուգեալ արդարացոյց : Նա՛ յայնժամ սկիզբնարար ²⁶⁸ համառօտել ըզպատգամս ինչ յօրինաց անտի , յորժամ մահուամբ մահուն կանգնեալ յաղթանակ համբարձաւ յերկինս , ելից զաշակերտս իւր անճառելի շնորհօք Հոգւոյն սթյ և ²⁶⁹ եցոյց զինքն զանպատում արքայուէ ստացեալ զփառս և չհանուր ²⁷⁰ իշխանութիւն կարգելոյ զօրէնս համճականս ը Ռանիելի մարգարէուէ՝ գլխի և քի . չ որս բաշխատելի է նաև գլ ը ընդ մետասան գլխոյն : Ուր կանուխ գուշակուի ծանոյց թէ՛ յետ բարձման թագաւորութեանցն Ասորեստանեայց և Եգիպտացւոց (որ բարձաւ առ օգոստոսին կայսերբ .) տալոց էր անձ որդւոյ մարդոյ իշխանութիւն և պատիւ և արքայուի ՚ի վր աղգաց և լեզուաց մինչև յաւիտեան : Իսկ զհարկիս մասանցն օրինաց՝ զորս ՚ի բաց խուղեաց տր յն՝ չունէին զէական բարիս յինքեանս , այլ ենթակայանային միայն յանտարբեր նիւթում : Ուստի և անփոխ չէին , զի եթէ բերէին յինքեանս արդարև զհար-

կիս գործոցն առաքինականաց՝ անձ ²⁷¹ Հանուր Յի,
 և ոչ եթէ ժողովողեան ուրուք տայր զնոյն : Նա-
 մանաւանդ ՚ի սկզբանէ անտիցերկու հաղարամ, արք
 հոյակապք՝ սքք և անձահաճոյք, որպէս . Աբէլ,
 Ենովք, Նոյ, Մելքիսեդեկ, Յովք, Աբրահամ, Խ-
 սահակ և յակովբ՝ տգէտք էին գլխաւոր, և գլխեթէ
 անձ մասանց օրինացս այսոցիկ, սակայն և այնպէս՝
 վկայեցան վն հաւատոցն իւրեանց առ անձ, և սի-
 րոյ նորին առ ինքեանս : Մովսէս՝ ոչ հարկեաց յոր-
 թորոյ աներ իւրում յանձին բերել զժխական զայս
 խտրանս . ոչ Յովնան զնինուէացիս, և ոչ այլ մար-
 գարէք թշնամանեցին զորոց և գրեցինն վն ոչ պա-
 հելոյ զսոսին . թէ և մանրամասուն կրկտանօք ՚ի թիւ
 համարոյ եղին զբազմուէն չարեացն քաղղէացւոց,
 եգիպտացւոց, սիռնացւոց, ախրացւոց, եգովմէա-
 ցւոց և մովբացւոց : Ուստի յայտ է զի առ ամիոփ
 իմն վախճան կարգեցան օրէնք, ի՞նչ, կամ առ խափան
 տալոյ չարեացն յորս կարի թեկունք էին աղղ եբ-
 րայեցւոց, և ՚ի փորձ հաղանդուէնոցա, և կամ ՚ի
 խորհարդ ասպագայ ճշմարտութեանն : Ապաքէն
 չեն զարմանք, եթէ անձ ուր զթագաւոր ոք՝ փոփո-
 խիցէ զօրէնս ինքնադուխ գաւառի, և հրատարա-
 կեսցէ զնորն ՚ի վերայ համօրէն աղղին . զի չէ որ ան-
 դէն, թէ ան պարտաւորեալ իցէ զինքն չփոխել ինչ
 յօրէնան : Առարկիցես՝, այսոքիկ կոչին միշտ պոպ-
 քամք յաւիտենից, և ուխտք յողորմ ինչև յողորմ : Պատաս-
 խանեմ, սովոր են մարդիկ ՚ի կիր առնուլ զյաւիտե-
 նոփոնք անուն առ ՚ի նշանակել նովալ թէ զոր միան-
 գամեղինն չեն տարւորք կամ սեղմած յանձուկ սահ-
 ման կոպարի, գոգ դու զգաշինս խաղաղութեան և
 պատերազմի նկատմամբ նուազութեան պիտոյիցն :
 Բայց և այնպէս չէ այսմ քարընդոտել նորոյ օրէնս .

դրուէն ՚ի նիւթ այնպիսի՝ ուր խնդրի հասարակաց բարուին : Ըստ սմին օրինակի իմն և զոմանս յածաւանդ պատգամացն տուեալս եբրայեցւոց ժամանակեան պայմանաւ , ²⁷³ ոմանց դիպաւորեալս յանապատիաստանդանացնոցին , այլոց ²⁷⁴ քանանաբնակ հանգամանացն , և այսպէս : Բայց տարբերին սք յիրօք յաւիտենականէն յայսմ , զի անփոփոխուի իմն լն տեղւոյ և ժամանակի յառաջ ածեալ նշանակէն , մինչև կառքն անծեղէն ինքնիշխան ազատութե կամ ցրեսցէ՝ կամ փոխեսցէ զնոսին : Արդ՝ լն այս ազգ կիրառութիւնս ասից հասարակեալս գրեթէ ՚ի մէջ համօրէն ազգաց զխնդ խրտնիցին հրէայք . մանաւանդ զի և յօրէնս իակ իւրեանց ²⁷⁵ յաւիտենական կոչէր Ուխտն կամ Ժոտայաւիտն՝ որ ձգէր միայն յբերէնէ ցյօրբելին . յօրմէ և օր Օծելոյն հասարակաբար անուանիւր առ նն շրտն յօբէլէնի կամ մեծ յօբէլէն : Դարձեալ զի ՚ի գիրս նախնի մարգարէից յաճախակի գտանին նորոյ ուխտիս աւետիք , զոր օրինակ 31 . գլխոջ մարգարէութեանն երեմիայ , ուր խոստանայ ան ուխտել ուխտ նոր ան ազգաց , գրել նոյն ՚ի սիրտս նոցա , չթողու պէտս առն յընկերէ իւրմէ ուսանելոյ զգիտել զտէր , զի աննէին ծանցեն ասէ ՚ի փոքրէնց մեծն զմեծութիւն ըզհաւել անօրէնութիւն , և պանդաւարն պեղաց երբեմն : Եւ այս է , ուղ թէ թագաւոր ոք յետ տեսանելոյ զհարտակս իւր մեծաւ ատելութե վառեալս ընդ միմեանս՝ բառնայցէ զհին տարազանդ օրէնս , և տացէ նոցա փոխանակ զնորն , զկատարեալ և զհանուր օրէնս . և վն ապագային՝ խոստանայցէ նոցա զթողուի մեղաց ՚ի վերանորոգումն կենաց և յուղղութե վարուցնոցին : Թէպէտև բնւ ասացեալքս են՝ սակայն դեռևս ՚ի քննին իւրաքանչիւր բացբարձական մասանց օրինացդ հետազօտել դէպ ինձ աստուատ վարկանիմ ,

զի ցուցից զնոսա ըստ ինքեանց անհաճն ան, և անհարկս յարատե մշտնջենաւորութեան իւրեանց :

§ 8. Չորս ,

Առաջին՝ որ ՚ի վեր ընծայեցուցանեն մեզ զինքեանս են զոհք, զորբազումք ՚ի հրէից անտի համարին ²⁷⁶ գիւտ մարդկային Գարից նախքան անկարգելն զնոսին : Աստուստ յայանի երևի , զի ազգ հրէից կարի իմն զակատեալ էին զհետ ծիսական անբարոյ պաշտուէց ²⁷⁷ ուստի և նախահոգացեալ ան , զի մի՛ յիշատակ բնակութեան նոցա յճին Եգիպտացոց գահաւէժ գլորիցէ զնն ՚ի պաշտամունս սնտեաց , բարդեաց յօրէնս նոցա զարտաքին ծխից բազմութիւխտրանս : Բայց իբրև սկան յետինք առաւել իմնքան զոր պարտն էր վարկանել զնոսա որպէս թէ արդարև ը ինքեանց հաճելիք իցեն կամաց բարձրելոյն և մասունք ճշմարիտ անպաշտութեան՝ յանդիմանել անարգեցան ՚ի մարդարից իւրեանց : Չի յիմներրորդումն սաղմոսին Դաւթայ ըստ Եբրայական բնագրին այսպէս ասէ ան՝ « Ասն պարագայ իցոյ ոչ խօսեցայ ինչ ընդ ինչ , ինչ պահ ՚ի վերայ պահից մարտացէս ինչ , պարտաբան և զնոսայն ՚ի հօբից էս ոչ ընկալայ , ի՞նչ է ան գազան անպատի , էրէ լէրանց և ան անասուն : Գիտէ՞մ էս զան թաւունս երիւնց , գեղեցիկութեան վայրէ ընդ էս է : Եթէ ինչոցեայ , ինչ ինչ ոչ ասացից . զի ի՞նչ է աշխարհ լինի իւրով : Համարեմ ինչ ինչոց էս զին պարտագայ իցոյ , ի՞նչ արբից պարենն նոխալայ : ոչ : այլ մարտն ան պարտ օրհնաւ , և ինքարեա բարձրելոյն պարտագայ : Արդի հրէայք երազադատ լինին ընդդէմ այսմ , յասելն թէ՛ ան ասաց զայս ան վն անբարոյս պատարագողացն : Թէպէտև բանքդ հաւաքեալ ՚ի մէնջ գլխովին զհակառակն հաստատուն՝ ցուցանելով

Թէ զոհք ըստ ինքեանց ոչ էին անճանաչք: Քնի
 եթէ բարութի միտ առցուք զբովանդակ իմաստ
 սաղմոսին, անշուշտ տեսանեմք ուղղել ան զբան իւր
 առ ընտրեալն իւր՝ յասելն, Ժողովեցարուք առեալ ան
 սէր էմ: Եւ փոքր մի զինի, Լոսր ժողովորդ էմ:
 Ահն այսօրիկ են բանք ուսուցչի, որ կատարեալ
 զամ զբանս պատուիրանաց իւրոց՝ դարձուցանէ ապա
 զբէմն ըստ սովորականին առ ամբարիշտան: Եւ ի Ծ.
 սաղմոսին առէ, « Թէ կամեցեալ էի՛ր պարտագոս ճարտ-
 ցանէս, Բայդ որ ընդ որջալէն էս է ոչ համեցուր. զի պարտ-
 ագոս ճշմարտագէս համոցն սեւ է հոգին խնամահեալ լի մեղաց:
 Ձէ որոս ան, զսիրտ սէր եւ զհոգի խոնարհ ոչ արհամարհեա:
 Սփին նման է ի լի սաղմոսին: Ընդ զոհս եւ ընդ
 պարտագոս ոչ համեցար. լաւին հասարակեցեր էն, զորջալէն
 եւ զվանն մեղացն ի խնդրեցեր, յայնժամ ասացի, Ըն հաստեի
 գամ էս, ի գլուխս գրոց գրել է լի էմ: Առնել զէմնս սր ան
 էմ կամեցայ, եւ զորջնս սր ի մեջ որովայնի էմոյ. եւ զարտ-
 րոնքնս սր ոչ ծածկեցի ի սրտի էմոսմ: Ասացի, եւ ոչ լա-
 սացի զճշմարտութիւնս սր եւ զարտագոսն սր ի ժողովոր-
 դեան մեծէ: Ըստ այսմ յառաջ հանդիսանայ ան խօսիլ
 Եւ յառաջին գլուխս եսայեայ, յասելն, Ձէ՛ կայ էմ
 եւ յաճախելոց զունիցդ յերոց, յագեալ էմ էս որջալէնս խոցոց
 յերոց, եւ զճարդ գասանց, եւ զարիւնն զլաց եւ նոխապաց ոչ
 համեմ, ոչ էնէ խնդրեաց զայդ ի յետաց յերոց, զի նոսր ի
 գասելս էմ հոխել յաճախեցէս: Ըստ այսմ Եւ յերեմիայ
 գլուխ Ե, « Այսպէս առէ քի զորոնց, ան ինչի, զորջա-
 լէնս յեր ժողովեցէս հանդերձ զոհեալ յեր լի, եւ իերայս մո.
 զի ոչ խօսեցայ ընդ հարսն յեր եւ պարտաւոր երոս նոցա յա-
 ւարսն, յորոմ հանի զնս յերբէն էգիպտացոց վանն Բանն ոչ-
 լալէնաց եւ զհից: Այլ զայս Բան պարտաւորեցի նոցա եւ ասեմ
 լաւարուս յայնի էմոսմ եւ էս էպէց յեւ յան, եւ որոս էպիլէս
 էն ժողովորդ, եւ գն. զիս յամ ճանապարհս էմ, զոր պարտա-

բեցի յեւ , զի Բարի լինեցի յեւ : Իսկ բանն նոն առ յովսէ-
այս է , Ջողորմութեան համբ և ոչ պարարագ , և զգի-
տութեան այ բանն զողջակեցս : Եւ ՚ի Վ . գլուխ միքիայ ,
ուրանօր խնդիր ՚ի մեջ լինէր թէ իւր ոք չենելի ե-
ղիցի նայ , ողջակիզօք , որթուք տարևորօք , հա-
զարաւորօք խոյոց , բիւրաւորօք նոխազաց , անգրան-
կօք , և կամ պտղովք միջաց իւրեանց , պատասխա-
նեաց նոր , Պարմեցից յեւ ո՛վ ճարգ , զինչ Բարին է , համ
զինչ խնդրէ ՚ի յէն ար , Բայց առնել զիւրառանս , սիրել զո-
ղորմութեան , և պարարագ լինել երկաւոց զինն արն այ բո :
Արդ ՚ի բանից աստի յայցանէ բանցերևի անչենե-
լուի պատարագացդ առ նա : Բայց և տեսեալ զի
սկսաւ ժողովուրդն սակաւ առ սակաւ (որպէս բազ-
միցս պատահի ՚ի չարին կողմն թիւրելով) հիմնել
զմեծ մասն նախաշտութեանցն ՚ի նոսին , և հա-
ւատալ զնս իբր ըստ ինքեանց բաւական փոխարէնս
մեղանացն իւրեանց , չիք զարմանք եթէ զթ եթ ևս
զայս՝ մանաւանդ թէ և ընդ երկար սովորութի փո-
խանակեալս մոլուեց խտրանս՝ իսպառ ՚ի բաց բառ-
նայր ՚ի միջոյ : Ջոր օրինակ . և արքային Եղիկիայ
հայեցեալ զի ժողովուրդ յաւել չ նայ պաշտել զօձն
պղնձի զոր յանապատին բարձրացոյց մովսէս՝ խոր-
տակեաց : Ոչ պակասին և մարգարէութիւնք զդա-
դարմանէ ողջակիզաց՝ զորմէ վէճքս են . զոր գիւրին
է ՚ի միտ առնուլ եթէ զայս և եթ բարոք կշռա-
դատիցիմք , զի զօհելն ըստ մովսիսական օրինաց
յանձնեցաւ միայն որդւոցն ահարովի յազգէ մինչև
յազգ , և այն ²⁷⁸ ՚ի վիճակի իւրեանց միայն : Յարի ,
՚ի հարիւրերորդի իններորի սաղմոսին ըստ եբրոյյա-
կան բնագրին ²⁷⁹ խոստանայ նա յարուցանել զթա-
գաւոր , որոյ իշխանուի չարձակելոցն էր ՚ի ծագաց
մինչև ՚ի ծագս Յի , կարգելոցն էր զարքայուի իւր

ի սիրովն և լինելոց քահանայ յաւիտեան ըստ կարգին մեւթիսեդեկի : Եւ յիննուտասաներորդ գլուխ մարգարէութենն եսայեայ ասի կանգնիլ սեղանի ան յերկրին եգիպտացոց ուր ոչ միայն եգիպտացիք , այլև ասորեստան և իսրայէլ միահաղոյն պաշտեսցեն զտի : Եւ ՚ի 66. ամ ազինք և լեզուք հեռաւոր կղզեաց եկեացեն և մատուցեն պատարագս Աստուծոյ խնուն ը իսրայէլի , և ես առից ասէ ՚ի նոցանէինձ ՚ի քահանայս և ՚ի ղևտացիս : Բայց այսմ չէր հարգող ցորչափ անխախտ մնայր օրէնք մովսիսի : Տնւր սոցին և ան գլ , մաշաքիայ , ուրանօր պատմելով ան զգալոցն՝ ասէ , Պիղծ էն էնչ պարտաք յեր . ղի յարեւելից մինև ՚ի մասս արևու ժամատարեալ է անուն էմ ՚ի մէջ ազգաց և էնչ մարչէն խունէր և պարտաք սք յամ արեղիս : Իսկ դանիէլ գլուխ 9. ցուցանելով զհրեշտակին գաբրիէլի զվանս քնի յայտնութի՝ ասէ , Իտարեցոսցէ զսեղանս և զպարտաքս : Չանընդունելութի մովսիսատիպ զոհիցն ոչ միայն բանիւ՝ այլ արդեամբք իսկ եցոյց անձ , որ բարձիթող արար զհրեայս ահա՛ անդր քան զվեշտասան հարիւրս ամաց , անտաճար , անսեղան , և առանց ընտրութեան ցեղին ՚ի նոյն , որով կարէին գիտել թէ ով որ զծէս օրինին կատարել պիտէր :

§ 9. Խաբէր էրուհրոց .

Չոր միանգամ վասն օրինաց զոհից՝ նոյն և վասն իտրութեան կերակրոց ասելի է , չքի յետ համատարած ջուրցն հեղեղաց հրամայեաց անձ²⁰⁰ Նոյի և որդւոց նր ուտել անխտիր զամ ազգս մեղեաց , որ ոչ միայն ՚ի սերունդս յաբելթի և քամայ՝ այլ և ՚ի սեմայն ցաբրահամ , ցիսահակ և ցյակովբ ածանցն՝ և մշտնջենացաւ : Բայց յետոյ՝ այնինչ իսրայէլ համակ տողորեցաւ ՚ի գարշանս եգիպտոսի , յայնժամ

ի բանց արգել չի զուտեստ անասնոց ոմանց , զայնց՝
 յորոց կամ չի մեծի մասին ²⁸¹ յազէին կոռցն եգիպտա-
 ցւոց և դիւթէին կիւսք , կամ ²⁸² յստուերս Տրէական
 օրինաց այն ազգ անասնովք գուշակէին մասնաւոր
 չարիք մարդկան : Այլ թէ չէր օրէն Տաւրական
 յնյտ անտի է , զի զապօրէնն իսրայէլի զմեռելոտին
 օրինաւոր դատեաց պանդիտին , զորս և իբրև ար-
 ժանիս ողորմութեանն իւրոյ պատուիրեաց եբրայե-
 ցւոց առնուլ ՚ի պաշտօն ամ պարտուպատշաճ սպա-
 սուց իւրեանց : Նաև նախնի Րաբունիք միաբան կն-
 քեն զգաւարիլ իտրանաց ՚ի ²⁸³ գալստեան Օծելոյն ,
 և զխոզին սրբիլ իբրև զեղն : Եւ կարիքն իրաւի ,
 զի մինչ կամք եղեն այ ձգել առ ինքն զժողովուրդ
 նոր յամ ազգաց՝ Տարկէր և օրինաց ազատութեան
 փոխանորդել ծառայականին , մանաւանդ ՚ի դրա-
 կան նիւթս : Այլ մեք ՚ի քննին զատկաց :

§ 10. Չարիք :

Թէպէտ տօնք զատկաց կարգեցան յաւէտ ՚ի յի-
 շատակ ամառնոր՝ բարերարութեան սուստաձեռնե-
 լոց ազգին Տրէից յետ ազատելոյն նոցա յեգիպտա-
 կան ծառայութեանց և մտին երկրին աւետեաց ,
 սակայն մարգարէն երեմիա կանխաւ արդեօք գու-
 շակեաց գլ . 16. և 23 թէ ահա աւուրք գան , յո-
 բրս նոր և մեծամեծ բարեաց տուչուիք այնքան ՚ի
 խոր սուզանէն զանուռն անցելոցն մինչև յիշատակի
 նոցա անգամ չմնալ տեղի : Արկնի աստուատ և վասն
 զոՏիցն բան , յոր Տիմեւրով ժողովուրդեան զբովան-
 դակ յոյս իւրեանց գլխիւայր գահաւիժեցան ՚ի ծու-
 փրս մոլորութեանց , և եղին զողջանարատ պահս
 նոցուն բաւականս ՚ի փրկութի , թէ և զանցառուք մե-
 ծագունիցն լինէին պատուիրանացն այ : Անկ յան-

դիմանեալ զնս ւայ՝ յեսայեոյ գլ. 1. ասէ , Չգլուխս
 ասոց չերոց սպեաց անչն իճ . և այնքան դժուարատար
 բեռն վարկաւ իւր՝ մինչ չբաւեալ նց՝ ասաց , Ես ոչ
 ասնում յանչն : Իսկ ²⁰⁴ յաղագս շաբաթու՝ որ ասի օրէնս
 յաւիտենական և ընդհանուր տուեալ ոչ միայն ցեղի
 միոյ՝ այլ յարարչուէ՛ Քի ադամայ նախնւոյն մարդ-
 կութեանս , պիտին յատուկ առարկուէք : Եւ պա-
 տասխանի համընթացութիւն ականգութիւնն ցե-
 րայեցոց , թէ՛ պատուիրան շաբաթուց են կրկին ,
 մին՝ ԴԾԾ. յեղբայրաց , ելք , 20, 8. և միւսն՝ ԴԾԾ պակաս-
 ութեան , ելք 31, 31. Պատուիրան յիշատակաց կատա-
 րի ՚ի խոկալն մեր հաւատով զանձադործ արարչուէնս
 Քի . իսկ պահպանողականն կայանայ ՚ի ճիշդ շա-
 բաթումն յամ գործոց : Առաջին պատուիրանին
 և նախ քան զօրէնսն անգամ հրազանդեցին արքսթե-
 ենովք , նոյ , աբրահամ , իսահակ , և յակովբ . զո-
 րոց թէպէտ և բազումն ընթեռնուաք յաղագս ճա-
 նապարհորդութեանց , սակայն ոչ ուրեք գտանեմք
 խեցս կասելոյ ՚ի գնացից իւրեանց աղագաւ պահպա-
 նութեան շաբաթունս . ո՞ր յետ ելիցն իսրայելի յե-
 գիպտոսէ յոլովիցս տեսանեմք : Չի այնինչ ազատել
 նոցա յարկուէ եգիպտացոց և ցամաք ոտիւք անցին
 չէ ծովն կարմիր՝ պահեցին զայն առաջին օր շաբաթ-
 հանգստեան և երգեցին ւայ զերգս յաղթականս՝ ել
 անտուստ օրէն իսիստ շաբաթ ապահովութեանն : Չո-
 րոյն նախափորձ պատէ՛ հիպեալ ընթեռնուաք յա-
 նապատին ՚ի ժողովել մանանային . ելք , 35, 1. և
 զևտ . 23, 3. Յաս հայի և պատճառ պահպանութեան
 շաբաթուց յիդ օրինաց 5, 15, ք , վասն ազատութեան
 յեգիպտոսէ : Գարձեալ՝ դիդէրսս ՚ի դիւր ծնից
 ընդդէմ բռնաբարութեան տեսարցն , որ չտային երբէք
 հանգիստ աշխատանաց նց՝ ի նախակարգեալ գլլե-

խոցող : Եւ թէ պէտեւ օտարք ևս պարտաւորէին Տա-
 զանդիլ պատուիրանին՝ սակայն էր այն յաւէտ վասն
 անվորդով խաղաղունք ժողովրդեանն յայն օր : Դար-
 ձեալ զի ոչ եղաւ օրէնս ՚ի վր իմ ազգաց , յայտ է
 զի բազմիցս կոչի նշան մասնաւոր , կամ ուխտ ինչ ընդ
 իտրայէլ , ո՞նչ եւլք 31, 13, 16. նաև ազատութեանն
 յեգիպտոսէ յիշատակին չէր պարտ յարատեւ մնալ ,
 զի ՚ի վերդ իսկ ցուցաք զդադարիլ նոցա ՚ի դալ մե-
 ծագունին բարուէց : Եւ թէ պատուիրան անխախտ
 պահպանուէ շաբաթուց տուեալ լինէր ՚ի սկզբանն ,
 գերազանցէր արդեօք քան զիմ օրէնս . բայց արդ-
 զհակառակն տեսանեմք թլպատիլ⁸⁸⁵ մանկանց ՚ի շա-
 բաթու , և⁸⁸⁶ զոհեւ ՚ինմին ինչ հասարակ աւուրց , ան-
 դանօր ՚ի շէն հաստատուէ տաճարին : Նոքին իսկ
 ըաբունիք հրէից փոփոխուեալ դնեն զսոյն յուսու-
 ցաներն թէ՛ պարտ է գործել ՚ի շաբաթու հրամա-
 նաւ մարգարէի , զոր և հաւատարմացուցանեն օրի-
 նակաւ առմանն երիքովի ՚ի շաբաթու ինչ պատուի-
 րելոյն ետուայ . Եւ թէ բառնալոց՞ էին արդեօք
 խտրանք աւուրց ՚ի դալստեան Օծելոյն՝ ոմանք ՚ի նո-
 ցանէ քնջ ճշմարտացուցանեն ՚ի 66, 32. համարոյ
 անտի մարգարէութեանն եսայեայ . ուրանօր կա-
 նուխ գուշակութեամբ աւետարանի՝ Ախա աճարչ և
 շաբաթ ՚ի շաբաթէ երկրպագութեան քն ինչ իտրայէլի :

§ 11. Եւ ըլպատութեան մարտոյ .

Արդ ՚ի թլպատութիւնդ , որ թէ պէտեւ նախ քան
 զմովսէս տուաւ աբրահամու և սերնդոցն ՚ի , սակայն
 արի նաև ՚ի սկիզբն օրինացն մովսիսի : Զի ի գիրս
 Ժննդոց 17. այսպս խօսի իմ ընդ աբրահամու՝ Տաց
 չեզ և զաւանդէ բոմ զերէրս զայս , յորոմ բնալիս պանդխտու-
 թեամբ , զիմ երէկոր չանանացոց ՚ի Ժառանգութեան յաւեփէ-

նակէն . Բայց որոս պո-խոս է՞մ պակէրցես , ե պատէ՞ քո յէս րոյ յապիս Է-րբ-ոնց : Թ-լպատեացե՛ք յեր ամ արո- : Այլ ընդդէմ սորա մեք արդէն իսկ առարկեցաք զՏանդերձիլ նորոյ ուխտին հասարակելոյ ամ աղգաց . որով և զգագարիլ նշանիս տարբերուէ : Մանաւանդ զի սա՛ շոգրելոյ անսուտ մարգարէից տպաւորէր յինքեան ըդ-խորհուրդ մեծագունին յայտնուէց , որով և ²⁸⁷ զսրտին [Թլպատուէ , առ որ բոլորեալ բովանդակին պատուիրանք քնի : Պարտ էր նաև աւետեաց [Թլպատուէ երկրաւոր ժառանգուէց՝ փոխանորդիլ յաւիտենական և երկնաւոր շնորհաց . որ քնիւ միայն յայտնեալ ծանուցաւ : Աստուտ և լինելն աբրահամու ²⁸⁸ հայր աղ-գաց Բողճաց ո՛չ երբէք լցաւ , ե[թէ ո՛չ ՚ի ժամանակի անդ այնովի՛ յորում ո՛չ միայն ամփոփ իմն տոհմ , այլ աշինք զսղամբք և ժողովուրդք զժողովրդովք առաւելեալ ընդ տինզերս՝ աշակերտուք աւետարանին զարժանին յիշատակաց զՏաւատոյն աբրահամու ըզգերապանծ օրինակ յանձն առեալ կատարեցին : Ապա՛ չեն զարմանք խափանիլ ստուերաց հանդերձելոց ՚ի գալ կատարման ճշմարտութեանն : Եւ [թէ չէր բնաւ սեղմեալ ²⁸⁹ ողորմութեանն ւայ ՚ի նշան այս-միկ յայտ անտի է , զի ոչ միայն որ յառաջն աբրահամու նահապետք , այլ և ինքն աբրահամ չև ընկալեալ զ[Թլպատուութեանն՝ հաւճոյ եղև ւայ : Իսրայէլ զանց արար զնովիւմք չէ բովանդակ ²⁹⁰ միջոցս աստանգանաց իւրոց յանապատին արաբիոյ և ո՛չ յանդիմանեցաւ յԱստուծոյ վասն այնորիկ :

§ 12. Յի՛ եւ աշակերտք նի՛ չ՛բռնացուն յայսմ ,

Պարտին հրէայք նախ՝ գոհանալ զերախտեացն յնի և նուիրակաց նի , որ սղատեալ զնս ՚ի ծանրաբեռնութեանց անտի ծիսական արարողուէց՝ եհան

վերստին ՚ի շնորհս աւետարանական երանութեց
²⁹¹մե՛ծ ևս քան մովսիսին հրաշիւք: Երկրորդ՝ զի նա-
 խորդք հաւատոյս մերոյ ո՛չ հարկեցին ն՛ց գրել զսյ-
 սոսիկ յիւրեանց միայն երանուի՛, այլ զի ընկալեալ
 միայն զամենանբ և զին ամբժու՞ք զօրէնս քսի՛ թողու-
 ին յիրս թեթևս հետևիլ՝ ²⁹⁰որոց զիարդ և կամէին ե-
 ղանակի կենաց . միայն թէ՛ ²⁹³մի՛ զօտարս ՚ի նոսին ըս-
 տիպեսցեն , որոց ո՛չն ծանրացաւ երբէք օրէն ծխա-
 կան : Աստուտ արտափայլին չարիք՝ որոց չէ կեղ-
 ծեօք ստուերականին արհամարհեցին զլուսաւոր և
 զկենսամատոյց զաւետարան յնի : Դերևեալ աստա-
 նօր զխտրանսդ , զմի միայն առարկուս բնազանց ըս-
 քանչիւնաց փրկչին Քի , դառնամք ՚ի փաստս գիպա-
 ւորս նկուն զհրէայս հարկանելոյ :

§ 13. Վստեման անբարոյ օժեւոյն ,

Նոքա և մեք հաւասար ընդունիմք , թէ ՚ի մեջ
 բազմաց յայտնողաց իչի զառատաշնորհ բարիս ան-
 անտուտ ՚ի վերուստ՝ գալոց էր ոմն անբաւ առտու-
 լուք գերազանցեալ զամենեքումքք , որում անուն
 կարդան Մե՛տի , որ թէ և ձայն հոմ , սակայն ՚ի վե-
 րագոյն աստիճանի՝ ²⁹⁴սմին յաւէտ պատկանի : Ջսա
 մեք կանխաւ յառաջ եկեալ ասեմք . նոքա՛ սպասեն
 դեռ : Մնայ ուրեմն՝ վերջ տալ վիճիս յայնց գրոց ,
 որոց առ մեզ և առ նոսա նոյն է յարգ :

§ 14. Գալուստի նորա ցուցանի :

²⁹⁵Դանիէլ՝ որոյ գերազանց արդարութե Եզեկիէլ
 վկայէ՝ ո՛չ խաբիւր անձամբ ՚ի հրեշտակէն գաբրիելէ ,
 և ո՛չ խաբել զմեզ կամէր . որ բանիւ հրեշտակին ան-
 շուշտ աւանդեաց , գլ. 9. թէ յետ տուչուի հրամանի
 շինուի են մի ցգալուստ օժեւոյն անցցին ²⁹⁶ամք չ :

Այլ արդ ՚ի ժամանակէ անտի ցմեր դար բոլորին անդրքան 2000 ամ, և դեռևս ակնկալեալն ՚ի նոցանէ չի՛ք ուրեք. ո՛չ նաև յառաջ բերել կարեն զսք՝ ընդ որում համընթացի ժամանակին կատարած : Բայց այս՝ այնքան վայելչապատկան յարմարի ան մերոյ, մինչ զի և վարդապետն հրէից նէ եմի որ եկաց իբրև 500 ամօք յառաջքան զնա, յայտնագէտ վճուեաց թէ անմարթ է ՚ի Գանիէլէ ժամանակագրութեան վասն Օծելոյն՝ անսգանել անդր քան զանս 500 : Երկրորդ զկնի ժամանակագրութեանս սպասոյց՝ զոր ՚ի վեր անդր շոշափեցաք է բարձումն թագաւորութի տանէն Սելեկոսի և լիզոսի. յորոց վերջինդ բարձաւ առ կղէոպատրաւ ո՛չ բազմօք յառաջքան զԾնունդն քսի, և յայտնիլ յերկնից նորոյ արքայութեան ՚ի վերայ ամենայն ազանց : Երրորդ նշան ըստ նորին դանիէլի կանխասացութեան է հարթայատակ եղծումն քաղաքին երուսաղէմի, զոր և ²⁹⁷ յովսեպպոս յառաջ բերեալ ընծայէ իւրումն ժամանակի : Ապաքէն աստուատ յայտնի երևի, զի ժամանակն սահմանեալ վասն գալստեան մեսիային արդէն իսկ անցեալ է : Գարձեալ յեկեղ գլ մարգարէութեանն Անդեսայ միութարեւ կամ լով ան զգորսքս բէլ զազգապետ, և զյեսու յովսեղեկեանց զքահանայ մեծ վասն տաճարին զոր շինեցին նուաստափառութեանն քան զառաջնոյն խոստանայ նմին յաւէտ քան զառաջնոյն փառաց զմեծվայելչութի : Բայց այս՝ ո՛չ թէ ընդարձակութի շինուածոյն, ո՛չ եթէ պատուականութիւն թոցն կամ ճարտարութի արուեստին և վսեմութի զարդուցն՝ բարդատելով սողմունեան տաճարին, սպ երևի ՚ի սք գրոց, ՚ի յովսեպոսէ և ՚ի ռաբբեաց՝ որ ²⁹⁸ զերկուս երևելիս, ք ըզյանդ իմանուի զգալի լուսոյն ՚ի նշան անձային մեծու-

Թեան, և զճշմարտունիս պակաս դնեն ՚ի վերջնումն : Իսկ թէ զինորդ զանցանելին զառաջնովքն փառք վերջնոյն՝ ան ինքնին համառօտեաց յասելն , Անդ հասարակեցի զԽաղաղութիւն իճ , ք զչնորհ և զհաշտումն իւր մեծ և՛ ս ուխտիւք : Չայս և մարաքիա հաստատէ գլ , 3. յասելն . Ահաասել էս առաջէմ զհրէշտուի իճ , և փէսցէ զճանապարհս իճ առաջ՝ իճ , և յանէարծաթ էէէսցէ ՚ի առճար իւր ²⁹⁹ փրն զոր դոռնն ինորէք , և հրէշտուի ուխտի զոր դոռնն իւր ³⁰⁰ փրն : Մարաքիա եկաց յետ շինուե՛ր եկե տաճարին , ապա պարտէր Օծելոյն գալ մինչ շէն կայր տաճարն երկրորդ : Մորին աղազաւ եբրայեցիք ՚ի թիւ համարոյ տային զժամանակն ՚ի զօրաբարելէ ցվեսպեսիան . քզի առ հերովդեաւն մեծաւ ոչ ՚ի հիմանց վերականգնեացաւ տաճարն՝ այլ մնան աստ և մնան անդ նորոգեցաւ , մինչ ոչ գրեալ ինչնց զփոփոխմունսդ՝ տակաւին տաճար եկե վերականգնելն : Ընդ այն ժամանակս այնքան զօրացեալ էր առ եբրայեցիս ակնկալուի Օծելոյն՝ մինչ համարել բաղմաց ³⁰⁰ զհերովդէս մեսիայ . կիսոց՝ յուդայ զգալիկացին , և այլոց՝ զայլս որ առ կենարարին կեցին գալստեամբ :

§ 15 Թէ մեղք յառաղէաց զգալուսփնն .

Սարլի ՚ի նեղ անկեալ հրէից ՚ի բացայայտ հաւաստեաց աստի , և առ դերեւելոյ զնոցին հաստատուիս պատճառեն զմեղս իւրեանց պատճառ չգալստեան մեսիային ՚ի խոստացեալն ժամու : Թողլից զնախաձայն կուտակուիս անսուտ բանիցն մարգարէականաց , մինչ և կեղծեւն ՚ի նոցունց երազ չբերէ յինքեան համաձայնուի իմն առ հետող հանգամանացն . զինորդ ուրեմն հար յապաղել գալստեանն նր վն մեղաց ժողովորդեան : Նազի գուշակեալ իսկ է թէ՛ վն բղւմ և մեծամեծ չարեացն փոքու իմն յետ գալստեան Օծե-

լոյն կալոց էր պղծուի աւերածոյն ՚ի վր թատարին :
 Արկնի . զի մեծ պատճառ գալստեան նր էր ³⁰¹ սրբուի
 ապականութեան ժամանակին , ուղղութիւն վարուց
 և աւետարանումն թողութեան մեղաց : Գրի և ՚ի
 զաքար . գլ . 13 . ՚ի ժամանակին յայնմիկ բանիլ աղ-
 բեր ՚ի տան դաւթի և յամ հրէաստան ՚ի լուացումն
 մեղաց և անօրէնուէց : Աստուատ կոչենն . ք զՕծեալն
 𐤀𐤓𐤐 𐤔𐤀𐤁 Իշ Էօֆր , որ է՝ Հաղաբարբ : Ասան որոյ
 շամբուշէ պնդել թէ անագանեցան պատճառաւ
 ախտին՝ առոր գլխովին կարգեալն էր բժիշկ :

§ 16. Ներկայ Էացութեան Էրէից Կոմեմապեալ

Ընդ ուխտի օրինաց եւրեանց

Շատ է փորձոյս միայն պարտել զնոսա ՚ի հաւանու-
 թիւն կանխաւ արդեօք գալստեան Օծելոյն : Ան-
 զի ³⁰² ուխտեաց ան մովսիսի մշտնջենցուցանել զիսրա-
 յէլ ՚ի ժառանգութիւն երկրին աւետեաց՝ ցորչափ
 ժամանակս լը պատուիրանադրեալն նորա գնասցեն
 ուղղուէ : Իսկ թէ ³⁰³ մեղիցեն լը հակառակն ՚ի մեղս
 մեծամեծս և ՚ի չարիս անհարինս՝ սպառնացաւ ժա-
 ռանգատել զնս և անել ՚ի վր նոյնակշիւ պատու-
 հասս : Սակայն յաւել և զայս՝ զի եթէ չարաչար
 հարստահարութիւն վշտաց ապաշաւեալ դարձցին ՚ի
 հաղանդուի օրինաց իւրոց՝ գթայր ՚ի նս և գերե-
 դարձ լինէր նց ՚ի հեռաւոր ծագաց օց . զոր ոպ
 բազում ուրեք՝ նոյնպս և յ2 օրինաց՝ 30 . և նէեմի 1 .
 մարթիս տեսանել : Բայց արդ՝ անցին ասն առա-
 ւելքան հրէատասան դարք , յորմէ հետէ վտարան-
 գեցան նք ՚ի հայրենեաց իւրեանց , և կանումնան
 տակաւին առանց տաճարի . և եթէ ձեռն ևս արկին
 ժամանակ առ ժամանակ ՚ի փորձ ելանել շինութե
 նորուն՝ խափան գտան յամ ժամ : Զի և ³⁰⁴ ամմիանոս

